Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

39

ԳՅՈՒՏԵՐԻ ՅԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՑԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐ, ՀՐԱՀԱՆԳՆԵՐ ՅԵՎ ՊԱՐԶԱՐԱՆՈՒՄՆԵՐ)

ՀՐԱՏ. ՀԱՄԽ-ԻՆ ԿԻՑ ԳՅՈՒՏ. ԽՈՐՀՐԴԻ
ՅԵՐԵՎԱՆ—1935

ԳՅՈՒՏԵՐԻ
ՅԵՎ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐ, ՀՐԱՀԱՆԳՆԵՐ ՅԵՎ ԳԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ)

Հ II / 25033

ՀՐԱՏ. ՀԱՄԽ-ԻՆ ԿԻՑ ԳՅՈՒՏ. ԽՈՐՀՐԴԻ

ՅԵՐԵՎԱՆ 1985

ԳԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ—ՑԵՐԵՎԱՆ Ձեվ. և սրբ. Ա. Հախվերդյան

Գլավլիտ 180. պատվեր 320. տիրաժ 1500

ՀԱՄԿ(Բ)Կ. ԿԿ-Ի 1930 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի

ՎՈՐՈՇՈՒՄԸ

ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԳՅՈՒՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սոցիալիստական շինարարության և բանվոր դասակարգի ստեղծագործ նախաձեռնության վերելքի սահման չը ջանում բացառիկ նշանակություն է ստանում մասսայական գյուտարարությունը, որն արտադրության սոցիալիստական ռացիոնալացման գործում բանվորների անմիջական մասնակցության կարևորագույն ձևերից մեկն է հանդիսանում:

ԿԿ-ը նշում է, որ գյուտերի, կատարելագործումների, բանվորական առաջարկների ոգտագործումը ձեռնարկություններում և տնտեսական որգաններում միանգամայն անբավարար է կազմակերպված, ինչ որ արդյունք է դասակարգայնորեն—թշնամի տարրերի վնասարարությունից բղխող քաշքշուկի և սաբոտաժի, արդյունք է այն բանի, որ տնտեսական, պրոֆմիութենական և կուսակցական կազմակերպությունները միանգամայն անթույլատրելի դանդաղաշարժություն և լիակատար անպատասխանատվություն են ցուցաբերում այդ ասպարեզում, թերագնահատում են մասսայական գյուտարարության վողջ նշանակությունը նոր տեխնիկա ստեղծելու գործում, որը հնարավորություն է տալիս բարձրացնելու ԽՍՀՄ-ում աշխատանքի արտադրողականությունը կապիտալիզմի պայմաններում չտեսնված չափերով:

Մասսայական գյուտարարության զարգացումն ու ոգտագործումն առանձնապես սուր և համառ դիմադրության են հանդիպում վնասարար տարրերի կողմից

ձեռնարկություններում, խորհտնտեսություններում և գիտա-հետազոտական ինստիտուտներում:

Ցելնելով այն բանից, որ մասսայական գյուտարարության կազմակերպումն ու ոգտագործումը պետք է դառնան տնտեսական, պրոֆմիութենական, կոմյերիտական և կուսակցական կազմակերպությունների կարևորագույն գործը կկ վորոշում է.—

1. Տնտեսական ժողկոմատներին, տնտեսական միավորումներին և գործարանային վարչություններին՝ լիովին ապահովել բանվորական առաջարկների, կատարելագործումների և գյուտերի ժամանակին քննելու գործը, եքսպերտիզան, հաշվառումը և իրացումը, յուրաքանչյուր ձեռնարկության մեջ ստեղծելով անհրաժեշտ արտադրական բազա (եքսպերիմենտալ արհեստանոցներ, եքսպերիմենտալ բրիգադներ և այլն) և գիտա-հետազոտական ինստիտուտների ու ձեռնարկային լաբորատորիաների 1931 թ. աշխատանքի պլանում մրցունելով ամենից ավելի բարդ ու խոշոր առաջարկների և գյուտերի հետազոտական մշակումը, դնահատումն ու եքսպերտիզան:

Գյուտարարների և գյուտարարական որգանների ամբողջ աշխատանքը ձեռնարկություններում պետք է ներտորեն շաղկապել ռացիոնալացման և վերակառուցման ընդհանուր պլանների, ձեռնարկությունների մ.ինչև փորձի սոցիալիստական փոխանակման գործի լայն կազմակերպման աշխատանքի հետ:

2. Կուսակցական, արհեստակցական, կոմյերիտական և տնտեսական կազմակերպություններին՝ ձեռնարկությունների գյուտարարական որգանները ժամանակին կոմպլեկտավորելու անհրաժեշտ կադրերով գյուտարարներից, հարվածայիններից և հասարակական կյանքին մոտ մասնագետներից, ավարտելով կոմպլեկտավորումն վոչ ուշ, քան մ.ինչև 1931 թ. հունվար ամիսը:

Ուսանողների անընդհատ արտադրական պրակտիկայի ծրագրի մեջ մտցնել գյուտերի, կատարելագործումների և բանվորական առաջարկների տեխնիկական-տնտեսական մշակումը:

Տնտեսական որգաններին՝ ապահովել բանվոր գյուղատնտեսներին նրանց գյուղերի մշակման ժամանակ ու չրջանում գիտա-հետազոտական ինստիտուտներ ու լաբորատորիաներ ուղարկելու, ինչպես նաև ամենից ավելի աչքի ընկնող ուսանող գյուղատնտեսներին տեխնիկական ուսումնական հիմնարկներ ավարտելուց հետո գիտա-հետազոտական ինստիտուտներում աշխատելու համար առաջ քաշելու իրական հնարավորությունը:

3. ԺՏԳՄ-ին, բոլոր տնտեսական ժողկոմատներին և տնտեսական որգաններին՝ 1931 թվից սկսած կոնտրոլ թվերում և արդ-ֆինպլաններում նախատեսել հատուկ միջոցներ բանվորների և վարչա-տեխնիկական անձնակազմի առաջարկների, կատարելագործումների ու գյուտերի իրացման և պարգևատրման համար, կազմակերպելով առաջարկների իրացման ծախսերի և դրանց էֆեկտիվության հաչվառման գործը:

4. Հանձնարարել ԺՏԳՄ-ին, Հաղ. ՀԱՆ. ԺՈՂԿոմատին, ՀԱՄԿՄ-ին և Բանգյուղտեսչության ԺՈՂԿոմատին կազմակերպել բոլոր չոգտագործված գյուտերի, կատարելագործումների, բանվորական առաջարկների ստուգումն արդյունաբերության մեջ ու տրանսպորտում և ապահովել դրանց իրացումը կարճ ժամանակամիջոցում, մասսայական գյուտարարության հետագա աճումն ուղղելով դեպի ներքին ռեսուրսների ոգտագործումը, արտադրության նեղ տեղերի հաղթահարումը, իմպորտ սարքավորումների ու հումքի փոխարինումը խորհրդայինով և աշխատանքի կազմակերպման բարելավումն արտադրության մեջ:

5. Հավանություն տալ ՀԱՄԿՄ-ի վորոշմանը գյուղատնտեսների մասսայական կամավոր ընկերություն կազմակերպելու մասին, վորը նպատակ ունի կիրառել հասարակական ինքնագործունեության զարգացման մասսայական միջոցառումներ, աշխատանքի կոլեկտիվ մեթոդներ և հասարակական վերահսկողության մեթոդներ ամեն տեսակի կատարելագործումներին ու գյուտերին ընթացք տալու և իրացնելու գործում: Բանվոր գյու-

տարարների ընկերությունը պետք է աշխատի պրոֆ-միությունների անմիջական ղեկավարությամբ։

ԺՏԳՄ-ին, Հաղ. Ճան. Ժողկոմատին, բոլոր տնտեսական ժողկոմատներին և կազմակերպություններին՝ ակտիվ մասնակցություն ունենալ ընկերության աշխատանքին և ամենայն աջակցություն ցույց տալ նրան։

ՀԱՄ. ԼԿՑԵՄ ԿԿ-ին՝ ապահովել կոմյերիտմիության ակտիվ մասնակցությունը գյուտարարական գործերում բյուրոկրատիզմի և քաշքշուկի դեմ պայքարելու ասպարիզում, ինչպես նաև լայնորեն ներգրավել յերիտասարդությանը գյուտարարական բջիջների ու գյուտերի իրացման որգանների աշխատանքների մեջ։

6. Հանձնարարել ԽՍՀՄ Կենտգործկոմի Ֆրակցիային արագացնել գյուտարարության նոր որենքի հրապարակումը (վոչ ուշ, քան մինչև 1931 թ. Հունվարի 1-ը), վորն ապահովում է մասսայական գյուտարարության զարգացումն ու ոգտագործումը ԽՍՀՄ-ում։

Գյուտարարական որգանների աշխատանքն արդյունաբերության մեջ, տրանսպորտում և ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում կապակցելու և համակարգելու նպատակով, ԱՊԽ-ին կից կազմակերպել գյուտարարության կառավարական կոմիտե։

7. Համ. Ց(բ)Կ կուլտ-պրոպ բաժնին՝ ապահովել գյուտարարության հարցերի լիակատար լուսաբանումն ամբողջ մամուլում, ինչպես նաև համապատասխան գրականություն հրատարակելու գործը։

8. ԲԳՏ-ԿՀՎ, Արդ-ժողկոմատին՝ սիստեմատիկ հսկողություն և ստուգում սահմանել գյուտերի, կատարելագործումների և բանվորական առաջարկների վերաբերյալ կուսակցության և կառավարության ունեցած դիրեկտիվների կատարման նկատմամբ, գյուտարարության վերաբերյալ դիրեկտիվները չկատարելու դեպքերը դիտելով վորպես ոպորտունիզմի վատթարագույն տեսակ պրակտիկայում և հանցավորներին խիստ պատասխանատվության յենթարկելով, մինչև իսկ աշխատանքից հանելն ու դատի տալը։

(Հրապարակված է «Իզվեստիա»-յի 1930 թվի հոկտեմբերի 20-ի № 299-ում)։

ԳՅՈՒՂԵՐԻ ՅԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԺԻ ՄԵՋ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Տեխնիկայի տիրապետումը և նրա հետագա զարգացումը վերակառուցման շրջանում վճռական նշանակություն ունեն սոցիալիստական շինարարության հաջող ծավալման համար: Սոցիալիստական ինդուստրացումը բանվորական մասսաների տեխնիկական ստեղծագործության առաջ բաց է անում զարգացման մի այնպիսի լայն ասպարեզ, որը կապիտալիստական հասարակարգում միանգամայն անհնար է: Մասսայական գյուտարարությունը բանվորներին արտադրության սոցիալիստական ռացիոնալացման գործին անմիջորեն մասնակից դարձնելու և նոր տեխնիկան ԽՍՀՄ-ի ժողտնտեսության մեջ արմատացնելու կարևորագույն ձևերից մեկն է հանդիսանում:

Սակայն, բյուրոկրատական խեղաթյուրումների դանդաղաշարժության, քաշքշուկի և մի շարք դեպքերում, նույնիսկ մնասարարության հետևանքով գյուտարարական գործին և հատկապես բանվորական գյուտարարությանը մինչև այժմ միանգամայն անբավարար ուշադրություն է դարձվում:

Չնայած այն վիթխարի նշանակությանը, որը ունի մասսայական գյուտարարությունն ինդուստրացման տեմպերի համար մղվող պայքարում, գյուտերի ոգտագործման և տեխնիկական փորձի փոխանակության գործը խիստ անբավարար է կազմակերպված: Թույլ է գյուտարարության ոժանդակող մարմինների աշխատանքը: Բանվոր գյուտարարների ստեղծագործ նախաձեռնությունը բավականաչափ խրախուսանքի չի արժանանում:

Անհրաժեշտ է այս ուղղությամբ ամենակարճ ժամանակամիջոցում վճռական բեկում ստեղծել: Մասսայական գյուտարարության կազմակերպումն ու ոգտագործումը տնտեսական մարմինների, պրոֆմիությունների և այլ հասարակական կազմակերպությունների կարևորագույն գործը պետք է դարձնել:

Մինչև այժմ գործող պատենտային օրենսդրությունը, վորը գյուտարարին գյուտի նկատմամբ բացառիկ իրավունք վերապահելու միջոցով պաշտպանում ել նրա շահերը, այլևս չի համապատասխանում առաջավոր գյուտարարների՝ սոցիալիստական հասարակարգի դիտակից կառուցողների ձգտումներին:

Անհրաժեշտ է աշխատավոր գյուտարարների և սոցիալիստական պետության փոխ-հարաբերությունների այնպիսի ձևեր ստեղծել, վորոնք համապատասխանեն այն դեռին, վոր խաղում է բանվոր գյուտարարը, վորպես սոցիալիստական շինարարության անմիջական մասնակցող: Գյուտերը ժամանակին ու լիովին ոգտագործելու յերաշխիքների ապահովման հետ միասին, անհրաժեշտ է մասսայական գյուտարարության համար խրախուսական պայմաններ ստեղծել, ապահովելով աշխատավոր գյուտարարի պատշաճ (նորմալորված) վարձատրությունը, տալով նրան մի շարք արտոնություններ և առավելություններ (բնակարանային արտոնություն, ուսումնական հիմնարկներն առաջին հերթին ընդունվելու, գիտա-հետազոտական և փորձնական ձեռնարկություններում ու հիմնարկություններում առաջին հերթին գիտական աշխատողի պաշտոն ստանալու, լավագույն գյուտարարներին բացառապես գյուտարարական աշխատանքի համար ոգտագործելու, լրացուցիչ արձակուրդ, անհատական կենսաթոշակ ստանալու և այլ առավելություններ:

Ցելնելով վերոհիշյալից, ԽՍՀՄ կենտգործկոմն ու ժողկոմխորհը ՎՈՐՈՇՈՒՄ ԵՆ.—

1. Հաստատել գյուտերի ու տեխնիկական կատարելագործումների վերաբերյալ կանոնադրությունը և այն ուժի մեջ դնել հրապարակելուց մեկ ամիս հետո:

2. Առաջարկել Աշխատանքի և Պաշտպանության Խորհրդին մեկ ամսվա ընթացքում.—

ա) իրեն կից կազմակերպել գյուտարարության Կոմիտե և հաստատել նրա կանոնադրությունը.

բ) Վորոշում հրատարակել պատենտների գործերով վճարելիք տուրքերի չափի ու վճարման կարգի մասին (Կանոնադրության 67-րդ հոդվածը):

3. Այն գյուտարարները, որոնք նախկին որենքի հիման վրա իրենց գյուտերի համար պատենտ են ստացել, վայելում են նոր կանոնադրության մեջ նախատեսված բոլոր կամ մի քանի արտոնությունները, յեթե միայն նրանց գյուտերն արդեն կիրառվում են պետական որգանների կամ հանրայնացված սեկտորի վորևե կազմակերպության կողմից, ըստ վորում յուրաքանչյուր դեպքում այդ մասին պետք է վորոշում ընդունի ԱՊԽ-ին կից գյուտարարության Կոմիտեն կամ դաշնակից հանրապետությունների կառավարություններին կից կոմիտեները:

4. Այն հայտերի նկատմամբ, որոնք ներկայացվել են մինչև գյուտերի և կատարելագործումների վերաբերյալ Կանոնադրության գործադրումը և որոնց համար դեռևս պատենտներ չեն տրվել, կիրառվում է հետևյալ կարգը.—

ա) տուրքից ազատված հայտեր համարվում են հեղինակի վկայական ստանալու մասին հայտերը, յեթե միայն այն ներկայացնողները այս Կանոնադրությունը հրապարակելուց մեկ և կես ամսվա ընթացքում ցանկություն չեն հայտնի պատենտ ստանալու և չեն մուծի հայտերի համար սահմանված տուրքը.

բ) այն հայտերը, որոնց համար տուրք է վճարված, համարվում են պատենտ ստանալու վերաբերյալ հայտեր, յեթե միայն այն ներկայացնողներն այս Կանոնադրությունը հրապարակելուց մեկ և կես ամսվա ընթացքում. ցանկություն չեն հայտնի հեղինակի վկայական ստանալու մասին: Այդպիսի դիմում ներկայացնելու դեպքում, վճարած տուրքը վերադարձվում է:

Այն հայտերում, որոնք տրվում են այս Կանոնադրությունը հրապարակելուց հետո, բայց մինչև նրա գործադրության մեջ դնելը հայտ ներկայացնողին իրավունք է տրվում նշելու՝ թե արդյոք նա հեղինակի վկայական է ուզում ստանալ, թե պատենտ:

5. ԱՊԽ-ին կից գյուտարարության Կոմիտեն վորոշում է, թե մինչև գյուտերի և տեխնիկական կատարելագործումների վերաբերյալ Կանոնադրության գործադրության մեջ դնելը պատենտ ստացած գյուտարարնե-

ը վոր դեպքերում և ինչպիսի կարգով կարող են փոխարինել այն հեղինակի վկայականներով:

Կոմիտեն լուծում է նաև Կանոնադրության գործադրության մեջ դնելու հետ կապված այլ հարցերը:

6. Առաջարկել դաշնակից հանրապետությունների կենտգործկոմներին մեկ ամսվա ընթացքում քրեական որենսդրքերում սոցիալական պաշտպանության միջոցներ նախատեսել գյուտերի և տեխնիկական կատարելագործումների վերաբերյալ Կանոնադրության խախտումների դեմ: Ըստ վորում, հիմնվելով ԽՍՀՄ-ի և դաշնակից հանրապետությունների քրեական որենսդրության հիմնական սկզբունքների 3-րդ հոդվածի յերկրորդ մասի վրա (ԽՍՀՄ Որենքների ժողովածու, 1927 թ., № 12, հոդ. 122), դաշնակից հանրապետությունների կենտգործկոմներին առաջարկվում է նախատեսել.—

ա) ԽՍՀՄ-ի սահմաններում արված գյուտերի, ինչպես նաև պետության կողմից գործուղված խորհրդային քաղաքացիների միջոցով արտասահմանում արվող գյուտերի մասին առանց պատշաճ թույլտվության արտասահմանում հայտեր ներկայացնելու համար— հարկադիր աշխատանք մինչև մեկ տարի ժամանակով, կամ տուգանք մինչև 1000 ռ. գումարով:

բ) «ա» կետում մատնանշված գյուտերն առանց պատշաճ թույլտվության արտասահման ուղարկելու կամ հանձնելու համար— ազատազրկում մինչև տասը տարի ժամանակով՝ ամբողջ գույքի կամ նրա մեկ մասի բռնագրավմամբ:

Պետական պաշտպանությանը վերաբերող, ինչպես նաև գաղտնի համարված այլ կարգի գյուտերի ու կատարելագործումների մասին արտասահմանում հայտը տալը կամ այն հանձնելը դատական հետաքննման և յենթարկվում համաձայն պետական հանցագործությունների վերաբերյալ Կանոնադրության 6-րդ հոդվածի (ԽՍՀՄ Որենքների ժողովածու, 1927 թ., № 12, հոդ. 123):

7. Հանձնարարել ԽՍՀՄ ժողկոմխորհին և դաշնա-

կից հանրապետությունների ժողկոմխորհներին յերկու ամսվա ընթացքում ԽՍՀՄ-ի և դաշնակից հանրապետությունների որենսդրության մեջ մացնել գյուտերի ու կատարելագործումների վերաբերյալ կանոնադրությունից բղխող փոփոխությունները:

8. Հանձնարարել ԽՍՀՄ Բանդյուղտեսչության ժողկոմատին յերկու ամսվա ընթացքում կանոնադրություն հրատարակել ժողովրդական տնտեսության, սոցիալ-կուլտուրական շինարարության ու յերկրի պաշտպանության բոլոր բնագավառներին վերաբերող, բայց գյուտերի և կատարելագործումների վերաբերյալ կանոնադրությամբ չնախատեսված պիտանի առաջարկները հաշվառման յենթարկելու, ընտրելու և խրախուսելու կարգի մասին:

ԽՍՀՄ ԿԳԿ-ի նախագահ՝ Մ. ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀՄ ԺԿԽ-ի նախագահ՝ Վ. ՄՈԼՈՏՈՎ (ՍԿՐՅԱԲԻՆ)

ԽՍՀՄ ԿԳԿ-ի քարտուղար՝ Ա. ՋԵՆՈՒԿԻՁԵ

1931 թ. ապրիլի 9-ին.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԳՅՈՒՏԵՐԻ ՅԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՏՎԱԾ 1.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Այս կանոնադրությունը տարածվում է՝

ա) նոր գյուտերի.

բ) այլ տեխնիկական կատարելագործումների վրա:

2. Նոր գյուտի հեղինակը կարող է պահանջել, վորպեսզի՝

ա) կամ ճանաչվի իր հեղինակ լինելու հանգամանքը միայն.

բ) կամ տրվի նաև գյուտի բացառիկ իրավունքը:

Առաջին դեպքում գյուտի համար տրվում է հեղինակի վկայական, իսկ յերկրորդ դեպքում՝ պատենտ:

Հայտի մեջ պետք է մատնանշել՝ թե արդյոք գյուտարարը հեղինակի վկայական է ուզում ստանալ, թե՞ պատենտ:

3. Հեղինակի վկայականներ և պատենտներ տրվում են միայն այն նոր գյուտերի համար, վորոնք կարող են կատարվել արդյունաբերական միջոցով:

Հեղինակի վկայականներ և պատենտներ տրվում են բուժական, սննդի համար և քիմիական ճանապարհով ստացվող այլ նյութերի պատրաստման նոր յեղանակներ հայտնաբերելու համար, և վոչ նյութերի իրենց համար:

4. Գյուտերի համար հեղինակի վկայականներ տալու դեպքում կիրառվում են հետևյալ դրությունները.—

ա) գյուտը ԽՍՀՄ–ի սահմաններում ոգտագործելու իրավունքը պետության է վերապահվում.

բ) կոոպերացիան և հանրայնացված սեկտորի մյուս կազմակերպությունները պետական որդանների հետ համահավասար հիմունքներով կարող են ոգտագործել այն գյուտերը, որոնք իրենց գործունեությանն են վերաբերում.

գ) ինքը գյուտարարը (կամ նրա ժառանգը), եթե ունայնագործ կամ մասնավոր ձեռնարկատեր է, կարող է գյուտն ոգտագործել իր ձեռնարկության մեջ.

դ) այլ մասնավոր անձինք, ինչպես նաև կոոպերատիվ սիստեմի մեջ չմտնող կոոպերատիվներ, գյուտը կարող են ոգտագործել այն պետական ճյուղային որդանի թույլտվությամբ, որի տեսչությանն է վերաբերում տվյալ գյուտը, և այն պայմաններով, որ սահմանում է այդ նույն որդանը.

ե) եթե գյուտը պիտանի չե ճանաչված ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության համար, ապա գյուտարարն իրավունք ունի վարձատրություն ստանալու պետությունից կամ համապատասխան կազմակերպությունից.

զ) եթե ժողովրդական տնտեսության համար պիտանի չճանաչված գյուտը կիրառվում է որևե ձեռնարկության մեջ, ապա գյուտարարը կամ նրա ժառանգը իրավունք ունի վարձատրություն ստանալու նույն ձեռնարկությունից: Այս դեպքում վարձատրության չափը սահմանվում է փոխադարձ համաձայնությամբ, իսկ այդպիսին չկայանալու դեպքում՝ դատարանի միջոցով.

ը) աշխատավոր գյուտարարն իրավունք ունի ոգտվելու այն բոլոր արտոնություններից, որոնք նախատեսված են այս կանոնադրությամբ (Հոդ. Հոդ. 93—104):

5. Այն դեպքերում, երբ գյուտարարը գյուտի համար բացառիկ իրավունք (պատենտ) է ուզում ստանալ, կիրառվում են հետևյալ դրությունները.

ա) առանց պատենտատիրոջ համաձայնության ոչ ոք գյուտն ոգտագործելու իրավունք չունի: Ինքը պատենտատերը կարող է իր գյուտն իրագործել, պահպա-

նելով մասնավոր ձեռնարկատիրոջ գործունեության վերաբերյալ որենքները. իսկ ոտարերկրացիներ և ոտար յերկրյա իրավաբանական անձինք կարող են իրենց գյուտերն իրագործել, պահպանելով այն որենքները, վորոնք վերաբերում են ոտարերկրյա կապիտալի տնտեսական գործադրությունը ԽՍՀՄ–ի սահմաններում թույլատրելու կարգին.

բ) պատենտը տրվում է 15 տարով:

Ժամկետը պետք է հաշվել այն որվանից, յերբ պատենտ տալու մասին վերջնական վորոշում է ընդունված, բայց պատենտատիրոջ իրավունքները պաշտպանվում են այն որվանից, վորից հաշվվում է հայտի առաջնությունը. (հոդ. 43).

գ) պատենտատերը կարող է մի ուրիշի (վորն այս դեպքում կոչվում է լիցենզատեր) թույլատրել (լիցենզիա տալ) գյուտը լիովին կամ մասնակի կերպով ոգտագործելու համար.

դ) այն հիմնարկությունները, ձեռնարկություններն ու այն անձինք, վորոնք գյուտարարից անկախ և մինչև հայտ ներկայացնելը տվյալ գյուտը գործադրել են ԽՍՀՄ–ի սահմաններում կամ անհրաժեշտ պատրաստություններ են տեսել դրա համար, պահպանում են գյուտի հետագա ոգտագործման իրավունքը (նախաոգտագործման իրավունքը)..

ե) պատենտատերը պատենտ ստանալու որվանից յերեք տարվա ընթացքում պարտավոր է անձամբ կամ լիցենզատիրոջ միջոցով արդյունաբերական մասշտաբով իրագործել իր գյուտը ԽՍՀՄ–ի սահմաններում: Եթե գյուտի առարկան արտասահմանից է բերվում պատրաստի վիճակում, կամ մաս–մաս՝ ԽՍՀՄ սահմաններում հավաքելու համար, ապա այդպիսին գյուտի իրագործում չի համարվում: Եթե գյուտը մատնանշված ժամկետում չի իրագործվում, ապա ԱՊԽ–ին կից գյուտարարության կոմիտեն չահագրգռված որգանի, կազմակերպության կամ անձի դիմումի համաձայն, գյուտի իրագործման հարկադիր լիցենզիա յե տալիս և վորոշում է պատենտատիրոջը տրվելիք վարձատրության չափը.

զ) յեթե գյուտը պետության համար եական նշանակություն ունի, բայց պատենտատիրոջ հետ համաձայնություն չի կայանում, ապա ԱՊԽ–ին կից գյուտարարության Կոմիտեն իրավունք ունի շահագրգռված պետական որգանի ոգտին պարտադիր կերպով պատենտ ուտարելու կամ լիցենզիա տալու (գյուտի ոգտագործումը թույլատրելու) վերաբերյալ վորոշում ընդունել։ Նման դեպքերում պատենտատիրոջը տրվելիք վարձատրության չափը վորոշում է գյուտարարության կոմիտեն.

ը) գյուտերի պատենտների համար տուրք է գանձվում այս Կանոնադրության 67–րդ հոդվածում նախատեսված չափով.

թ) պատենտ ստացած գյուտարարը չի վայելում այն արտոնությունները, վորոնք այս Կանոնադրությամբ վերապահված են հեղինակի վկայական ստացող գյուտարարներին.

ժ) պատենտ ունեցող գյուտարարը կարող է մինչև պատենտի ժամկետը լրանալը փոխարինել այն հեղինակի վկայականով։ Այդպիսի փոխարինման պայմանները ու կարգը սահմանում է ԱՊԽ–ին կից գյուտարարության Կոմիտեն.

ի) մի գյուտերի համար հեղինակի վկայական, իսկ մի այլ գյուտերի համար պատենտ ունեցող գյուտարարը կարող է ոգտվել այն արտոնություններից, վորոնք տրվում են հեղինակի վկայականով, յեթե միայն նա կհրաժարվի պետության ոգտին պատենտներից կամ կփոխարինի հեղինակի վկայականներով։

6. Պատենտ չի տրվում, այլ տրվում է հեղինակի վկայական՝

ա) յեթե գյուտն արված է այն աշխատանքի կապակցությամբ, վոր կատարել է գյուտարարը գիտական–հետազոտական ինստիտուտներում, կոնստրուկտորական բյուրոներում, փորձնական ցեխերում, լաբորատորիաներում և հանրայնացված սեկտորի նման այլ որգաններում, վորոնք հետաքննում, մշակում և փորձարկում են գյուտեր.

բ) յեթե գյուտն արված է պետական որգանի կամ

հանրայնացված սեկտորի կազմակերպության հատուկ առաջադրանքով.

գ) յեթե գյուտարարն իր գյուտը մշակելու համար նյութական աջակցություն է ստացել պետությունից կամ հանրայնացված սեկտորի կազմակերպությունից:

7. Հեղինակի վկայական կամ պատենտ ստանալու իրավունքն ինչպես նաև արդեն ստացված վկայականներն ու պատենտները փոխանցվում են ժառանգաբար:

Պատենտ ստանալու իրավունքը և արդեն իսկ ստացված պատենտը գյուտարարը կամ նրա ժառանգը կարող են զիջել ում վոր կամենան: Հետագայում դրանք կարող են մեկից մյուսին անցնել ինչպես պայմանագրով, այնպես էլ ժառանգաբար:

Հեղինակի վկայականում կամ պատենտում անպայման պետք է նշել գյուտարարի անունը, թեկուզ և այդպիսիք գյուտարարին իրեն տրվելիս չլինեն:

Ծանոթություն.— Պատենտն ուրիշին հանձնելու կամ լիցենզիա տալու վերաբերյալ (հոդ. 5, կետ «գ») պայմանագրերը պետք է տոմարագրել ԱՊԽ-ին կից գյուտարարության կոմիտեի նորության բյուրոյում, այլապես դրանք որինական չեն համարվի:

8. Գյուտարարի կողմից մասնավոր անձի հետ ապագա գյուտի իրավունքն նրան վաճառելու մասին կնքած պայմանագիրն որինական չի համարվում:

9. Յեթե մեկը հայտի մեջ դիտավորյալ սխալ կհիշատակի գյուտարարի անունը, ապա նա քրեական պատասխանատվության կենթարկվի:

Յեթե մեկը անիրավացի կերպով կոգտագործի այն գյուտը, վորի իրագործման իրավունքը պետությանն է պատկանում, ապա նա նույնպես քրեական պատասխանատվության կենթարկվի:

Յեթե մեկը կխախտի պատենտատիրոջ բացառիկ իրավունքը, ապա նա պարտավոր է հատուցել նրան պատճառած վնասները:

10. Այն անձինք, վորոնք պետական որգանին կամ հանրայնացված սեկտորի կազմակերպությանը կառաջարկեն այնպիսի տեխնիկական կատարելագործում-

ներ, վորոնք նոր դյուտեր չեն, ապա այդ առաջարկներն ընդունելու դեպքում, կպարդևատրվեն ըստ դրույքների հատուկ աղյուսակի (հոդ. 90)։ Նրանք վայելում են նաև 105-րդ հոդվածում նշված արտոնությունները։

Առաջարկված և ընդունված տեխնիկական կատարելագործումների համար առաջարկողները կարող են համապատասխան վկայականներ ստանալ։ Վկայականները տալիս են այն որդաններն ու կազմակերպությունները, վորոնք ոգտագործում են տվյալ առաջարկները։

11. Ռուսերկրացիները ԽՍՀՄ քաղաքացիների հետ համահավասար հիմունքներով վայելում են բոլոր այն իրավունքները, վորոնք բղխում են այս Կանոնադրությունից։

ԱՊԽ-ին կից դյուտարարության Կոմիտեն Արտգործժողկոմատի համաձայնությամբ կարող է հատուկ սահմանափակումներ վորոշել այն պետությունների քաղաքացիների և իրավաբանական անձանց նկատմամբ, վորոնք փոխադարձության իրավունք չեն վերապահում ԽՍՀՄ քաղաքացիներին և իրավաբանական անձանց։

12. Այս կանոնադրության կիրառման կարգի վերաբերյալ հրահանգներ հրատարակում է ԱՊԽ-ին կից դյուտարարության Կոմիտեն։

ՀԱՏՎԱԾ 2

ԴՅՈՒՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՐԳԱՆՆԵՐ

Ա 25033

13. Դյուտարարությանն ոժանդակելու, դյուտարարության որդաններին ընդհանուր ղեկավարություն ցույց տալու և նրանց գործունեության վրա հսկողություն սահմանելու համար ԱՊԽ-ին կից կազմակերպվում է դյուտարարության Կոմիտե։

Կոմիտեին կից կազմվում են— ա) նորության բյուրո, վորը վորոշում է դյուտերի նորությունը և տալիս է հեղինակի վկայականներ ու պատենտներ, բ) բողոքներ քննող խորհուրդ, վորը քննում է նորության բյուրոյի վորոշումների դեմ տրված բողոքները։

320—2

Գյուտարարության Կոմիտեի կանոնադրությունը հաստատում է ԱՊԽ-ը։

Գյուտարարության կոմիտեներ կարող են կազմվել նաև դաշնակից հանրապետությունների ժողկոմխորհներին կից տնտեսական խորհուրդներին (խորհրդակցություններին) կից՝ այդ հանրապետությունների որենադրության կարգով և ԱՊԽ-ին կից գյուտարարության կոմիտեի կանոնադրության հիման վրա։

14. Գյուտարարությանն ոժանդակելու և գյուտերի ու տեխնիկական կատարելագործումների արագ ու հիշտ ոգտագործումը կազմակերպելու համար ԽՍՀՄ-ի և դաշնակից հանրապետությունների ժողկոմատներին, ճյուղային միավորումներին ու վարչություններին, կոոպերատիվ կենտրոններին, 500 հոգուց ավելի աշխատող ունեցող արտադրական և տրանսպորտի առանձին ձեռնարկություններին (նույն թվում նաև խորհտնտեսություններին և մեքենատրակտորային կայաններին), խոշոր շինարարություններին և, անհրաժեշտության դեպքում, նաև այլ ձեռնարկություններին ու կազմակերպություններին կից կազմվում են գյուտարարության որգաններ։

Այդ որգանների տիպական կանոնադրությունները մշակում են ՀԱՄԿԽ-ի համաձայնությամբ համապատասխան ժողկոմատներն ու կոոպերատիվ կենտրոնները և հաստատում ԱՊԽ-ին կից գյուտարարության Կոմիտեն, իսկ դաշնակից հանրապետությունների վոչ միացյալ ժողկոմատների դեմ՝ հանրապետությունների որենադրությամբ սահմանված կարգով։

15. Ճյուղային միավորումներին և վարչություններին, ինչպես նաև կոոպերատիվ կենտրոններին կից գյուտարարության որգանները (գյուտարարության ճյուղային որգաններ) կատարում են հետևյալ աշխատանքը.—

ա) ընտրում են ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության համար պիտանի գյուտեր.

բ) մշակում և փորձարկում են պիտանի գյուտեր և ոժանդակում են դրանց կենսագործմանը.

գ) տվյալ ճյուղի ձեռնարկությունների միջև գյու-

տերի և տեխնիկական կատարելագործումների փոխանակություն են կազմակերպում.

դ) կազմակերպում են նոր գյուտերի ու տեխնիկական կատարելագործումների հետազոտման աշխատանքը, շաղկապելով այն տվյալ ճյուղի ռացիոնալացման և վերակառուցման ընդհանուր պլանների հետ։

ե) ոտարյերկրյա տեխնիկայի նվաճումները ժողովրդական տնտեսության տվյալ ճյուղում ոգտագործելու նպատակով ուսումնասիրում են արտասահմանյան պատենտային և ընդհանրապես տեխնիկական գրականությունը.

զ) աջակցություն են ցույց տալիս ռիցանի գյուտերի և տեխնիկական կատարելագործումների հեղինակներին.

ը) ղեկավարում է գյուտարարության ստորաբաժանմարմինների աշխատանքը։

16. Առանձին ձեռնարկություններին կից գյուտարարության որդանները կատարում են հետևյալ աշխատանքը —

ա) գյուտերի ու կատարելագործումների տեխնիկական մշակման գործում աջակցում են տվյալ ձեռնարկության աշխատողներին, ինչպես նաև այն անձանց, որոնք տվյալ ձեռնարկության գործունեության վերաբերյալ առաջարկներ են ներկայացնում, ոգնում են ձևակերպելու հեղինակի վկայական և որենքով նախատեսված արտոնություններ ստանալու համար տրվող հայտերը. գյուտարարի խնդրանքով այդ մարմինները պարտավոր են իրենց վրա վերցնել գյուտարարի իրավունքների ձևակերպման, անգամ նրա անվամբ հեղինակի վկայական ստանալու ամբողջ հոգսը.

բ) ձեռնարկության մեջ գյուտարարության զարգացմանը նպաստող միջոցներ են ձեռք առնում. մասնավորապես մշակում են գյուտարարներին տրվելիք առաջադրությունները, շաղկապելով այն տվյալ ձեռնարկության ռացիոնալացման և վերակառուցման պլանների հետ, ոժանդակություն են ցույց տալիս գյուտարարական կոլեկտիվներին և այլն.

գ) միջոցներ են ձեռք առնում ժամանակին ու լրիվ ոգտագործելու յուրաքանչյուր պիտանի գյուտն ու տեխնիկական կատարելագործումը.

դ) փորձի փոխանակման նպատակով գյուտարարության վերաբաս որգանին հայտնում են տվյալ ձեռնարկության մեջ ոգտագործված գյուտերի ու կատարելագործումների մասին:

17. Գյուտերն ու կատարելագործումները գիտական-տեխնիկական մշակման յենթարկելու և փորձարկելու, ինչպես նաև պլանաչափ ձևով նոր գյուտեր ու կատարելագործումներ վորոնելու նպատակով կազմակերպվում են գործարանային լաբորատորիաներ, փորձնական գործարաններ և ցեխեր, կոնստրուկտորական բյուրոներ և այլն. միաժամանակ ամեն կերպ պետք է ոգտագործվեն գիտական-հետազոտական ինստիտուտները:

18. Գերատեսչական, ճյուղային և գործարանային գյուտարարության որգանները միացվում են ռացիոնալացման որգաններին: Միացման ձևերը սահմանում է ԽՍՀՄ Բանվորական-գյուղատեսչության ժողկոմատը:

19. Գերատեսչական, ճյուղային և գործարանային գյուտարարության որգանները պետք է կոմպլեկտավորել անհրաժեշտ կադրերով. գյուտարարներից հարվածայիններից և հասարակական կյանքին մոտ մասնագետներից:

ՀԱՏՎԱԾ 3.

ՊԻՏԱՆԻ ԳՅՈՒՏԵՐԻ ՅԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

20. ԱՊԽ-ին կից գյուտարարության կոմիտեյի նորության բյուրոյին ներկայացված գյուտերից ԽՍՀՄ ժողտնտեսության համար պիտանի գյուտեր ընտրելու գործը դրվում է գյուտարարության ճյուղային որգանների վրա (հոդ. 15): Այդ որգանները, նորության բյուրոյից ստանալով հայտի մեկ որինակն անհրաժեշտ հա-

վելվածներով, մեկ ամսվա ընթացքում գյուտի ոգտակարության մասին վորոշում են հանում:

Նորության բյուրոն, եքսպերտիզայի յենթարկելով գյուտերն, պարտավոր է դրանց ոգտակարությունը գնահատող որգանների ուշադրությունը հրավիրել այն գյուտերի վրա, վորոնք բյուրոյի կարծիքով կարող են կոչոր նշանակություն ունենալ ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության համար:

Ծանոթություն.— Այն դեպքերում, յերբ տվյալ գյուտը շոշափում է զանազան ճյուղերի շահերը, ինչպես նաև այն դեպքերում, յերբ տվյալ ճյուղում կան մի քանի միավորումներ, գյուտերի ոգտակարությունը գնահատելու պարտականություն կրող որգանների ճիշտ ցուցակը և այդ գնահատումն կատարելու ու գյուտերի ոգտակարության պլանը կազմելու կարգը սահմանվում են ԱՊԽ-ին կից գյուտարարության կոմիտեի հրահանգով:

Այն գերատեսչություններում, վորտեղ աննպատակահարմար կհամարվի գյուտարարության ճյուղային որգաններ կազմակերպելը նրանց փոխարինում են համապատասխան ժողկոմատներին կից գյուտարարության որգանները:

21. Գյուտերի ոգտակարության վերոհիշյալ սահմանումը վերջնական է այն դեպքում, յերբ գյուտն արդեն փորձարկված է կամ փորձարկման կարիք չունի. մնացած բոլոր դեպքերում այդ սահմանումը նախնական է համարվում:

Հիմնվելով գյուտի ոգտակարությունը նախապես ընդունելու վրա, գյուտարարության ճյուղային որգանը, առանց սպասելու նրա նոր լինելու հանդամանքը պարզվելուն, անմիջապես ձեռնարկում է գյուտի անհրաժեշտ մշակման ու փորձարկման աշխատանքին: Իսկ գյուտի ոգտակարության վերջնական գնահատումը կատարվում է փորձարկման արդյունքները պարզվելուց հետո միայն:

22. Ճյուղային որգանը գյուտի մշակման, փորձարկման և մոդելի կամ փորձնական որինակի պատ-

բաստման գործը կազմակերպում և փորձնական գործարաններում կամ ցեխերում, կամ էլ ձեռնարկություններից մեկն ու մեկում և այլն: Հարկ լեղած դեպքում բարդ և խոշոր գյուտերի մշակումն ու փորձարկումը հանձնարարվում է գիտա-հետազոտական ինստիտուտներին և մտցվում նրանց աշխատանքի պլանի մեջ:

Եթե գյուտն արդեն փորձարկված է ձեռնարկության կամ այլ շահագրգռված որպանի կողմից, ապա գյուտարարության ճյուղային որգանը պարզում է ըստացված արդյունքները և վորոշում, թե անհրաժեշտ է արդյոք լրացուցիչ փորձարկումն ու մշակումը, թե վոչ:

23. Գյուտարարն իրավունք ունի ներկա լինել իր գյուտի ոգտակարության հարցը քննելու ժամանակ (թե նախնական և թե վերջնական քննություններին): Եթե նա ապրում է նույն վայրում, վորտեղ քննվում է նրա գյուտի ոգտակարության հարցը, ապա նրան վաղորոք տեղեկացնում են հարցի քննության որվա մասին: Եթե գյուտարարի ներկայությունը անհրաժեշտ է, ապա նրան պետք է կանչել անկախ այն բանից, թե վորտեղ է նա ապրում, մատնանշելով նրա ներկայության անհրաժեշտությունը. այս դեպքում վճարվում են նրա ներկայանալու հետ կապված ծախսերը:

Գյուտի ոգտակարության հարցի քննությանը մասնակցելու իրավունք ունեն համապատասխան պրոֆիլենական կազմակերպությունների և գյուտարարների միաձորումների ներկայացուցիչները:

24. Գյուտարարը հրավիրվում է մասնակցելու գյուտի մշակման ու փորձարկման աշխատանքին:

Գյուտարարին հրավիրելու կարգն ու ժամանակը սահմանում է այն որգանը, վորը կատարում է մշակումն ու փորձարկումը:

Վարձու աշխատանք կատարող գյուտարարը գյուտի մշակմանն ու փորձարկմանը մասնակցելու ամբողջ ժամանակամիջոցում պահպանում է իր վարած պաշտոնը:

Ըստ վորում, եթե մշակումն ու փորձարկումը կա-

տարվում է այն նույն ձեռնարկության կամ հիմնարկության մեջ, որտեղ գյուտարարը վարձու աշխատանք է կատարում, ապա նա չարունակում է ձեռնարկությունից աշխատավարձ ստանալ իր միջին վաստակի չափով։ Իսկ յեթե մշակումն ու փորձարկումը կատարվում է այլ ձեռնարկության, հիմնարկության մեջ, ինչպես նաև այն դեպքերում, յերբ գյուտարարը վարձու աշխատանք չի կատարում, ապա գյուտի մշակմանն ու փորձարկմանը մասնակցելու ժամանակամիջոցի համար նա վարձատրություն ստանում է այն որդանից, որը կազմակերպել է մշակումն ու փորձարկումը։ Այս դեպքերում վարձատրության չափը սահմանվում է ԱՊԽ-ին կից գյուտարարության կոմիտեյի հրահանգով, ըստ որում վարձու աշխատանք կատարող անձանց վարձատրությունը նրանց միջին վաստակից ավելի պակաս լինել չի կարող։

25. Ճյուղային որդանը գյուտի ոգտակարության վերաբերյալ իր պատճառաբանված որոշումը (թե նախնական և թե վերջնական) հաղորդում է հայտ ներկայացնողին։

Յեթե առաջարկը պիտանի չի ճանաչված այն նկատառումով, որ ներկայացնողից անկախ՝ այդպիսին արդեն կիրառվում է տվյալ ճյուղում, ապա ճյուղային որդանը որոշման մեկ պատճենն ուղարկում է նաև նորության Բյուրոյին։

26. Գյուտի ոգտակարության վերաբերյալ ճյուղային որդանի ընդունած որոշումը 3 ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել համապատասխան ժողկոմատին կից գյուտարարության որդանին։ Գյուտարարների կազմակերպությունները կարող են բողոքարկել նաև նշված ժամկետից հետո։

Այն դեպքերում, յերբ գյուտարարության ճյուղային որդան գոյություն չունի (20-րդ հոդվածի ծանոթությունը), կենտրոնական գերատեսչական մարմնի որոշումը կարող է բողոքարկվել տվյալ ժողովրդական կոմիսարիատի կոլեգիային։

27. Գյուտը վերջնականապես պիտանի ճանաչվելուց հետո համապատասխան տնտեսական որդանը կազմում է

գյուտի ոգտագործման պլանը և անհրաժեշտ ծախսերի հաշվարկն ու իրագործում է պլանը:

Խոշոր նշանակություն ունեցող գյուտերի (բացի պաղտնի գյուտերից) ոգտագործման պլան կազմելու աշխատանքին անպայման պետք է մասնակից դարձնել գյուտարարին իրեն:

Ցուրաքանչյուր պիտանի գյուտ պետք է կիրառվի տվյալ ճյուղի բոլոր այն ձեռնարկություններում, որտեղ նա կարող է ոգուտ տալ:

Գյուտի իրագործման վերահսկողությունը դրվում է գյուտարարության ճյուղային որդանի վրա:

28. Ճյուղային մինիստրման կամ վարչության ղեկավարը և գյուտարարության գերատեսչական որդանն անհրաժեշտության դեպքում պարտավոր են ժամանակին միջոցներ ձեռք առնել, որպեսզի այլ ճյուղերի և այլ գերատեսչությունների ձեռնարկությունների արտադրական-ֆինանսական պլանների մեջ մտցվեն այն բոլոր աշխատանքները, որոնցից և կախված գյուտի կատարումը:

29. Եթե գյուտն արվում է ձեռնարկության մեջ կամ տրեստում, կամ էլ առաջարկվում է ձեռնարկությանը կամ տրեստին և կարող է նրանց մոտ կիրառվելու ոգուտ տալ, ապա ձեռնարկությունը կամ տրեստը պետք է փորձարկեն և ոգտագործեն այդ գյուտը, առանց սպասելու ճյուղային որդանի գնահատմանը, բայց տեղեկացնելով նրան այդ մասին:

30. Եթե պիտանի չե ճանաչվում այն գյուտը որի համար պատենտ ստանալու դիմում է ներկայացված, ճյուղային որդանը պարտավոր է գյուտարարի կամ նրա իրավահաջորդի հետ բանակցություններ վարել գյուտի իրավունքը գիջելու մասին: Սակայն մինչև պատենտ տալը չի կարելի գյուտի իրավունքն գիջելու առթիվ կատարելագործման համար տրվող պրեմիայից ավելի վարձատրել (հոդ. 90):

Այն դեպքերում, երբ պատենտ ստանալու նպատակով ներկայացված գյուտի ոգտակարությունը վերջնականապես գնահատելու համար փորձարկում է անհրաժեշտ, ինչպես նաև այն դեպքում, երբ գյուտի մշակ-

ման անհրաժեշտություն է զգացվում,— փորձարկումն ու մշակումը կատարվում են այն ժամանակ միայն, երբ գյուտի իրավունքը զիջելու վերաբերյալ գյուտարարի հետ համաձայնություն է կայացել:

Եթե գյուտը նախնական գնահատության կարող է նյութական նշանակություն ունենալ պետության համար, բայց այն ներկայացնողի հետ համաձայնություն չի կայացել, ապա գյուտի մշակումն ու փորձարկումը թույլատրվում է ԱՊԽ-ին կից գյուտարարության Կոմիտեի վորոշմամբ:

Այն դեպքերում, երբ գյուտը պետության համար նյութական նշանակություն ունի, բայց գյուտարարի կամ նրա իրավահավասարազորի հետ իրավունքներ զիջելու վերաբերյալ համաձայնություն չի կայացել, ապա ճյուղային որգանը գյուտարարության գերատեսչական որգանի միջոցով հարց է հարուցում ԱՊԽ-ին կից գյուտարարության Կոմիտեի առաջ պատենտի պարտադիր ստացման կամ պարտադիր լիցենզիա տալու մասին (5-րդ հոդված, «գ» կետ):

31. *Այն դեպքերում, երբ առաջարկներ են լինում այնպիսի տեխնիկական կատարելագործումների մասին, վորոնք նոր գյուտեր չեն, ձեռնարկություններին կամ տրեստներին կից գյուտարարության որգաններն ընդունում են այդ առաջարկները թե տվյալ ձեռնարկության կամ տրեստի աշխատողներից և թե կողմնակի անձերից (վերջիններից այն դեպքում միայն, երբ առաջարկը տվյալ ձեռնարկության կամ տրեստի աշխատանքին է վերաբերվում): Այդ որգանները վճռում են տվյալ ձեռնարկության կամ տրեստի աշխատանքին վերաբերող բոլոր առաջարկների ոգտակարության հարցը և միջոցներ են ձեռք առնում պիտանի առաջարկները կենսագործելու համար:*

32. *Ձեռնարկություններին և տրեստներին կից գյուտարարության որգանները պարտավոր են գյուտարարության ճյուղային որգաններին իրազեկ դարձնել այն բոլոր նշանակալից կատարելագործումների մասին, վորոնք ընդունված են ձեռնարկության մեջ կամ տրեստում ոգտագործելու համար:*

Այս առաջարկությունների նկատմամբ համապատասխանորեն կիրառվում են 23, 25, 26, 27 և 28-րդ հոդվածները, իսկ լրացուցիչ փորձարկման և մշակման անհրաժեշտության կարիք լինելու դեպքում՝ նաև 21, 22 և 24-րդ հոդվածները:

Եթե առաջարկությունը ներկայացված է անմիջորեն ճյուղային որգանին ապա վերջինը նայած առաջարկի նշանակությանը, կամ հանձնում է այն համապատասխան ձեռնարկությանը կամ տրեստին, կամ էլ ինքնուրույն կերպով վորոշում է նրա ոգտակարությունը, անհրաժեշտության դեպքում կազմակերպում է փորձարկում ու մշակում և միջոցներ ձեռք առնում կենսագործելու նույն կարգով, ինչ վոր սահմանված է գյուտերի համար:

33. Պիտանի գյուտերի ու կատարելագործումների ընտրություն կատարելիս հատկապես առանձնացվում են այն գյուտերն ու կատարելագործումները, վորոնք խոշոր նշանակություն ունեն ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության համար:

34. Ճյուղային միավորման (վարչության) ղեկավարը խոշոր նշանակություն ունեցող յուրաքանչյուր գյուտի համար նշանակում է առանձին աշխատող, վորը պատասխանատու է գյուտի կենսագործման համար, հայտնելով այդ մասին ԱՊԽ-ին կից գյուտարարության կոմիտեին ու գյուտարարության գերատեսչական կենտրոնական որգանին:

35. Եթե ժողովրդական տնտեսության համար պիտանի ճանաչված գյուտը պիտանի ճանաչվելու որվանից կես տարվա ընթացքում չի կիրառվում, ապա գյուտարարության ճյուղային որգանը հայտնում է այդ մասին ԱՊԽ-ին կից գյուտարարության կոմիտեին և գյուտարարության գերատեսչական կենտրոնական որգանին: Ըստ վորում, պետք է մատնանշել, թե ինչո՞ւ գյուտը չի կիրառվում:

Եթե խոշոր նշանակություն ունեցող գյուտը կամ կատարելագործումը կես տարվա ընթացքում չի կիրառվում, ապա նույն ձևով պետք է հայտնել նաև ԽՍՀՄ բանգյուղտնտեսության ժողկոմատին:

Մանրություն.— Այն դեպքերում, երբ գյուտի ոգտակարության նախնական գնահատում և կատարվում (հոդ. 21) կիսամյա ժամկետը պետք է հաշվել նախնական վորոշում ընդունելու որվանից:

36. Տվյալ ճյուղում, տրեստում և առանձին ձեռնարկության մեջ գյուտի ու կատարելագործման արագ, լրիվ և ճիշտ ոգտագործման պատասխանատվությունը դրվում է միավորման (վարչության), տրեստի և ձեռնարկության ղեկավարի վրա:

37. Գյուտարարության ոժանդակելու, գյուտն ու կատարելագործումը մշակելու և փորձարկելու և նրանց հեղինակներին պարգևատրելու ծախսերը ծածկվում են հատուկ ֆոնդերի հաշվին:

Այդ ֆոնդերի կազմելու ու ծախսելու կարգը վորոշվում է հատուկ որենքով:

Գյուտերի և կատարելագործումների կիրառման համար անհրաժեշտ ծախսերը նախատեսվում են արտադրական–ֆինանսական պլաններում:

ՀԱՏՎԱԾ 4.

ԳՅՈՒՏԵՐԻ ՀԱՅՏԱՐԿԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՆՈՐՈՒԹՅԱՆ ԵԿՍՊԵՐՏԻԶԱՆ ԳՅՈՒՏԻ ՀԱՄԱՐ ՀԵՂԻՆԱԿԻ ՎԿԱՅԱԿԱՆ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ԴԵՊՔԵՐՈՒՄ

38. Գյուտի համար հեղինակի վկայական ստանալու մասին հայտ ներկայացնել կարող է միմիայն ինքը գյուտարարը, իսկ նրա մահանալու դեպքում՝ նրա ժառանգները:

Գյուտարարի կամ նրա ժառանգների հանձնարարությամբ հեղինակի վկայական ստանալու հայտ նրանց անունից պետք է ներկայացնի այն ձեռնարկությունը կամ հիմնարկությունը, վորտեղ նրանք աշխատում են, ինչպես նաև յուրաքանչյուր գյուտարարության որգան, վորին տվյալ գյուտն իր բնույթով վերաբերում է:

Մանրություն.— Հետագայում հայտարարող անվանվում է այն անձը, վորի անունից տեր-

ված է հայտը, այսինքն՝ դյուտարարը կամ նրա ժառանգը:

39. Դյուտի հայտարքի համար գրավոր դիմում է ներկայացվում ԱՊԽ-ին կից դյուտարարության Կոմիտեի նորության Բյուրոյին:

Դիմումի մեջ պետք է մատնանշել,— դյուտի հեղինակին, դյուտի առարկան, ինչպես նաև խնդրատուի անունն ու հասցեն:

Դիմումին պետք է կցել դյուտի նկարագրությունն անհրաժեշտ գծվածքներով:

Նկարագրության մեջ դյուտի էությունը պետք է բացատրել այնքան պարզ, հստակ ու լրիվ, վոր այդ նկարագրության հիման վրա տեղյակ անձինք կարողանան դյուտն իրագործել: Մասնավորապես պետք է մատնանշել այն էական ընորոշ հատկանիշները, վորոնց մեջ դյուտարարն ինքը տեսնում է դյուտի նորությունը (դյուտի ֆորմուլան):

Միաժամանակ դյուտարարը կարող է տալ և իր նկատառումները դյուտի իրագործելիության, նրա կիրառման ծավալի և նշանակության մասին:

Դիմումը և նրան կցված նկարագրությունն ու գծվածքները յերեք որինակից ներկայացվում են նորության Բյուրոյին:

Եթե հայտը չի բավարարում այն պահանջներին, վորոնք նշված են այս հոդվածում, ապա դիմումը տվողին առաջարկվում է տասն որվա ընթացքում լրացնել հայտը պակասող նյութերով և դրա համար տրվում է ժամկետ, բայց վոչ ավելի քան 2 ամիս:

40. Հայտը տալուց մեկ ամսվա ընթացքում դիմողը կարող է լրացնել և ճշտել ներկայացված նկարագրությունն ու գծվածքները, առանց հայտն ըստ էության փոփոխելու: Լրացումներն ու ճշտումները ներկայացվում են 3 որինակից:

Դիմողի խնդրանոք նորության Բյուրոն կարող է մինչև 3 ամիս յերկարացնել լրացումների և ճշտումների ժամկետը:

41. Եթե հայտի նախնական-քննության ժամանակ

նորության Բյուրոն գտնում է, վոր առաջարկը սխալ է, կամ բացահայտ անիրագործելի ու վոչ նոր, ապա նա ընդհատում է գործի քննությունը: Այդ մասին հայտնվում է դիմողին, մատնանշելով գործի կարճման հիմունքները:

Գործի կարճման վերաբերյալ վորոշումը մեկ ամսվա ընթացքում կարելի յե բողոքարկել գյուտարարության կոմիտեյի բողոքներ քննող խորհրդին:

42. Եթե հայտը պարունակում է բոլոր անհրաժեշտ տեղեկություններն ու նյութերը, թեկուզ և մեկ որինակ ու նախնական քննության ժամանակ սխալ կամ բացահայտ անիրագործելի ու վոչ նոր չի համարվում, ապա նորության Բյուրոն դիմողին՝ նրա հայտի առաջնության (պրիորիտետի) մասին տեղեկանք է տալիս: Տեղեկանքում մատնանշվում է հայտարարված գյուտի անունը, հեղինակի ու դիմողի անունը և հայտարքի որը:

Միաժամանակ նորության Բյուրոն գյուտարարության ճյուղային որգանին ուղարկում է (հոդ. 15 և հոդ. 20 ծանոթությունը) դիմումի, գյուտի նկարագրության և գծվածքների մեկական որինակները, ցույց տալով հայտարքի որը: Դիմումի, նկարագրության և գծվածքների մեկ որինակն ուղարկվում է ճյուղային որգանին նաև այն դեպքում, յերբ նորության Բյուրոն, նկատի ունենալով նյութի բացահայտ վոչ նոր լինելը, դադարեցնում է հայտի քննությունը:

Ծանոթություն.— Եթե դիմումը և անհրաժեշտ հավելվածները յերեք որինակից պակաս են ներկայացվում, ապա նորության Բյուրոն ուղարկում է այն ճյուղային որգանին դիմում տվողից պակասորդ պատճեններ ստանալու համար, իսկ յեթե գյուտն եյական նշանակություն ունի՝ ինքն է հանում պատճենը:

43. Հայտարքի առաջնության (պրիորիտետի) որը հաշվվում է այն որվանից, յերբ հայտը ստացվել է նորության Բյուրոյում, իսկ վիճելի դեպքերում՝ յերբ հայտը հանձնվել է փոստին: Եթե հայտին կցված չեն յեղել նկարագրությունն ու անհրաժեշտ գծվածքները,

ապա հայտարքի որ հաշվվում է այն որվանից, յերբ նկարագրությունն ու գծվածքները հասել են նորության բյուրոյին կամ հանձնվել փոստին:

44. Հայտարքի առաջնության մասին տեղեկանքը, կամ հայտը լրացնելու վերաբերյալ առաջարկը, կամ հայտարարությունն այն մասին, վոր գործը կարճված է նախնական քննության ժամանակ (հոդ. 41) հայտ ներկայացնողին պետք է ուղարկել վոչ ուշ քան հայտ ստանալուց տասն որվա ընթացքում:

45. Յուրաքանչյուր հայտ նորության բյուրոյում հետազոտման և յենթարկվում, պարզելու համար թե արդյոք տվյալ առաջարկը նորություն է, թե վոչ:

46. Նոր չի համարվում այն գյուտը, վորը մինչև հայտարքը կիրառվել է ԽՍՀՄ սահմաններում կամ արտասահմանում, կամ տպագրված է նրա նկարագրությունը կամ այլ ձևով հրապարակվել է այն չափով, վոր նրա իրագործումը մատչելի յե դարձել տեղյակ անձանց համար:

Սակայն, հեղինակի վկայական կարելի յե տալ՝

ա) յեթե դիմողը վոչ ավելի քան վեց ամիս հայտարքից առաջ ԽՍՀՄ սահմաններում բանավոր կամ գրավոր զեկուցումներ է տվել գիտա-հետազոտական հիմնարկություններում, գյուտարարության որդաններում, կամ այն ձեռնարկություններում, վորտեղ կարելի յե պատրաստել, փորձարկել կամ ոգտագործել տվյալ գյուտը.

բ) յեթե նույն ժամանակամիջոցում տվյալ գյուտը փորձարկման կամ կատարելագործման նպատակով կիրառվել է ԽՍՀՄ սահմաններում:

Առանց գյուտարարի համաձայնության մինչև հայտարքը գյուտ հրապարակողը քրեական պատասխանատվության և յենթարկվում: Գյուտի նման հրապարակումը գյուտարարին չի զրկում հեղինակի վկայական ստանալու իրավունքից:

47. Եքսպերտիզայի համար հիմք պետք է ծառայեն՝ անցյալում տրված թե խորհրդային և թե նախախորհրդային հեղինակի վկայականներն ու պատենտները և անցյալում ներկայացված հայտերը, նորության

Բյուրոյի որամադրության տակ յեղած արտասահման-
յան դրականությունը, ինչպես նաև ԽՍՀՄ սահմաններ-
ում հրատարակված տեխնիկական դրականությունն ու
վորձադետներին մատչելի արտասահմանյան տեխնիկա-
կան դրականություն:

48. Միատեղ գյուտ անող անձինք (համագյուտա-
րարներ) իրավունք ունեն ստանալու մեկ գյուտարարի
վկայական բոլորի անունով:

Այն անձինք, վորոնք տեխնիկական ողնություն են
ցույց տվել միայն համագյուտարարներ չեն համար-
վում:

49. Յեթե գյուտն արված ե ձեռնարկության կամ
կազմակերպության մեջ և չի կարելի վորոշել թե ով ե
նրա հեղինակը (գործարանային գյուտ), ապա հեղինա-
կի վկայական տրվում ե ձեռնարկության կամ կազմա-
կերպության անունով: Այդ դեպքում գյուտի համար
վարձատրություն տրվում ե տվյալ ձեռնարկության
բանվորական կոլեկտիվին:

50. Նորության եքսպերտիզան կատարվում ե հայ-
տերի հերթականությամբ և ավարտվում վոչ ուշ, քան
հայտարքի որվանից վեց ամսվա ընթացքում:

51. Հեղինակի վկայական տալու վերաբերյալ նո-
րության Բյուրոյի ընդունած վորոշումը հինգ որվա ըն-
թացքում ուղարկվում ե դիմում տվողին:

Գյուտի եյության (գյուտի ֆորմուլայի) մասին
բյուրոյի տված բացատրությանը չհամաձայնվելու
դեպքում դիմողն իրավունք ունի վորոշումը ստանալուց
մեկ ամսվա ընթացքում ուղարկել Բյուրոյին իր առար-
կությունները: Դիմողն իրավունք ունի անձամբ կամ իր
լիազորած անձանց և կազմակերպությունների միջոցով
ծանոթանալու այդ բոլոր նյութերին, վորոնց հիման
վրա բյուրոն վորոշում ե ընդունել, ինչպես նաև կարող ե
պահանջել վոր նյութերի պատճենը ձրի ուղարկվի իրեն:
Վերջին դեպքում առարկություններ ներկայացնելու
ժամկետը պետք ե հաշվել այն որվանից, յերբ դիմողը
ստացել ե նյութերը:

Յեթե դիմողը սահմանված ժամկետում առարկու-
թյուններ չի ներկայացնում, ապա նորության Բյուրոն

նրան հեղինակի վկայական է տալիս, որի մեկ պատճենն ուղարկում և դյուտարարության ճյուղային որդանին:

Նորության Բյուրոն դիմողի առարկությունները քննում է մեկ ամսվա ընթացքում և վորոշում է ընդունում, որի մասին հայտնում է դիմողին: Դիմողը մեկ ամսվա ընթացքում կարող է այդ վորոշումը բողոքարկել բողոքներ քննող Խորհրդին, որը բողոքը պետք է լսենի վոչ ուշ, քան այն ստանալուց մեկ ամսվա ընթացքում:

Բողոքի առթիվ ընդունված վորոշման համաձայն Նորության Բյուրոն հեղինակին վկայական է տալիս և նրա պատճենն ուղարկում է դյուտարարության ճյուղային որդանին:

52. Հեղինակի վկայական տալը մերժելու վերաբերյալ Նորության բյուրոյի ընդունած վորոշումը հայտնվում է դիմողին, որը կարող է յերեք ամսվա ընթացքում բողոքարկել այդ վորոշումը բողոքներ քննող խորհրդին:

Դիմողն իրավունք ունի անձամբ կամ իր լիազորած անձանց ու կազմակերպությունների միջոցով ծանոթանալու այն նյութերին, որոնց հիման վրա Նորության բյուրոն մերժել է հեղինակին վկայական տալը, ինչպես նաև կարող է պահանջել, որ այդ նյութերի պատճենները ձրի ուղարկվեն իրեն:

53. Ամեն մի պետական որդան, կոոպերատիվ կամ այլ հասարակական կազմակերպություն և յուրաքանչյուր անձնավորություն հեղինակի վկայական տալու վերաբերյալ վորոշումը հրապարակելուց յերեք տարվա ընթացքում կարող է բողոքել հեղինակի վկայական տալու դեմ և առարկել այդ վկայականի ուժի մեջ թողնելու դեմ, ապացուցելով, որ տվյալ դյուտը նոր չէ:

Այն դեպքերում, յերբ վորոշումը չի հրապարակվում, բողոքի ժամկետը պետք է հաշվել հեղինակի վկայական տալու որվանից:

Այդ բողոքները, մինչև վկայական տալը, ներկայացվում են Նորության բյուրոյին, իսկ վկայական տալուց հետո՝ բողոքներ քննող խորհրդին:

54. Ամեն մի պետական որդան, կամ հասարակական կազմակերպություն, կամ առանձին շահագրգռված անձ, հեղինակի վկայական տալու վերաբերյալ վորոշման հրապարակումից յերեք տարվա ընթացքում կարող են վիճել վկայականը տվյալ դիմողին տալու դեմ, ապացուցելով, վոր դյուտի իսկական հեղինակը ա՛լ անձնավորություն կամ մի խումբ անձնավորություններ են:

Այն դեպքում, յերբ վորոշումը չի հրապարակվում, առարկել թույլատրվում է հեղինակի վկայական տալու որվանից յերեք տարվա ընթացքում:

Այդ վեճերը հարուցվում են ընդհանուր դատական կարգով, միաժամանակ տեղեկացնելով նորության բյուրոյին այդ մասին:

55. Յեթե հեղինակության վերաբերյալ վեճը հարուցվում է նախքան հեղինակի վկայական տալը, ապա նորության բյուրոն դյուտի նորությունը վորոշելու համար կատարում է բոլոր անհրաժեշտ գործողությունները, բայց հեղինակի վկայական տալը դադարեցնում է՝ մինչև դատարանի կողմից վեճի մասին վորոշում կայացնելը:

Յեթե վեճը հարուցված է վկայական տալուց հետո և դատարանը գտնում է, վոր հայտում նշված անձնավորությունը դյուտի հեղինակը չե, ապա տրված վկայականը հայտարարվում է անվավեր: Այս դեպքում նորության բյուրոն հեղինակի վկայական է տալիս այն անձնավորության, վորին դատարանը ճանաչել է վորպես իսկական հեղինակ, պահպանելով առաջնությունը սկզբնական հայտարքի որվանից:

56. Բողոքներ քննող խորհրդի վորոշումները վերջնական են և բողոքարկման յենթակա չեն:

Այդ վորոշումները վերահսկողության կարգով կարող է վերանայել դյուտարարության կոմիտեն:

57. Հեղինակի վկայական տալու գործերի վերաբերյալ բոլոր դիմումներն ու փաստաթղթերն ազատ են վորևե դանձումներից:

820—8

ՀԱՏՎԱԾ 5.

ՊԱՏԵՆՏՆԵՐ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ

58. Պատենտ ստանալու համար հայտերը ներկայացնելու և դրանց եքսպերտիզայի վերաբերմամբ համապատասխանորեն կիրառվում է այն կարգը, որը ցույց է տրված 4-րդ հատվածում, հետևյալ առանձնահատկություններով:

59. Պատենտ ստանալու համար հայտ կարող է ներկայացնել ինքը գյուտարարը կամ նրա իրավահաջորդը, այսինքն՝ նրա ժառանգները և այն անձինք, որոնց գյուտարարը կամ նրա ժառանգները զիջել են գյուտի իրավունքը (հոդ. 7):

60. Մշտապես արտասահմանում բնակվողները պատենտ ստանալու վերաբերյալ գործ վարելու համար պետք է լիազորեն ԽՍՀՄ-ում մշտապես բնակվող ներկայացուցչի:

ԱՊԽ-ին կից գյուտարարության կոմիտեն է որոշում թե ում կարելի է հանձնարարել ներկայացուցչությունը:

61. Պատենտ ստանալու համար տրվող դիմումի մեջ գյուտարարը կամ նրա իրավահաջորդը պետք է նշեն, որ պատենտ տալուն չեն խանգարում այն արգելքները, որոնք հիշատակված են այս Կանոնադրության 6-րդ հոդվածում:

Եթե գյուտարարն ոտարյերկրացի է և ապրում է արտասահմանում, ապա այդպիսի նշում չի պահանջվում:

Շահագրգռված պետական որգաններ և հասարակական կազմակերպություններ կարող են ընդհանուր դատական կարգով ապացուցել, որ 6-րդ հոդվածում ցույց տրված պատճառներով գյուտարարն իրավունք չունի պատենտ ստանալու և այդ հիման վրա կարող են պահանջել, որ տրված պատենտն անվավեր համարվի: Այդպիսի հայցեր կարելի է հարուցել պատենտն ուժի մեջ լինելու ամբողջ ժամանակամիջոցում:

62. Յուրաքանչյուր հայտ միմիայն մեկ գյուտի

պետք է վերաբերի։ Եթե այդ պայմանը չի կատարված, ապա դիմողը հայտի առաջնությունը պահպանելու համար պարտավոր է, նորության Բյուրոյի պահանջմամբ և նրա սահմանած ժամկետում, բաժանել իր հայտը։

63. Եթե գյուտարարը պատենտային ֆորմուլային համաձայն չէ, պատենտ ստանալու նկատմամբ մերժում է ստացել և պահանջում է, վորպեսզի իրեն ուղարկեն այն նյութերի պատճենը, վորոնց հիման վրա նորության Բյուրոն հանել է իր վորոշումը, ապա նա պարտավոր է հատուցել դրա հետ կապված ծախսերը։

64. Եթե եքսպերտիզան հնարավոր է գտնում պատենտ տալը և գյուտի ֆորմուլայի ակտիվ դիմողի հետ համաձայնություն է կայանում, ապա նորության Բյուրոն «Вестник Комитета по Изобретательству при СТО»-ում հրապարակում է դիմում տվողի ու գյուտարարի անունները և գյուտի ֆորմուլան։ Միաժամանակ նորության Բյուրոյում ցուցադրվում են՝ հայտերին վերաբերող նկարագրությունն ու գծվածքները։

Գյուտի ֆորմուլայի նախնական հրապարակումից հետո յերեք ամսվա ընթացքում ամեն մի պետական որգան, կոոպերատիվ կամ այլ կազմակերպություն, ինչպես նաև յուրաքանչյուր անհատ կարող են բողոքել պատենտ տալու դեմ։

Բողոք պետք է տալ գրավոր, մանրամասն պատճառաբանությամբ, կցելով անհրաժեշտ նյութերը։

Եթե մատնանշված ժամկետում բողոքներ չեն լինի, ապա նորության Բյուրոն տալիս է պատենտ, իսկ յեթե բողոքներ լինում են, ապա բյուրոն պետք է այդ պնդումները քննի յերկու ամսվա ընթացքում։

65. Դիմողի պահանջմամբ հայտի մեկ որինակը գյուտի ոգտակարությունը գնահատելու համար գյուտարարության ճյուղային որգանին ուղարկելը հետաձգվում է մինչև գյուտի ֆորմուլայի նախնական հրապարակումը (հոդ. 64)։

66. Գյուտը նոր չլինելու կամ նրա հեղինակին ճիշտ չվորոշելու պատճառաբանությամբ տրված պատենտի

դեմ վիճելը թույլատրվում է պատենտն ուժի մեջ լինելու ամբողջ ժամանակաշրջանում։

67. Գյուտերի պատենտների վերաբերյալ գործերի համար գանձվում է՝

ա) պատենտ ստանալու համար տրված յուրաքանչյուր հայտից հայտարարային տուրք.

բ) յուրաքանչյուր տրված պատենտից՝ տարեկան պատենտատուրք.

գ) տուրք՝ նորության Բյուրոյի վորոշումների դեմ տրվող յուրաքանչյուր բողոքից.

դ) տուրք՝ գյուտի իրավունքը լրիվ կամ մասնակի կերպով զիջելու մասին գյուտերի մատյանում նշելու համար տրվող յուրաքանչյուր դիմումից։

Տուրքերի չափն ու վճարման կարգը վորոշում է Աշխատանքի և Պաշտպանության Խորհուրդը։

ԱՊԽ-ին կից գյուտարարության կոմիտեն կարող է առանձին դեպքերում տուրքից ազատել աշխատավոր գյուտարարներին։

Տարեկան պատենտատուրքը ժամկետին չվճարելը դադարեցնում է պատենտի ուժը։

ՀԱՏՎԱԾ 6.

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԳՅՈՒՏԵՐ

68. Գյուտը լրացուցիչ է համարվում, յեթե հեղինակի վկայականի կամ պատենտի արժանացած այլ գյուտերի (հիմնական) կատարելագործումն է այն և առանց հիմնական գյուտի կիրառման ինքնուրույն կերպով ոգտագործվել չի կարող։

69. Յեթե հիմնական գյուտի համար հեղինակի վկայական է տրված, ապա լրացուցիչ գյուտի համար տրվում է հեղինակի կախյալ վկայական։

Ըստ վորում, լրացուցիչ գյուտի հայտը, վոր հիմնական գյուտի հեղինակը ներկայացրել է չորս ամսվա ընթացքում՝ մինչև հեղինակի վկայական տալը, նույն ժամանակաշրջանում նույնպիսի գյուտի համար այլ

անձի կողմից ներկայացված հայտի հանդեպ առաջնություն (պրիորիտետ) է վայելում:

70. Եթե հիմնական դյուտը, որի համար հեղինակի վկայական է տրված, ինքնին ժողովրդական տնտեսության համար պիտանի չի ճանաչված, բայց լրացուցիչ դյուտի կապակցությամբ պիտանի է ճանաչվել, ապա վարձատրություն տրվում է երկու (հիմնական և լրացուցիչ) դյուտերի հեղինակներին:

Այս դեպքում վարձատրության կարգը սահմանվում է ԱՊԽ-ին կից դյուտարարության կոմիտեի հրահանգով (հոդ. 90):

71. Եթե հիմնական դյուտի համար պատենտ է տրված, ապա լրացուցիչ դյուտի համար դիմողի ընտրությամբ տրվում է կախյալ պատենտ կամ կախյալ հեղինակի վկայական: Ըստ որում, լրացուցիչ դյուտի ոգտագործումը թույլատրվում է միմիայն հիմնական դյուտի պատենտատիրոջ համաձայնությամբ:

Կախյալ հեղինակի վկայական ստացողին վարձատրություն տրվում է՝ ընդհանուր հիմունքներով և այն ժամանակ միայն, երբ պետությունը հիմնական դյուտն իրագործելու իրավունք է ստանում: Կախյալ պատենտ տրվում է այնքան ժամանակով, որքան ժամանակով ուժի մեջ է հիմնական պատենտը:

72. Եթե հիմնական պատենտի ուժը վերանում է լրացուցիչ դյուտին չվերաբերող պատճառներով, ապա կախյալ պատենտն ու հեղինակի վկայականն ինքնուրույն են դառնում: Այս դեպքում կախյալ պատենտն ուժի մեջ է մնում այն ժամկետով միայն, ինչ ժամկետով տրված է հիմնական պատենտը:

Մյուս բոլոր տեսակետներից կախյալ պատենտը հավասարեցվում է ինքնուրույն պատենտին:

ՀԱՏՎԱԾ 7.

ԳՅՈՒՏԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆ ՈՒ ԳՅՈՒՏԵՐԻ ՄԱՏՅԱՆԸ

73. Նորության բյուրոյում ստացվող բոլոր հայտերի մասին, բացի գաղտնի հայտերից, առաջնության

վերաբերյալ տեղեկանք տալուց հետո, հրապարակվում է «Вестник Комитета по Изобретательству при СТО»-ում Հայտարարության մեջ նշվում է՝ գյուտի անունը, հեղինակի և դիմողի անունները, հայտարքի որը և այն հյուղային որգանը, վորին ուղարկված է հայտի մեկ որինակը՝ սրա ոգտակարությունը գնահատելու համար:

74. Բացի գաղտնի գյուտերից, մնացած գյուտերի համար պատենտ և հեղինակի վկայական տալու վերաբերյալ ընդունված և ուժի մեջ մտած վորոշումները հրապարակվում են «Вестник Комитета по Изобретательству при СТО»-ում:

75. Հեղինակի վկայականի և պատենտի արժանացած գյուտերի նկարագրությունները ու գծվածքները (բացի գաղտնի գյուտերից) գյուտարարության կոմիտեն հրապարակում է բրոշյուրների ձևով, վորոնք ԽՍՀՄ գյուտերի ամփոփ ժողովածուներ են հանդիսանում:

76. ԱՊԽ-ին կից գյուտարարության կոմիտեյի նորության Բյուրոն վարում է գյուտերի (բացի գաղտնի գյուտերից) մատյան: Ցուրաքանչյուր ցանկացող կարող է ծանոթանալ այդ մատյանին, ինչպես նաև հեղինակի վկայականի և պատենտի արժանացած գյուտերի նկարագրություններին ու գծվածքներին:

77. Հեղինակի վկայական և պատենտ տալու վերաբերյալ վորոշումների, ինչպես նաև նկարագրությունների ու գծվածքների հրապարակումը շահագրգռված որգանների և անձանց պահանջմամբ կարող է առժամանակ հետաձգվել, կամ գյուտարարության կոմիտեյի վորոշմամբ բոլորովին վերացվել:

Գյուտարարության կոմիտեն կարող է նույնպես առժամանակ հետաձգել կամ բոլորովին վերացնել առանձին գյուտերի նկարագրությունների և գծվածքների ցուցակագրումը:

ՀԱՏՎԱԾ 8·

ԳԱՂՏՆԻ ԳՅՈՒՏԵՐ ԵՎ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄՆԵՐ

78· Պետական պաշտպանության վերաբերող գյուտերն ու կատարելագործումները համարվում են գաղտնի:

Բացի այդ, գյուտարարության կոմիտեն, իր հայեցողությամբ կամ շահագրգռված գերատեսչության և ճյուղային որդանի առաջարկությամբ, կարող է գաղտնի համարել վորևե գյուտ, վորի գաղտնի պահելը պահանջում են պետության շահերը: Նոր գյուտ չհանդիսացող կատարելագործումը կարող է գաղտնի ճանաչվել շահագրգռված ժողկոմատի կամ ճյուղային միավորման (վարչության) վորոշմամբ:

79· Գյուտը գաղտնի հայտարարելու մասին անմիջապես հաղորդվում է դիմողին, հեղինակին և գյուտարարության շահագրգռված ճյուղային որդանին, վորն իր հերթին իրազեկ է դարձնում համապատասխան ձեռնարկություններին, գիտա-հետազոտական ինստիտուտներին և այլն: Նմանապես և շահագրգռված ժողկոմատը կամ ճյուղային որդանը տեխնիկական կատարելագործումը գաղտնի համարելու մասին հաղորդում է այդ կատարելագործումն առաջարկողին և համապատասխան ձեռնարկություններին:

80· Գաղտնի գյուտերի և կատարելագործումների մասին տեղեկություններ տպագրելը մամուլում, կամ գրանց եյությունը վորևե այլ կերպ հրապարակելը հետապնդվում է քրեական որենքներով:

81· Գաղտնի գյուտ կամ կատարելագործում կարելի յե առաջարկել միմիայն ԽՍՀՄ շահագրգռված պետական որդանին: Նմանապես, գաղտնի գյուտ կամ կատարելագործում կարող է ոգտագործել միմիայն ԽՍՀՄ շահագրգռված որդանը:

82· Գյուտի կամ կատարելագործման գաղտնի լինելը կարելի յե վերացնել նույն կարգով, ինչ կարգով սահմանվել է:

83· Պետական պաշտպանության համար նշանակություն ունեցող գյուտի հեղինակը պարտավոր է հայտն

անձամբ հանձնել կամ ԱՊԽ-ին կից գյուտարարության կոմիտեյի հատուկ բաժնին կամ Միացյալ Պետքաղվարչության տեղական որդանին, կամ էլ տեղական ռազմական վարչությանն՝ անմիջապես գաղտնի կարգով ԱՊԽ-ին կից գյուտարարության կոմիտեյին ուղարկելու համար:

84. Ցերկրի պաշտպանությանը վերաբերող գաղտնի գյուտերից և կատարելագործումներից պետականները ջոկելու, դրանց նորությունը վորոշելու, գաղտնի լինելը վերացնելու, ինչպես նաև այդ գործերի վերաբերյալ վորոշումները բողոքարկելու կարգը սահմանվում է հատուկ հրահանգով:

Այդ հրահանգը հրապարակում է ԱՊԽ-ին կից գյուտարարության կոմիտեն՝ Ռազմա-Ծովային Ժողկոմատի համաձայնությամբ:

ՀԱՏՎԱԾ 9.

ԳՅՈՒՏԵՐԻ ՊԱՏԵՆՏԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԻՐԱՑՈՒՄԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ

85. ԽՍՀՄ սահմաններում արված գյուտերի, ինչպես նաև պետության կողմից գործուղվող խորհրդային քաղաքացիների արտասահմանում արած գյուտերի պատենտավորումն ու իրացումն արտասահմանում կատարվում է բացառապես ԱՊԽ-ին կից գյուտարարության կոմիտեյի թույլտվությամբ ու նրա սահմանած կարգով:

Այս կանոնը խախտողները քրեական պատասխանատվության են յենթարկվում:

86. Արտասահմանում արվող գյուտերի հեղինակների իրավունքների պաշտպանության նկատմամբ հեղինակի վկայականը հավասարեցվում է պատենտին:

ՀԱՏՎԱԾ 10.

ՀԵՂԻՆԱԿԻ ՎԿԱՅԱԿԱՆ ՍՏԱՑՈՂ ԳՅՈՒՏԱՐԱՐՆԵՐԻ ՇԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄՆԵՐ ԱՌԱՋԱՐԿՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

87. Հեղինակի վկայականի արժանացող պիտանի գյուտի հեղինակի վարձատրությունը սահմանում և վճարում է գյուտարարության ճյուղային որգանը:

88. Եթե ձեռնարկությունը գյուտի իրագործմանը ձեռնարկում է մինչև նրա ոգտակարությունը վորոշելը ճյուղային որգանի կողմից, ապա այդ ձեռնարկությունը վարձատրում է գյուտարարին կատարելագործումների պարդևատրման կանոնների համաձայն (հոդ. 90):

89. Տեխնիկական կատարելագործման համար պարգևատրում է այն ձեռնարկությունը, որն ոգտագործում է տվյալ կատարելագործումը: Իսկ եթե այն ոգտագործում են տվյալ ճյուղի մի քանի ձեռնարկություններ, ապա պրեմիան սահմանում ու վճարում է գյուտարարության ճյուղային որգանը, հաշվարկելով ստրդեն վճարված գումարները:

90. Վարձատրության չափը սահմանվում է ԱՊԽ-ին կից գյուտարարության կոմիտեի հրահանգի հիման վրա:

Հրահանգում պետք է նախատեսել վարձատրության դանազան դրույքներ—ա) նոր գյուտերի համար, բ) այլ կատարելագործումների համար:

91. Վարձատրության չափին ու. կարդին վերաբերող բողոքները քննելու համար համապատասխան ժողկոմատին կից կազմվում է հանձնաժողով, տվյալ ժողկոմատի, պրոֆմիության ու բանդյուղտեսչության ժողկոմատի ներկայացուցիչների կազմով, վերջինի ներկայացուցչի նախագահությամբ:

Դանոթություն.— Ժողովրդական կոմիսարիատը ՀԱՄԿԽ-ի և ԲԳՏ ժողկոմատի համաձայնությամբ (իսկ դաշնակից հանրապետությունների ժողկոմատները՝ հանրապետական պրոֆիորհրդի և հանրապետական բանդյուղտեսչու-

թյան համաձայնությամբ) ժողկոմատներին կից հանձնաժողովների փոխարեն բողոքներ քննության առնելու համար կարող է ծյուղային միավորմանը կից հանձնաժողովներ կազմակերպել: Այդ հանձնաժողովների մեջ մտնում են միավորման, պրոֆմիության և բանդյուղտեսչության ժողկոմատի ներկայացուցիչները, վերջինի նախագահությամբ:

92. Եթե գյուտը կամ կատարելագործումն արված է մի քանի հոգու կողմից ապա գյուտի ոգտագործման համար տրվող վարձատրությունը նրանց համաձայնությամբ բաժանվում է բոլորի միջև: Համաձայնություն չկայանալու դեպքում, հարցը նրանց խնդրանոք լուծվում է դատարանի կամ հասարակական կազմակերպությունների միջոցով:

93. Գյուտի կամ կատարելագործման համար տրվող վարձատրությունը բոլոր տեսակետներից հավասարեցվում է աշխատավարձին, անկախ այն բանից թե տվյալ անձնավորությունը վարձու յե աշխատում, թե վոչ:

94. Գյուտի կամ կատարելագործման վարձատրությունից յեկամտային հարկ վորոշելիս մինչև 6000 ռուբ. չի տարեկան վարձատրությունը հարկման չի յենթարկվում: Եթե վարձատրությունը 6000 ռուբլուց ավելի յե, ապա այդ գումարից հանվում է տարեկան 6000 ռուբլի:

95. Պլանի գյուտերով աշքի ընկնող գյուտարարները գլխավոր աշխատողների հետ համահավասար հիմունքներով բնակարանային արտոնություններ են վայելում:

Ձեռնարկություններում և հիմնարկություններում աշխատող և պլանի գյուտերով աշքի ընկնող գյուտարարները, յեթե նրանք բնակարան չունեն կամ ապրում են բնակարանային աննպաստ պայմաններում, իրավունք ունեն առաջին հերթին բնակարան ստանալու տվյալ ձեռնարկության կամ հիմնարկության բնակարանային ֆոնդից:

Արդյունաբերական կենտրոններում տեղական խորհուրդները դյուտարարների համար վորոշ բնակարանային տարածություն պետք է նախատեսեն:

96. Բարձրագույն և միջնակարգ տեխնիկական ուսումնարկներում պետք է անպայման ընդունել այն բանվոր դյուտարարներին, վորոնք բավարարում են ընդունելության պայմանները:

Վոչ-բանվոր դյուտարարներն ուսումնական հիմնարկներ ընդունվում են արդյունաբերական բանվորների հետ համահավասար հիմունքներով:

97. Այլ հավասար պայմաններում դյուտարարները համապատասխան գիտահետազոտական և փորձնական հիմնարկություններում ու ձեռնարկություններում (ինստիտուտներում, լաբորատորիաներում, փորձնական ցեխերում ու գործարաններում և այլն) գիտական աշխատողների պաշտոններ վարելու գերազանց իրավունք ունեն:

Այդ հիմնարկություններում ու ձեռնարկություններում գիտական աշխատողների վորոշ քանակությամբ տեղեր պետք է հատկացնել դյուտարարներին:

98. Գյուտարարության ճյուղային որգանները դյուտարարների համամիութենական ընկերության համաձայնությամբ աչքի ընկնող լավագույն դյուտարարների ընտրություն պետք է կատարեն, գյուտարարության գծով գիտա-հետազոտական ինստիտուտներում, լաբորատորիաներում, կոնստրուկտորական բյուրոներում, փորձնական գործարաններում ու ցեխերում և այլ տեղերում նրանց ոգտագործելու համար:

Նրանք աշխատում են ճյուղային որգանի հաստատած պլանով և համապատասխան վարձատրություն են ստանում:

99. Արտադրությունն ուսումնասիրելու և վերակավորումը բարձրացնելու նպատակով կատարվող արտասահմանյան և վոչ-արտասահմանյան գործուղումների տարեկան պլաններում տնտեսական որգանները դյուտարարների համար վորոշ քանակությամբ տեղեր պետք է նախատեսեն:

Գործուղվող դյուտարարների ընտրությունը կա-

տարում են գյուտարարության ճյուղային որդանները, համապատասխան կազմակերպությունների համաձայնությամբ։

100. Այն գյուտարարները, որոնք գյուտարարությամբ են զբաղվում միաժամանակ կատարելով նաև իրենց հիմնական վարձու աշխատանքը, իրավունք ունեն յերկշաբաթյա լրացուցիչ արձակուրդ ստանալու։

101. Աշխատունակությունը կորցրած գյուտարարների համար համապատասխան հասարակական կազմակերպությունների և գյուտարարության որդանների միջնորդությամբ, սահմանվում է անհատական կենսաթոշակ։

102. Ձեռնարկություններում և հիմնարկություններում աշխատող գյուտարարները, այլ հավասար պայմաններում, մյուս աշխատողների հանդեպ առաջին հերթին սանատորիա, կուրորտ և հանգստյան տուն ուղարկվելու իրավունք են վայելում։

103. Սոցիալական ապահովությանը վոչ—յենթակա գյուտարարները և նրանց ընտանիքներն ապահովագրված բանվորների և նրանց ընտանիքների հետ հավասար հիմունքներով բոլոր տեսակի բժշկական ողնության իրավունք ունեն։

104. Արգելվում է բանվոր գյուտարարների յերեխաներին դպրոցներ չընդունելը, յեթե նրանք բավարարում են ընդունելության պայմանները, վոչ—բանվոր գյուտարարների յերեխաները դպրոց են ընդունվում և ձրիաբար տեղավորվում են մանկապարտեզներում, դաղութներում և նման հիմնարկներում բանվորների յերեխաների հետ համահավասար հիմունքներով։

Մահացած գյուտարարների յերեխաները մանկապարտեզներում, դաղութներում և նման հիմնարկներում ձրիաբար տեղավորվում են առաջին հերթին։

105. Այս հատվածում նշված իրավունքներից (հոդ. հոդ. 93—104) ոգտվում են հեղինակի վկայական ունեցող այն աշխատավոր գյուտարարները, որոնց գյուտերը փորձարկումից հետո պիտանի յեն ճանաչված ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության համար։

Տեխնիկական կատարելագործումներ առաջարկողներից նրանք, որոնց առաջարկները խոշոր նշանակություն ունեն, արտոնություններ վայելում են գյուտարարների հետ համահավասար հիմունքներով. մյուսների վերաբերմամբ արտոնություններ տալու պայմաններն ու ծավալը նախատեսվում է ԱՊԽ-ին կից գյուտարարության կոմիտեի հրահանգով.

93-րդ և 94-րդ հոդվածներում նշված արտոնություններից ոգտվում են այն բոլոր աշխատավորները, որոնք գյուտի կամ կատարելագործման համար վարձատրություն են ստացել:

Արտոնությունները տրվում են համապատասխան գյուտաշրջրության որդանից ստացված վկայականների հիման վրա:

106. Գյուտարարի կամ տեխնիկական կատարելագործման առաջարկ ներկայացնող անձնավորության մահանալու դեպքում վարձատրության իրավունքն անցնում է նրանց ժառանգներին: Բացի 93-րդ և 94-րդ հոդվածներում նշվածներից, այլ արտոնություններից ոգտվելու իրավունք ժառանգները չեն վայելում:

ԽՍՀՄ ԿԳԿ-ի նախագահ՝ Մ. ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀՄ ԺԿԽ-ի նախագահ՝ Վ. ՄՈԼՈՏՈՎ (ՍԿՐՅԱԲԻՆ)

ԽՍՀՄ ԿԳԿ-ի քարտուղար՝ Ա. ՑԵՆՈՒԿԻՋԵ

ՀՐԱՀԱՆԳ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՑԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ ԿԻՑ ԳՅՈՒՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵՏԻ

Գյուտերի, տեխնիկական և կազմակերպչական կատարելագործումների համար վարձատրություն տալու մասին.

1. Գյուտերի համար վարձատրություն հեղինակի վկայական ունեցող գյուտարարներին տրվում է այն դեպքում, յերբ նրանց գյուտերը ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության համար (նույն թվում և սոցիալ-կուլտուրական նպատակների, յերկրի պաշտպանության համար և այլն) պիտանի յեն ճանաչված:

Տեխնիկական կատարելագործումներ են համարվում և վարձատրվում այն առաջարկները, որոնց վերաբերյալ հեղինակի վկայական չի ստացված և որոնք տեխնիկական կոնստրուկտիվ բնույթ ունեն կամ փոփոխում են արտադրության տեխնոլոգիական պրոցեսները:

Կազմակերպչական կատարելագործումներ են համարվում և վարձատրվում մնացած բոլոր պիտանի առաջարկները, որոնք ընդունված են իրագործելու համար:

Ծանոթություն 1.— Այն դեպքերում, յերբ գյուտը պիտանի ճանաչվում է մինչև հեղինակի վկայական տալու հարցի լուծումը, վարձատրություն տրվում է որպես տեխնիկական կատարելագործումի համար և հետագայում, հեղինակի վկայական ստանալուց հետո, համապատասխան հաշվարկ է կատարվում:

Ծանոթություն 2.— Այն դեպքում, յերբ ար-

դեն իսկ տրված հեղինակի վկայականը վերացվում է գյուտը նոր չլինելու պատճառով, վարձատրության հաշվարկ է կատարվում և վարձատրությունը վորոշվում է վորպես տեխնիկական կատարելագործման համար տրվելիք: Սակայն վարձատրության հաշվին վճարված գումարները հետ չեն վերադարձվում:

2. Այն առաջարկների համար, (գյուտեր, տեխնիկական և կազմակերպչական կատարելագործումներ), վորոնց հիմնական եֆեկտը տնտեսումի մեջ է արտահայտվում, վարձատրություն տրվում է տարեկան տնտեսումից յելնելով, ըստ չկալանների (հոդ. հոդ. 6, 7, 8):

Ըստ վորում, տեխնիկական և կազմակերպչական կատարելագործումների նկատմամբ տարեկան տնտեսում համարվում է առաջարկն առաջին տարում իրագործելուց ստացված տնտեսումը: Իսկ գյուտերի նկատմամբ տարեկան տնտեսում համարվում է գյուտի իրագործման առաջին 3 տարիներից այն տարվա տված տնտեսումը, վորի ընթացքում գյուտն ամենից շատ է կիրառված յեղել:

3. Առաջին տարվա տարեկան տնտեսում համարվում է տվյալ գյուտի, տեխնիկական կամ կազմակերպչական կատարելագործման կիրառումից առաջին 12 ամսվա ընթացքում ստացված տնտեսումը:

Այն դեպքում, յերբ առաջարկը գործադրվել է տարվա մեջ, յենթադրյալ տնտեսումը (հոդ. 14) վորոշվում է տարվա մնացած մասի համար՝ տվյալ տարվա արտադրական ծրագրով, իսկ հետագա տարվա մինչև 12 ամիսը պակասող մասը՝ հետագա տարվա ծրագրով, յեթե հայտնի յե այն, իսկ յեթե հայտնի չէ, ապա ընթացիկ տարվա ծրագրով:

4. Առաջարկից սպասվող տնտեսումը հաշվելիս պետք է համեմատել արտադրանքի արժեքի կալկուլացիան (յեթե առաջարկն իր հիմնական եֆեկտն արտադրության բնագավառում է տալու), կամ շահագործման ծախսերը (յեթե առաջարկն իր հիմնական եֆեկտը տալիս է գյուտարարված և կատարելագործված գործ-

վածքների շահագործման ժամանակ)՝ մինչև առաջարկ գործադրելը և դրանից հետո։ Ըստ վորում, յերկու դեպքերում՝ եվ հաշվի յեն առնում շինվածքման, վերադիր և այլ ծախսերը։ Իսկ այն ծախսերը, վորոնք կապված են առաջարկի մշակման (գծվածքներ, մոդելներ, նմուշներ և այլն) ու նրա վորձարկման հետ, հաշվի չեն առնվում։

5. Այն առաջարկների վարձատրման չափը, վորոնց հիմնական ոգուտը տնտեսության մեջ չե, վորոշում և գյուտարարության ճյուղային որգանը (միավորման, կենտրոնական վարչության կից և այլն) կամ ձեռնարկության վարչությունը, ըստ պատկանելության. (Հոդ. հոդ. 18 և 20)։ Դրա համար առաջարկը, նայած նրա կարևորությանը, հավասարեցվում է այս կամ այն տնտեսում տվող առաջարկի, վորից հետո վարձատրության չափն և վորոշվում ըստ համապատասխան չկալայի, այս հրահանգով նախատեսված հավելումներով և մահանումներով։

6. Գյուտերի համար տրվող վարձատրությունը վորոշվում է հետևյալ չկալայով՝

Տարեկան տնտեսումը		Վարձատրության չափը
Մինչև 500 ռ.	տնտեսում	30 տոկ. բայց վոչ պակաս 100 ռ.
500 մինչև 1000 ռ.	»	20 » և դրան դուս. 50 »
1000 » 5000 »	»	15 » » » 100 »
5000 » 10000 »	»	12 » » » 250 »
10000 » 50000 »	»	10 » » » 450 »
50000 » 100000 »	»	6 » » » 2450 »
100000 » 250000 »	»	5 » » » 3450 »
250000 » 500000 »	»	4 » » » 5950 »
500000 » 1000000 »	»	3 » » » 10950 »
1000000-ից բարձր	»	2 » » » 20950 »
		բայց վոչ ավելի 100,000 ռ.

7. Տեխնիկական կատարելագործումների համար տրվող վարձատրությունը վորոշվում է հետևյալ չկալայով՝

Տարեկան մնացուցակը				Վարձատրության չափը			
Մինչև 500 ռ.			մնացուցակում	30 տոկ. բայց վոչ պակաս			50 ռ.
500	մինչև	1000 ռ.	»	20 »	և դրան դուս.		50 »
1000	»	5000 »	»	12 »	»	»	130 »
5000	»	10000 »	»	8 »	»	»	330 »
10000	»	50000 »	»	5 »	»	»	630 »
50000	»	100000 »	»	3 »	»	»	1630 »
100000	»	250000 »	»	2,5 »	»	»	2130 »
250000	»	500000 »	»	2 »	»	»	3880 »
500000	»	1000000 »	»	1,5 »	»	»	5880 »
10000000-ից բարձր				1 »	»	»	10830 »
				բայց վոչ ավելի 50.000 ռ.			

8. Կազմակերպչական կատարելագործումների համար տրվող վարձատրությունը վորոշվում է հետևյալ չկալայով՝

Տարեկան մնացուցակը				Վարձատրության չափը			
Մինչև 500 ռ.			մնացուցակում	15 տոկ. բայց վոչ պակաս			25 ռ.
500	մինչև	1000 ռ.	»	10 »	և դրան դուսմար·		25 »
1000	»	5000 »	»	6 »	»	»	65 »
5000	»	10000 »	»	4 »	»	»	165 »
10000	»	50000 »	»	25 »	»	»	315 »
50000	»	100000 »	»	1,50 »	»	»	815 »
100000	»	250000 »	»	1,25 »	»	»	1065 »
250000	»	500000 »	»	1 »	»	»	1690 »
500000	»	1000000 »	»	75 »	»	»	2940 »
1,000000 ռ. բարձր				0,5 »	»	»	5440 »
				բայց վոչ ավելի			25000 »

9. Համապատասխան չկալայով վորոշված վարձատրության չափին հետևյալ հավելումներն են արվում.—

ա) 50-ից մինչև 100 %, յեթե առաջարկն ապատում և իմպորտից կամ լայնացնում է եքսպորտը, եքսպորտ արտադրանքի նոր տեսակներ ստեղծելու, հումքի նոր տեսակներ ոգտագործելու կամ ապրանքների վորակն եքսպորտ կոնդիցիաներին համակերպելու միջոցով. այդ դեպքերում վարձատրությունը 6-8 հոդ. հոդ. վորոշվում է յելնելով իմպորտի տարեկան կրճատման կամ, եքսպորտի լայնացման գումարից. իսկ հավելման չափը 50-ից մինչև 100% սահմանվում է հաշվի առնելով այն, թե ինչպիսի յե արտադրանքի ինքնարժեքի չափն առաջարկը կիրառելուց հետո:

բ) Մինչև 25%, յեթե առաջարկը դեֆիցիտային նյութերի մնացուցակում և տալիս առանց արտադրանքի վորակը վատացնելու:

820—4

գ) 15% չափով, եթե առաջարկը մտցրել է Գյուտարարական կոլեկտիվը (գյուտարարական բրիգադը), ըստ որում այդ հավելումը գյուտարարների ընկերության բջջի հսկողությամբ կոլեկտիվը ծախսում է կոլեկտիվի գյուտարարական հետագա գործունեությունը զարգացնելու համար։

Համապատասխանորեն բարձրացվում է և թույլատրելի վճարման մաքսիմումը։

10. Այն դեպքերում, երբ անհրաժեշտ է լինում գյուտարարական միտքը կենտրոնացնել ժողովրդական տնտեսության առաջատար ճյուղերում (մետալուրգիա, ածուխ, մեքենաշինարարություն, տրանսպորտ) հատուկ առաջադրանքներ կամ «նեղ տեղեր» լուծելու համար, ճյուղային որգանները (տրեստները, կենտրոնական վարչությունները և այլն) կարող են 6–9 հոդ. հոդ. նախատեսված վարձատրության չափը բարձրացնել մինչև 50%։ Համապատասխանորեն ավելացվում է և թույլատրելի վճարման մաքսիմումը։ Վարձատրության նման ավելացման մասին կայացած վորոշումը պետք է նախորոք հրապարակել։

11. Համապատասխան շկալայով տեխնիկական և կազմակերպչական կատարելագործումների համար տրվող վարձատրությունից պահվում է մինչև 75 տոկոս, եթե առաջարկը փոխառված է այլ ձեռնարկությունների փորձից կամ գրականությունից։

Վարձատրության չափը վորոշելիս հաշվի է առնվում և այն դժվարությունը, վորը կապված է յուրաքանչյուր առաջարկը հետաքննելու և ըստ տվյալ ձեռնարկության պայմանների մշակելու հետ։ Եթե առաջարկը վերցված է ՍՈ-ի քարտոտեկայից, կամ տվյալ ձեռնարկության ստացած տեխնիկական գրականությունից, ապա այս հոդվածի համաձայն վարձատրություն տրվում է այն դեպքում միայն, եթե նյութերը ստանալուց մեկ ամսվա ընթացքում ձեռնարկության վարչությունը միջոցներ ձեռք չի առնի դրանք ինքնուրույնաբար ոգտագործելու համար։

12. Գյուտերի, տեխնիկական և կազմակերպչական կատարելագործումների համար վարձատրության ա-

առաջարկներ անող անձանց տրվում և անկախ արտա-
գրության մեջ նրանց ունեցած պաշտոնից: Սակայն
վարչա-տեխնիկական կազմը, կոնստրուկտորները,
ռացիոնալացման որդանները, գիտա-հետազոտական
ինստիտուտների և այլ աշխատողներ իրենց անմիջական
պարտականությունների կատարման կարգով տեխնիկա-
կան և կազմակերպչական կատարելագործումների հա-
մար վարձատրություն ստանում են նվազ չափ: Եթե
առաջարկն առանձին նշանակություն ունի կամ յուրա-
հատուկ է, ապա վարձատրություն տրվում է լրիվ,
ըստ սահմանված չկալայի:

Ձևոնարկության գլխավորի և նրա տեղակալի
պարգևատրման հարցը վորոշում է վերադաս որդանը:

Ծանոթություն.— Այն աշխատողները, վո-
րոնց հանձնարարված է ՍՈ-ի քարտուղեկայից
և ձեռնարկության ստացած գրականությունից
նույն ձեռնարկության համար պիտանի առա-
ջարկներ անելը, այս հրահանգի կարգով վոչ մի
վարձատրություն չեն ստանում:

13. Մինչև 500 ռ. վարձատրություն տրվում է ան-
միջապես, յերբ համապատասխան որդանի առաջարկը
վերջնականապես պիտանի յե ճանաչվում (այսինքն փոր-
ձարկումից հետո, յեթե առաջարկի պիտանի լինելը
պարզելու համար անհրաժեշտ է լինում նման փորձար-
կում):

500 ռ. ավելի բարձր վարձատրություն տրվում է
հետևյալ կարգով.—

Հաստատելիք վարձատրության 25 տոկոսը, բայց 500
ռուբ. վոչ պակաս, տրվում է առաջարկը վերջնականա-
պես պիտանի ճանաչելուց անմիջապես հետո, 25 տոկո-
սը կամ վարձատրության մնացած ամբողջ մասը, յեթե
այդ մասը 25 տոկոսից ավելի քիչ է՝ առաջարկը շահա-
գործման մեջ դնելուն պես, վորը պետք է վավերացնի
հատուկ ակտով, իսկ մնացած մասը՝ առաջարկը շահա-
գործման հանձնելուց 6 ամիս հետո, յեթե վարձատրու-
թյունը 10·000 ռ. ավելի չէ և վոչ ուշ քան շահագործ-
ման առաջին տարին լրացնելուց 3 ամիս հետո— մնա-
ցած բոլոր դեպքերում:

Վարձատրություն ստացողի ցանկությամբ այդպիսին վճարել մաս-մաս (տարին, յեռամսյակը, ամիսը մեկ անգամ), վորի մասին գրավոր համաձայնություն պետք է կնքել:

14. Այն գումարները, վոր վճարվում են մինչև առաջարկը շահագործման մեջ դնելը, (հոդ. 13), վորոշվում են առաջարկի շահագործման պլանի յենթադրվելիք տնտեսումից յելնելով (հոդ. 3): Իսկ այն գումարները, վոր վճարվում են առաջարկը շահագործման մեջ դնելուց հետո, վորոշում են շահագործման ժամանակ փաստորեն հայտնաբերված տնտեսումից յելնելով: Այն դեպքերում, յերբ գյուտի շահագործումից ստացված տնտեսումի չափը յերկրորդ տարում ավելի յե քան առաջին տարում, իսկ յերրորդ տարում ավելի յե քան յերկրորդ տարում՝ լրացուցիչ վճար տրվում է վոչ ուշ քան յուրաքանչյուր տարին լրանալուց յերեք ամսվա ընթացքում:

15. Եթե առաջարկ է արված մի քանի հոգու կողմից միասին, ապա ձեռնարկությունը բաժանվում է նրանց միջև ըստ իրենց համաձայնության: Համաձայնություն չկայանալու դեպքում, հարցը նրանց խնդրանքը, լուծվում է դատարանում կամ հասարակական կազմակերպության կողմից:

16. Լրացուցիչ գյուտի համար վարձատրություն վորոշվում է այն գումարի հաշվով, վոր չափով վոր ավելացել է հիմնական գյուտից ստացված տարեկան տնտեսումը:

17. Եթե հիմնական գյուտն ինքնին պիտանի չի ճանաչվում, սակայն հետագայում լրացուցիչ գյուտի միջոցությամբ պիտանի է ճանաչվում, ապա վարձատրության չափը վորոշվում է հիմնական և լրացուցիչ գյուտերի իրացումից ստացված տարեկան տնտեսումի հաշվով: Ըստ վորում, յեթե լրացուցիչ գյուտն արել է վոչ հիմնական գյուտի հեղինակը, ապա վարձատրության բաշխումը յերկու գյուտարարների միջև վորոշում է այն որգանը, վորը վարձատրության չափն է սահմանում:

8. Գյուտերի համար վարձատրություն վորոշում

և վճարում են արտադրող կամ սպառող ճյուղի գյուտարարության ճյուղային որդանները (միավորումներին, կենտրոնական վարչություններին կից և այլն), 22-րդ հոդվածի համաձայն։

19. Այն դեպքերում, երբ միավորման մեջ մտնող ձեռնարկությունը կամ տրեստը գյուտի ոգտագործմանն անցնում է ավելի շուտ, քան գյուտարարության ճյուղային որդանը (միավորման, կենտրոնական վարչության կից և այլն) վորոշում է այդ առաջարկի պիտանի լինելու հարցը, ապա նա վարձատրում է գյուտարարին տեխնիկական կատարելագործումների մասին յեղած կանոնների համաձայն։

Իսկ յերբ ճյուղային որդանն է հաստատում գյուտի ոգտագործման պլանը, նա միաժամանակ վորոշում է և վարձատրության չափը, յելնելով այն նշանակությունից, վոր ունի գյուտն ամբողջ ճյուղի համար (կամ ամբողջ ժողովրդական տնտեսության համար՝ յեթե գյուտը նշանակություն ունի զանազան ճյուղերի համար)։ Նույն վարձատրության մեջ պետք է հաշվել և այն գումարները, վոր ստացել է գյուտարարը ձեռնարկությունից կամ տրեստից։

20. Տեխնիկական և կազմակերպչական կատարելագործումների համար վարձատրություն տալիս է այն ձեռնարկությունը, վորը կատարելագործումներն ընդունել է։ Իսկ յեթե կատարելագործման ոգտագործման պլանը ճյուղային որդանն է վորոշում, ապա վարձատրության չափը սահմանում և վճարում է նույն այդ որդանը, հաշվելով նաև արդեն իսկ վճարած գումարները։

Ծանոթություն.— Յեթե գյուտարարության կամ ռացիոնալացման առանձին որդաններ գոյություն ունեն, ապա կազմակերպչական կատարելագործումների համար վարձատրելը կարելի յե հանձնարարել ռացիոնալացման որդաններին (արդիֆինպլանների կատարման և գերակատարման նվաճումների, ինչպես նաև գյուտերի, տեխնիկական կատարելագործումների և ռացիոնա-

լացման առաջարկների պարզեւատրման ֆոնդերի վերաբերյալ Կանոնադրության 7-րդ հոդվածի համաձայն)։

21. Վարձատրելը մերժելու կամ վարձատրության չափի և վճարման կարգի վերաբերյալ վարչության կայացրած վորոշումների դեմ բողոքներ կարելի յե տալ հանձնաժողովին, վորը կազմվում է ձեռնարկության մեջ՝ վարչության, պրոֆմիության կամ դյուտարարների Ընկերության և բանվորների, դյուղացիների և կարմիր բանակայինների պատգամավորների տեղական խորհրդի ներկայացուցիչների կազմով, վերջինի նախագահությամբ։ Հանձնաժողովի վորոշումները վերջնական են և բողոքարկման յենթակա չեն։

Այն դեպքերում, յերբ վարձատրության չափը վորոշում է դյուտարարության ճյուղային որդանը (հոդ. հոդ. 18–20), նրա վորոշումները կարելի յե բողոքարկել դյուտերի և տեխնիկական կատարելագործումների վերաբերյալ Կանոնադրության 91-րդ հոդ. համաձայն կազմվող հանձնաժողովին։

Ծանոթություն.— Դյուտի կամ կատարելագործման հեղինակը վարձատրություն ստանալու իր իրավունքը պետք է իրագործի վաղեմության յեռամյա ժամկետի ընթացքում, հաշված այդ վարձատրությունը ստանալու իրավունքի ծագման որվանից (հոդ. 13)։ Հակառակ դեպքում նա այդ իրավունքը կորցնում է։

22. Այն դեպքերում, յերբ առաջարկը մշակելու համար ընդունել է մի որդան, վորը համապատասխան գործվածքներ և պատրաստում, սակայն հիմնական ազդեցությունն ստացվել է՝ դյուտարարված կամ կատարելագործված գործվածքը շահագործելու ժամանակ (որինակ՝ շոդեկառքի կամ տրակտորի նոր կառուցվածքը, վոր վառելիքի խոշոր տնտեսում է տալիս), կամ յեթե առաջարկն ունի միջճյուղային նշանակություն, ապա վարձատրությունն տալիս է պատրաստող որդանը։

Ըստ վորում, տարեկան տնտեսումի այն մասը, վորը տրվում է դյուտարարության ոժանդակման ֆոնդի ոգտին, մտցվում է ապրանքի ինքնարժեքի կալկուլա-

ցիայի մեջ: Նման դեպքերում, առաջարկից ստացված այն տնտեսումի չափը, վորը բացառապես սպառողն է ստանում, վորոշում և պատրաստող որգանը հիմնական սպառողներից մեկի համաձայնությամբ:

Հիշյալ կանոնը չի կիրառվում այն դեպքերում, յերբ առաջարկն ինքնուրույնորեն մշակում են համապատասխան ապրանքների կենտրոնացված սպառողները (Ռազմա-ծովային ժող., Ճան. Հաղ. ժողկոմ., Ջրանտեսության ժողկոմ., Մատ. ժողկոմ., Փոստ-հեռժողկոմ., Հողժողկոմատ, ժողտնտխորհի ճյուղային միավորումները և այլն): Նման դեպքերում ապրանք պատրաստող մարմիններն իրացնում են առաջարկները սպառողի պատվերները կատարելու կարգով, իսկ վերջինն ինքն է վարձատրում առաջարկի հեղինակին և սահմանված մասհանումներ կատարում տնտեսումից՝ իր դյուտարարության ոժանդակման ֆոնդի ոգտին:

23. Աշխատանքի պաշտպանության և տեխնիկական ապահովության համար վարձատրություն վորոշում են՝ դյուտարարության ճյուղային որգաններն աշխատանքի համապատասխան կենտրոնական և տեղական որգանի համաձայնությամբ, իսկ ձեռնարկությունները՝ աշխատանքի տեսչի համաձայնությամբ:

Աշխատանքի և Պաշտպանության Խորհրդին կից
Գյուտ. կոմ. նախագահի տեղակալ՝ ՌՈԶԻՆ

Աշխատանքի և Պաշտպանության Խորհրդին կից
Գյուտ. կոմ. քարտուղար՝ ԻՎԱՆՈՎ

(Հրապարակված է «Вестник Комитета»-ի 1931 թ. հոկտեմբերի 31-ի № 10 և 1932 թ. ապրիլի 30-ի № 3—4-ում):

ՀՐԱՀԱՆԳ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ ԿԻՑ ԳՅՈՒՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ

ԳՅՈՒՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԵՆՏՆԵՐԸ ՀԵՂԻՆԱԿԻ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐՈՎ ՓՈԽԱՐԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Քաղվածք)

ԽՍՀՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1931 թ. ապրիլի 9-ի գյուտերի և տեխնիկական կատարելագործումների կանոնադրությունը ուժի մեջ դնելու վերաբերյալ որոշման 5-րդ կետի և նույն կանոնադրության 5-րդ կետի «ժ» ենթակետի հիման վրա (ԽՍՀՄ Որ. Ժող. 1931 թ. № 21, հոդ. հոդ. 180 և 181) սահմանվում է գյուտարարների ստացած պատենտները հեղինակի վկայականներով փոխարինելու հետևյալ կարգը։

ՀԱՏՎԱԾ 2.

1931 թ. ապրիլի 9-ի՝ գյուտերի և տեխնիկական կատարելագործումների վերաբերյալ որենքի հիման վրա տրված պատենտների փոխարինումը

7. Այն գյուտարարը, որը պատենտ և ստացել գյուտերի և տեխնիկական կատարելագործումների կանոնադրության կարգով, ինչպես և նրա ժառանգները պատենտ տալու որվանից 6 ամսվա ընթացքում կարող են փոխարինել այդպիսին հեղինակի վկայականով, յեթե այդ անձինք վոչ վոքի չեն գիջել պատենտը և լիցենզիա չեն տվել։

Մնացած դեպքերում պատենտի փոխարինումը

թույլատրում է միմիայն ԱՊԽ–ին կից գյուտարարության Կոմիտեն, յեթե այդ առթիվ տրված դիմումը պարտադրում են համապատասխան շահագրգռված ճյուղային որդանը և գյուտարարների Ընկերությունը։

Ծանոթություն.— Պատենտ տալու որը համարվում է այն որը, յերբ հրապարակվել է պատենտ տալու վերաբերյալ վորոշումը (գյուտերի և տեխնիկական կատարելագործումների կանոնադրության 74–րդ հոդ.)։

ՀԱՏՎԱԾ 3.

Իրավունքներն այն անձանց, վորոնք պատենտները փոխարինել են հեղինակի վկայականներով

8. Այն գյուտարարները, վորոնք իրենց ունեցած բոլոր պատենտները փոխարինել են հեղինակի վկայականներով, յեթե նրանց գյուտերը պիտանի յեն ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության համար, վայելում են նույն իրավունքներն ու արտոնությունները, վոր վերապահում է գյուտերի և տեխնիկական կատարելագործումների վերաբերյալ կանոնադրությունը հեղինակի վկայական ունեցող գյուտարարներին։

9. Յեթե գյուտարարը մինչև պատենտը հեղինակի վկայականով փոխարինելը պատենտը զիջել է մի ուրիշին կամ լիցենզիա յե տվել հիմնարկության, ձեռնարկության կամ հանրայնացված սեկտորի կազմակերպությանը, ապա պատենտը փոխարինելուց հետո իրավունքներ զիջելու մասին պայմանագիրն առ վոչինչ է համարվում և գյուտարարության ճյուղային որգանն գյուտի ողտագործման համար վարձատրություն սահմանում է ԱՊԽ–ին կից գյուտարարության Կոմիտեի հրահանգով նախատեսված չափով, հաշվի առնելով նաև ըստ պայմանագրի ստացված գումարները։ Այն գումարները, վոր գյուտարարը ստացել է մինչև պատենտ փոխարինելը, վերադարձման յենթակա չեն։

ՀԱՏՎԱԾ 4.

Պատենտների փոխարեն հեղինակի վկայականներ տալու կարգը

10. ԱՊՆ-ին կից դյուտարարության Կոմիտեյի նորության Բյուրոն փոխարինման վերաբերյալ դիմումը և անհրաժեշտ նյութերը ստանալուց մեկ ամսվա ընթացքում հեղինակի վկայական և տալիս դյուտարարին։ Վկայականի պատճենն ուղարկվում է դյուտարարության որդանին դյուտի ոգտակարությունը վորոշող անհրաժեշտ նյութերի հետ միասին։

11. Պատենտների փոխարեն հեղինակի վկայական տալու մասին նորության Բյուրոն հրապարակում է թերթերում։

12. Պատենտները հեղինակի վկայականներով փոխարինելու վերաբերյալ դիմումներն ու գրագրությունն ազատ են վորևե գանձումներից (դյուտերի և տեխնիկական կատարելագործումների Կանոնադրության 57-րդ հոդ.)։

Գաղտնի դյուտերի պատենտները փոխարինելու մասին դիմումներ տրվում են գաղտնի հայտերի համար սահմանված կարգով։

Կոմիտեյի նախագահի տեղակալ՝ ՌՈԶԻՆ

Կոմիտեյի քարտուղար՝ ԻՎԱՆՈՎ

(Հրապարակված է «Վեստնիկ Կոմիտետա»-յի 1931 թ. հոկտեմբերի 31-ի № 10-ում)։

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՑԵՎ ԿԱԶՄԱԿԱՐՊԶԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԻ ՈՒ ՉԱՓԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԵՐ ՔՆՆՈՂ ԿՈՆՖԼԻԿՏԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Տեխնիկական և կազմակերպչական առաջարկների համար վարձատրություն տալու կարգի և չափի շուրջը ծագող վեճերը քննելու համար ձեռնարկություններում կազմակերպում են կոնֆլիկտային հանձնաժո-

դումներ, որոնք բաղկացած են վարչության, գյուտարարների համամիութենական ընկերության բջիջի կամ պրոֆմիության (ընկերության բջիջ չլինելու դեպքում) ներկայացուցիչներից, բանվորներից, գյուղացիների և կարմիր բանակայիններին պատգամավորների տեղական խորհրդի ներկայացուցչի նախագահությամբ:

2. Ներկայացուցիչներ պատվիրակող կազմակերպությունները նշանակում են մեկ տարի ժամանակով: Մեկնելու, այլ ձեռնարկություն փոխադրվելու, հետ կանչվելու կամ այլ պատճառներով հեռացած անդամի փոխարեն պատվիրակող կազմակերպությունն անմիջապես նշանակում է մեկ ուրիշին:

3. Կոնֆլիկտային հանձնաժողովները քննում են հետևյալ գործերը.—

ա) այն վեճերը, որոնք ծագում են ստանալիք տնտեսումի չափը որոշելու շուրջը առաջարկի պիտանի լինելը վերջնականապես ընդունելուց հետո, ինչպես նաև բողոքներ այդ տնտեսում հաշվելը ճգճգելու առթիվ.

բ) վեճեր վարձատրություն ստանալու իրավունքի, վարձատրության չափի և վճարելու ժամկետների առթիվ:

4. Գործերը հանձնաժողովում հարուցվում են շահագրգռված անձանց և կազմակերպությունների դիմումներով: Յուրաքանչյուր ստացված գործ հանձնաժողովում տոմարագրվում է:

5. Գործերը հանձնաժողովում քննվում են դռնբաց նիստերում և վոչ ուշ, քան ստանալու պահից 10 որվա ընթացքում, ըստ որում, անհրաժեշտության դեպքում, հանձնաժողովը նախորոք պահանջում է լրացուցիչ նյութեր, կանչում է վկաներ և փորձագետներ (ձեռնարկության աշխատողներից կամ դրսից), կատարում է տեղական զննություններ: Վկաներն ու փորձագետները պարտավոր են ներկայանալ հանձնաժողովին և վարչությունն իրավունք չունի դրան արգելք հանդիսանալ:

6. Եթե գործին մասնակցողները (վիճող կողմերը, փորձագետները կամ վկաները) չեն ներկայացել և ան-

հնար է գործը նրանց բացակայությամբ քննելն, ապա գործը հետաձգվում է մինչև հաջորդ նիստը և այս դեպքում հանձնաժողովը կարող է գործը քննել և լուծել յեղած նյութերի հիման վրա:

7. Հանձնաժողովի վճիռներն ընդունվում են ձայների մեծամասնությամբ:

8. Հանձնաժողովի վճիռները վերջնական են և չեն բողոքարկվում:

9. Հանձնաժողովի վճիռների քաղվածքները շահագրգռված անձանց պետք է ուղարկվեն վոչ ուշ, քան նիստից հետո յերեք որվա ընթացքում:

10. Հանձնաժողովի վճիռներն իկատար են ածվում հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետում: Կոնֆլիկտային հանձնաժողովի վորոշումները չկատարելու համար ձեռնարկության դիրեկտորն անձնական պատասխանատվության է յենթարկվում:

11. Ավարտված գործերը հանձնաժողովը հանձնում է Գյուտ. բյուրոյին հետագա պահպանության համար:

12. Հանձնաժողովի նիստերը տեղի յեն ունենում աշխատանքի ժամերից դուրս:

13. Փորձագետների վարձատրությունը և գործավարության հետ կապված ծախսերը ծածկվում են գյուտարարության և ռացիոնալացման ֆոնդի հաշվին:

14. Ձեռնարկությունների կոնֆլիկտային հանձնաժողովների գործունեությունը ղեկավարում և հսկում են վերադաս որգաններին (տրեստներին և միավորումներին) կից կոնֆլիկտային հանձնաժողովները, վորոնք կազմակերպվում են գյուտերի և տեխնիկական կատարելագործումների վերաբերյալ Կանոնադրության 91-րդ հոդ. հիման վրա:

15. Ձեռնարկություններում կոնֆլիկտային հանձնաժողովներ պետք է կազմակերպվեն 1933 թ. հունվարի 1-ից վոչ ուշ:

(Հրապարակված է «Վեստնիկ Կոմիտետա»-յի 1932 թվի հոկտեմբերի 31-ի № 10-ում):

Հաստատված է ԱՊԽ-ին կից Գյուտ. Կոմիտեյի կողմից 1933 թ. սեպտեմբերի 2-ին:

ՎՈՐՈՇՈՒՄ № 17

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՅԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ ԿԻՑ ԳՅՈՒՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ

1934 թվի հուլիսի 28-ին

Ի զարգացումն և ի լրումն Կոմիտեյի կողմից 1932 թվի նոյեմբերի 19-ին ընդունված կոնֆլիկտային հանձնաժողովների վերաբերյալ Կանոնադրության, Կոմիտեն ՎՈՐՈՇՈՒՄ Է.—

1. Կոնֆլիկտային հանձնաժողովները կազմակերպվում են ձեռնարկություններում և տրեստներում բանվորների, գյուղացիների և կարմիր բանակայինների պատգամավորների շրջանային կամ քաղաքային խորհրդի ներկայացուցչի (նախագահ) և կոնֆլիկտ ունեցող որդանի վարչության ու գյուտարարների տեղական ընկերության մեկական ներկայացուցչի կազմով:

Կոնֆլիկտային հանձնաժողովի կազմը մշտական է և ընտրվում է պատվիրակող կազմակերպությունների կողմից 6 ամիս ժամանակով:

Չի թույլատրվում առանձին նիստերում հանձնաժողովի անդամներին այլ անձնավորություններով փոխարինելը:

2. Կոնֆլիկտային հանձնաժողովի ճիշտ կազմակերպման համար պատասխանատու է ձեռնարկության կամ հիմնարկության ղեկավարը: Կոնֆլիկտային հանձնաժողովի սխալ կամ վոչ ժամանակին կազմակերպելու համար ձեռնարկության կամ հիմնարկության ղեկավարը յենթարկվում է կարգապահական տույժի:

3. Կոնֆլիկտային հանձնաժողովներ միջբենական և հանրապետական ժողկոմատներում կազմակերպվում են բանվորների, գյուղացիների և կարմիր բանակայինների պատգամավորների տեղական խորհրդի ներկայացուցչի, (նախագահ) ժողկոմատի ու գյուտարարների ընկերության կենտրոնական խորհրդի (Համամիութենական կամ Հանրապետական) մեկական ներկայացուցչի կազմով:

4. Կոնֆլիկտային հանձնաժողովների կազմի, դի-

մումներ ընդունելու վայրի և ժամանակի մասին պետք է հայտարարված լինի վարչության հրամանով ձեռնարկության կամ հիմնարկության մեջ։

5. Կոնֆլիկտային հանձնաժողովը գործեր քննում է վոչ ուշ քան դիմումն ընդունելու պահից 10 որվա ընթացքում։ Հիշյալ ժամկետում կոնֆլիկտային հանձնաժողովը նախապես ծանոթանում է ներկայացված դիմումի բովանդակությանը կցված նյութերին, անհրաժեշտության դեպքում, դիմում տվողից կամ տնտեսական կազմակերպությունից պահանջում է լրացուցիչ տեղեկություններ և նյութեր, նույն թվում անպայման պահանջում է առաջարկի ոգտակարությունը վերջնականապես ճանաչելու կամ այն պատճառաբանելու վերաբերյալ փաստաթուղթ և անհրաժեշտ դեպքերում հրավիրում է փորձագետներ և վկաներ։

Շենք և դրասենյակային սպասարկումը կոնֆլիկտային հանձնաժողովին տրամադրում են տնտեսական որգանները, վարձատրություն փորձագետներին տրվում է դյուտարարության ոժանդակման ֆոնդից։ Հանձնաժողովի անդամներն իրենց պարտականությունները կատարում են առանց հատուկ վարձատրության։

6. Գործերի քննությունը կոնֆլիկտային հանձնաժողովում կատարվում է աշխատանքի ժամերից դուրս ըստ վորում, դիմում տվողը պետք է անպայման նախապես կանչված լինի. քննությունն ավարտվում է ըստ հնարավորության առաջին նիստում։

Գործի հետաձգումը պետք է պատճառաբանված լինի։ Գործը հետաձգելու դեպքում պետք է միաժամանակ ճիշտ մատնանշվի հաջորդ նիստի որը, վորը պետք է տեղի ունենա վոչ ուշ քան հինգ որվա ընթացքում։

7. Կոնֆլիկտային հանձնաժողովները քննում են հետևյալ դիմումները.—

ա) հեղինակի վարձատրություն ստանալու իրավունքի մասին՝ այն ժամանակ, յերբ առաջարկի ոգտակարությունը վերջնականապես ճանաչված է, նախագծված և հաստատված է պլանը, կամ յերբ արդեն ընկրկվել է առաջարկի արդյունաբերական շահագործումը։

բ) Կիրառված (անցկացված) միջոցառումը տվյալ անձնավորության առաջարկի արդյունք, ինչպես նաև առաջարկությունը տեխնիկական կամ կազմակերպչական կատարելագործում լինելու մասին:

գ) Այն տնտեսման չափի մասին, որը յենթադրվում է ստանալ և որը ստացվում է տվյալ առաջարկից:

դ) Հասանելիք վարձատրության չափի մասին:

յե) Վարձատրությունը վճարելու ժամկետների մասին:

զ) Լրացուցիչ արձակուրդ ստանալու իրավունքի մասին:

ը) Առաջարկը հաջող և արագ դրծադրելու համար սահմանվող վարձատրության մասին:

Ծանոթություն.— Լրացուցիչ արձակուրդ ստանալու իրավունքի վերաբերյալ վեճը քննում է այն ձեռնարկության կամ հիմնարկության կոնֆլիկտային հանձնաժողովը, որն ոգտագործում և առաջարկը: Լրացուցիչ արձակուրդի վերաբերյալ հանձնաժողովի վորոշումը պարտադիր է այն ձեռնարկության համար, որտեղ աշխատում է հեղինակը:

Արձակուրդի դիմաց հատուցում տրվում է այն կազմակերպության հաշվին, որն ոգտագործում է առաջարկը:

8. Կոնֆլիկտային հանձնաժողովները քննության են առնում հետևյալ հարցերը.—

ա) առաջարկի գործադրման ոգտակարության կամ նպատակահարմարության մասին.

բ) առաջարկների գործադրման պլանների մասին.

գ) հեղինակության և համահեղինակության մասին այն դեպքերում՝ յերբ հեղինակները վիճում են իրար հետ.

դ) արտոնություններ ստանալու իրավունքի մասին (բացառությամբ լրացուցիչ արձակուրդի վերաբերյալ իրավունքի):

Տվյալ հոդվածի «ա», «բ» և «գ» կետերում նշված վեճերը լուծվում են վերադաս տնտեսական կազմակեր-

պության կողմից, իսկ «դ» կետում նշվածները՝ դատական որդանների կողմից։

9. Կոնֆլիկտային հանձնաժողովը յուրաքանչյուր քննության առնվող գործի համար կազմում է առանձին արձանագրություն, վորի մեջ նշվում է հանձնաժողովի կազմը, հիշատակելով թե ով և վոր կազմակերպության ներկայացուցիչն է, ներկա յեղող կողմերը, փորձագետներն ու այլ առանձին անձինք և կողմերի վկաների ու փորձագետների հայտարարությունների համառոտ բովանդակությունը։

10. Կոնֆլիկտային հանձնաժողովն իր վորոշումը պետք է ընդունի ամեն մի գործի վերաբերմամբ առանձին։ Վորոշման մեջ պետք է նշված լինեն այն նկատառումները, վորոնց հիման վրա հանձնաժողովն ընդունել է իր վորոշումը։

Վորոշումը պետք է պարունակի իր մեջ պարզ, վորոշ և վերջնական յեզրակացություններ, առանց հանձնարարելու հատուկ խորհրդակցությունների կամ առանձին անձանց վորոշումների լրացուցիչ ճշտումներ կամ ուղղումներ կատարելու։

Վորոշված գումարների չափերը պետք է արտահայտվեն թվերով, կատարման ժամկետները պետք է լինեն ճիշտ սահմանված։

Կոնֆլիկտային հանձնաժողովի վորոշումները ընդունվում են ձայների մեծամասնությամբ։ Հանձնաժողովի անդամի առանձին կարծիքը մտցվում է նիստի արձանագրության մեջ։

11. Կոնֆլիկտային հանձնաժողովի վորոշումն իկատար ածվում է ձեռնարկության կամ հիմնարկության կողմից՝ վորոշման մեջ մատնանշված ժամկետում, վորը չի կարող 10 որից պակաս լինել։ Վորոշումը չկատարելու դեպքում, նրա պատճենը տվյալ առաջարկը պիտանի ճանաչվելու վերաբերյալ համապատասխան տնտեսական որդանի վորոշման պատճենի հետ միասին տրվում է խնդրատուին և վերջինի կողմից ներկայացվում տեղական նոտարական գրասենյակ կամ դատական որդանին, կատարողական մակագրություն կամ դատա-

կան հրաման ստանալու նպատակով՝ վորոշումը հարկադրական կարգով կատարելու համար:

Այն վորոշումը, վորը չի համապատասխանում «Կանոնադրության» և մասնավորապես հակասում է այս վորոշման 1-ին, 8-րդ և 10-րդ հոդվածներին— ի կատար չի ածվում:

12. Վերադաս տնտեսական որգանին (տրեստին, միավորման, ժողկոմատին կամ կոնֆլիկտային հանձնաժողովը պարտավոր է հրահանգներ տալ ստորադաս կազմակերպություններին կամ կոնֆլիկտային հանձնաժողովներին և քննություն առնել ստորադաս կոնֆլիկտային հանձնաժողովների վորոշումների դեմ ներկայացրված բոլոր բողոքները:

Կոնֆլիկտային հանձնաժողովը չի կարող վերանայել իր սեփական վորոշումները առանց վերջինների վերացումը վերադաս կոնֆլիկտային հանձնաժողովի կողմից:

Ծանոթություն.— Կոնֆլիկտային հանձնաժողովը պարտավոր է անհրաժեշտ դեպքերում պարզաբանել կամ ճշտել վորոշումը, չփոխելով այն ըստ էության:

13. Այն դեպքերում, երբ վորոշումն ընդունված է կոնֆլիկտային հանձնաժողովի կողմից սխալ կազմով, վորը չի համապատասխանում այս վորոշման 1-ին և 3-րդ հոդվածների պահանջներին՝ վորոշումն ուժի մեջ չի մտնում և գործը հանձնվում է պատշաճ կազմ ունեցող հանձնաժողովին քննելու համար:

14. Կոնֆլիկտային հանձնաժողովի վորոշումները բողոքարկելու հիմունքներ համարվում են—

ա) Որենքի խախտումը կամ նրա սխալ կիրառումը:

բ) Քննվող գործի վոչ բոլոր հանգամանքների քննությունը:

գ) Գործ քննելն առանց դիմում տվողին ժամանակին կանչելու:

դ) Վորոշման կոնկրետության կապակցությունը:

15. Կոնֆլիկտային հանձնաժողովի վորոշումների դեմ բողոքներ կողմերը տալիս են դեկադային ժամկետում վերադաս կոնֆլիկտային հանձնաժողովին, կցե-

լով վորոշման պատճենը: Բողոքարկելը չի կասեցնում վորոշման կատարումն առանց վերադաս կոնֆլիկտային հանձնաժողովի հատուկ վորոշման:

Միութենական ժողկոմատներին կից կոնֆլիկտային հանձնաժողովների վորոշումների դեմ բողոքներ տրվում են Աշխատանքի և Պաշտպանության Խորհրդին կից Գյուտարարության կոմիտեին:

16. Վերադաս հանձնաժողովը, հսկողության կարգով վերացնելով կոնֆլիկտային հանձնաժողովի վորոշումը, պարտավոր է նշել այն հիմունքները, վորոնց համաձայն բեկանվում է վորոշումը և տալ ղեկավար ցուցմունք գործը ճիշտ լուծվելու համար:

Վճիռը բեկանելու դեպքում գործը վերանայում է կոնֆլիկտային հանձնաժողովը նախկին կազմով, բացառությամբ այն դեպքերի, յերբ բեկանելու պատճառը հանդիսանում է հանձնաժողովի անդամների վորևե մեկի անձնական շահադրգռվածությունը՝ գործի ընթացքի վերաբերմամբ:

Վճիռը կարող է բեկանվել ամբողջովին կամ նրա վորևե մի մասը:

Վերադաս կոնֆլիկտային հանձնաժողովի ցուցումները պարտադիր են այն հանձնաժողովի համար, վորը պետք է վերանայի գործը:

17. Այն դեպքերում, յերբ կոնֆլիկտային հանձնաժողովը գործը քննելու ժամանակ հայտնաբերում է ձրդձրդումներ կամ դյուտերի և առաջարկների վերաբերյալ օրենքների սիստեմատիկ խախտումներ, հանձնաժողովը պարտավոր է այդ մասին հայտնել համապատասխան օրգաններին:

Բոլոր մատնանշված դեպքերի մասին հանձնաժողովը հայտնում է Գյուտարարության Ընկերության Խորհրդին, հարուցված գործի ընթացքի վրա հսկելու համար:

ԱՊԽ-ի Գյուտարարության Կոմիտեյի նախագահ՝

ՄԵԼՆԻՉԱՆՍԿԻ

Կոմիտեյի անդամ՝ ԱՐՈՆՈՎԻՉ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՆՁՆԱՊԵՍ ԿԱՐԵՎՈՐ ԳՅՈՒՏԵՐ ՑԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄՆԵՐ ԸՆՏՐԵԼՈՒ ՑԵՎ ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության համար առանձնապես կարևոր նշանակություն ունեցող գյուտերի և տեխնիկական կատարելագործումների շուտափույթ իրացմանը նպաստելու, դրանց մշակման, առաջ շարժման և տարածման վրա հատուկ հսկողություն սահմանելու նպատակով կոմիտեն կազմակերպում է ամենից կարևորների ընտրությունը, հատուկ հաշվառման յենթարկելու համար:

2. Առանձնապես կարևոր գյուտերի և տեխնիկական կատարելագործումների նախնական ընտրությունը կատարվում է՝ ա) ժողկոմատներում, տրեստներում կամ միավորումներում, բ) գիտա-հետազոտական ինստիտուտներում, գ) այն ձեռնարկություններում, վորոնք անմիջականորեն յենթարկվում են ժողկոմատներին, դ) Գյուտ. Համ. Ընկերության մեջ:

Ծանոթություն.— Այն ինստիտուտներն ու ձեռնարկությունները, վորոնք մտնում են տրեստների կամ միավորումների մեջ, ընտրված գյուտեր ու տեխնիկական կատարելագործումներ ներկայացնում են տրեստների կամ միավորումների միջոցով:

3. Ընտրություն կատարելու համար կազմակերպվում են փորձագիտական հանձնաժողովներ, վորոնց մեջ անպայման մտնում են.— ա) գիտական կամ տեխնիկական աշխատանքի ղեկավարը (գիտական մասի դիրեկտորի տեղակալը, գլխավոր ճարտարապետը, գլխավոր գյուղատնտեսը և այլն), բ) պլանային բաժնի ներկայացուցիչը, գ) փորձագետը, դ) ՃՏՍ-ի բյուրոյի, ե) Վնիտո-յի և գյուտարարների ընկերության բջիջների ներկայացուցիչները:

4. Ընտրություն կատարելու ժամանակ փորձագիտական հանձնաժողովում անպայման քննության են

առնվում.— ա) նկարագրումներ, բ) եսքիզներն ու գծվածքներն այնտեղ, վորտեղ այդ անհրաժեշտ է ըստ գյուտի բնույթի, գ) նորության բյուրոյի վորոշման պատճենը՝ գյուտի համար, դ) փորձաղետների դրական կարծիքը, ե) տվյալներ տնտեսական եֆեկտավորության մասին, զ) նյութեր փորձերի մասին, յեթե այդպիսիք յեղել են:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Նորության բյուրոյի վորոշման բացակայությունը չի կասեցնում հայտնված գյուտերի քննությունը:

5. Նյութերը փորձագիտական հանձնաժողովներում քննության են առնվում վոչ ուշ քան նյութը ստանալու որվանից մեկ ամսվա ընթացքում: Հիշյալ ժամկետը չկատարելու անձնական պատասխանատվությունը դրվում է հիմնարկության ղեկավարի վրա:

6. Ընտրված գյուտերի և տեխնիկական կատարելագործումների առթիվ եքսպերտ հանձնաժողովների վորոշումները, քննված նյութերի հետ միասին (պատճենները) մեկ ղեկտեմբերի ընթացքում ԱՊԽ-ին կից գյուտարարության Կոմիտեին ուղարկվում են հիմնարկության ղեկավարի և գյուտ. բյուրոյի (վորտեղ այդպիսիք գոյություն ունեն) և Գյուտ. Համ. Ընկերության բջջի նախագահի ստորագրությամբ, միաժամանակ իրազեկ դարձնելով.— ա) ժողկոմատին, բ) այն ձեռնարկությանը, վորից գյուտն է ստացվել և գ) այն անձին, վորը գյուտ կամ տեխնիկական կատարելագործում է մտցրել: Գյուտ. Համ. Ընկերության բջիջը տեղեկացնում է իր կենտրոնական խորհրդին ընտրված գյուտերի և տեխնիկական կատարելագործումների մասին:

Եքսպերտ հանձնաժողովի վորոշումից հետո մեկ ամսվա ընթացքում ԱՊԽ-ին կից Կոմիտեին նույն ստորագրություններով ներկայացվում են.—ա) կոնստրուկտիվ մշակման, բ) փորձնական ստուգման, գ) գիտա-հետազոտական աշխատանքի, յեթե այդ անհրաժեշտ է ըստ գործի ընթացքի և դ) գյուտերի կամ կատարելագործումների տարածման լրացուցիչ պլանները, ինչպես նաև ցույց է տրվում այդ գործի համար պատաս-

խանատու անձը, վորը նշանակվում է հիմնարկության հրամանով (հատուկ լիազոր)։

7. Առանձնապես կարևոր գյուտերի և տեխնիկական կատարելագործումների ընտրությունը կատարում է հետևյալ ցուցանիշների հիման վրա.—

ա) Գյուտեր և տեխնիկական կատարելագործումներ, վորոնք կարող են տնտեսում տալ տարեկան 1—1½ միլ. ռուբ. կամ նվազեցնել իմպորտը կամ էլ լայնացնել էքսպորտը տարեկան առնվազը 250000 ռուբ. կամ դեֆիցիտային գունավոր մետաղների տնտեսում տալ նույն գումարով.

բ) Գյուտեր և տեխնիկական կատարելագործումներ աշխատանքի պաշտպանության ասպարեզում, վորոնք վերացնում են վնասակարությունը կամ վտանգը տընտեսության մի ամբողջ ճյուղում.

գ) Խոշոր գյուտեր և տեխնիկական կատարելագործումներ արդյունաբերության առաջատար ճյուղերի արտադրական պրոցեսի բարելավման կամ արտադրանքի վորակի բարձրացման ասպարեզում։

դ) Գյուտեր և տեխնիկական կատարելագործումներ այն պարագաների և ապարատների ասպարեզում, վորոնք բացառիկ խոշոր դիտական նշանակություն ունեն.

ե) Գյուտեր և տեխնիկական կատարելագործումներ առողջապահության և կուլտուր-կենցաղային սպասարկման ասպարեզում, վորոնք հանրապետական նշանակություն ունեն.

զ) Գյուտեր և տեխնիկական կատարելագործումներ, վորոնք հնարավորություն են ստեղծում մշակելու այնպիսի նոր արտադրանք, վորի կարիքը գնահատվում է 5000000 ռուբ. և ավելի բարձր։

8. Կազմակերպությունների ներկայացրած գյուտերն ու տեխնիկական կատարելագործումները Կոմիտեն էքսպերտիզայի յե յենթարկում և ապա թույլատրում է հաշվառման ընդունելու։

9. Ցուրաքանչյուր ամիս տեխնիկական կամ դիտական աշխատանքի ղեկավարի և նշանակված պատաս-

խանատու անձի ստորագրությամբ ԱՊԽ-ին կից Կոմիտեին համառոտ տեղեկություններ են հաղորդվում Կոմիտեի ընտրած դյուտերի կամ տեխնիկական կատարելագործումների իրացման ընթացքի մասին:

10. Հաշվառման ընդունված դյուտերի և տեխնիկական կատարելագործումների մշակման և տարածման վրահսկելու գործին Կոմիտեն մասնակից է անում Գյուտ. Համ. Ընկերությանը, Վնիտոյին, ՃՏՍ-ի բյուրոյին, հասարակական կազմակերպություններին, ձեռնարկությունների արտադրական ակտիվին և առանձին մասնագետների:

11. Ընտրված դյուտը կամ տեխնիկական կատարելագործումն անցկացնելու հետ կապված ծախսերի նախահաշվում հիմնարկությունը կամ ձեռնարկությունը պետք է վարկ նախատեսնի լավագույն աշխատանքների համար պարգևատրելու այն անձանց, որոնք անմիջականորեն մասնակցում են դյուտի կամ կատարելագործման անցկացմանը կամ էլ հսկում են դրան, ներառյալ նաև այդ գործի համար պատասխանատու անձին:

12. Այն անձինք և բրիգադները, որոնց մասնակից է անում Կոմիտեն սիստեմատիկորեն հաշվետվություն են ներկայացնում վերջինին, նրա կողմից սահմանված ժամկետներում:

3. Կոմիտեն իր մոտ հաշվի առնված դյուտերից և տեխնիկական կատարելագործումներից ընտրում է ամենից արժեքավորները, որոնց մասին իրազեկ է դարձնում ԽՍՀՄ ԺՈՂԿՈՄԽՈՐՀին:

(Հրապարակված է «Վեստնիկ Կոմիտետա»-յի 1933 թ. սեպտեմբերի 30-ի № 9-ում):

ՎՈՐՈՇՈՒՄ № 3

ԱՊԽ–ԻՆ ԿԻՑ ԳՅՈՒՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵՏԻ

1932 թ. հոկտեմբերի 2–ին

ԱՑՆ ԱՆՁԱՆՑ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՎՈՐՈՆՔ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՑԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԶԱԿԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄՆԵՐ ԵՆ ԱՌԱՋԱՐԿԵԼ

Ի զարգացումն «Գյուտերի և տեխնիկական կատարելագործումների վերաբերյալ կանոնադրության» (Ռ. Ժող. 1931 թ. № 21 հոդ. 181) 105–րդ հոդվածի ԱՊԽ–ին կից գյուտարարության Կոմիտեն վորոշում է.—

1. Այն աշխատավորները, վորոնք առաջարկել են մեկ կամ մի քանի այնպիսի տեխնիկական կամ կազմակերպչական կատարելագործումներ, վոր 10–ից մինչև 100 հազ. ռուբ. տարեկան տնտեսում են տալիս, իրավունք ունեն իրենց ձեռնարկության կամ հիմնարկության բնակարանային ֆոնդից բնակելի տարածություն ստանալու առաջին հերթին՝ հեղինակի վկայական ստացած գյուտարարներին, ինչպես նաև խոշոր նշանակություն ունեցող տեխնիկական կատարելագործումներ առաջարկած անձանց բավարարելուց հետո:

2. 1–ին հոդ. նշված անձինք, այլ անձանց հետ հավասար պայմաններում գտնվելու դեպքում, նախապատվության իրավունք են վայելում միջնակարգ և բարձրագույն դպրոցներ ընդունվելու ասպարեզում:

3. 1–ին հոդ. նշված վոչ— ապահովագրված անձանց ամեն տեսակի բուժական ոգնություն (հիվանդանոցային, պոլիկլինիկական, ոգնություն—տանը) ցույց է տրվում ապահովագրված բանվորների և նրանց ընտանիքների հետ համահավասար պայմաններով:

4. 1–ին հոդ. նշված անձանց առաջարկին հաջորդող հերթական արձակուրդին, վոր սահմանված է նրանց

համար այլ որենքներով, նույնպես և կոլպայմանագրերով, ավելացնում և լրացուցիչ յերկչարաթյա արձակուրդ։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Արձակուրդ տալիս և այն կազմակերպությունը, վորտեղ հեղինակն և աշխատում, այն կազմակերպության դյուտարարության ֆոնդի հաշվին, վորն ընդունել և, վոր առաջարկը պիտանի յե։

Լրացուցիչ արձակուրդը դրամական հատուցմամբ փոխարինելը չի թույլատրվում։

5. 1-ին հոդ. նշված անձանց յերեխաներն այլ անձանց հետ հավասար պայմաններում դասվելու դեպքում դպրոցներ և մանկատների, դաղութների և այլ հաստատությունների ձրի տեղերն ընդունվելու նախապատվության իրավունք են վայելում։

6. Արտոնություն ստանալու իրավունքի վերաբերյալ վկայականներ տալիս են այն դյուտարարության որգանները, վորոնք ընդունել են տեխնիկական և կազմակերպչական կատարելագործումները։

Կոմիտեի նախագահի տեղակալ՝ ՄԵԼՆԻՉԱՆՍԿԻՑ

Պատասխանատու քարտուղար՝ ԻՎԱՆՈՎ

(Հրապարակված է «Վեստնիկ Կոմիտետա»-յի 1932 թ. ոգոստոսի 31-ի, սեպտեմբերի 30-ի № 8—9 ում)։

ՎՈՐՈՇՈՒՄ № 7

ԱՊԽ-ԻՆ ԿԻՑ ԳՅՈՒՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ

1933 թ. հունիսի 19-ին

ԳՅՈՒՏԱՐԱՐՆԵՐԻՆ ՑԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄՆԵՐԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1931 թ. ապրիլի 9-ի դյուտերի և տեխնիկական կատարելագործումների վերաբերյալ Կանոնադրության (Որ. Ժող. 1931 թ., № 21, հոդ. 181) 100 և 105-րդ հոդ. համաձայն և ի փոփոխումն ու լրացումն ԱՊԽ-ին կից դյու-

տարարության կոմիտեի նախագահության 1932 թ. հունիսի 29-ի) և սեպտեմբերի 2-ի վորոշումների Ս.ՊԽ-ին կից Գյուտարարության Կոմիտեն վորոշում է.—

1. Պիտանի ճանաչված բոլոր գյուտերի հեղինակներին լրացուցիչ յերկշաբաթյա արձակուրդ է տրվում մեկ անգամ այն գյուտերի համար, վորոնք տվյալ աշխատանքային տարում պիտանի յեն ճանաչված: Հավասարապես և նույն կարգով արձակուրդ տրվում է մեկ կամ մի քանի այնպիսի տեխնիկական կամ կազմակերպչական կատարելագործումների հեղինակներին, վորոնք վոչ պակաս քան 10000 ռ. տարեկան տնտեսում են տալիս, յեթե մտցրել է արտադրական բանվորը և վոչ պակաս քան 25000 ռ. յեթե մտցրել է ճարտարագիտական-տեխնիկական, վարչական-տեխնիկական կամ գիտական աշխատողը:

2. Այն գյուտերի և տեխնիկական կատարելագործումների հեղինակներին, վորոնք Ս.ՊԽ-ին կից Գյուտարարության Կոմիտեի կողմից վորպես առանձնահատուկ նշանակություն ունեցող են ճանաչվել, լրացուցիչ յերկշաբաթյա արձակուրդը տրվում է յերեք տարվա ընթացքում:

Այս հոդվածում նշված գյուտի կամ կատարելագործման ոգտագործումը դադարեցնելու դեպքում լրացուցիչ արձակուրդ այլևս չի տրվում:

3. Այն անձինք, վորոնք փոխառած կատարելագործումներ (մեկ կամ մի քանի) են մտցրել լրացուցիչ յերկշաբաթյա արձակուրդ ստանում են այն դեպքում միայն, յեթե կատարելագործումները կիրառվում են և տալիս են վոչ պակաս քան 50·000 ռ. տարեկան տնտեսում:

Ծանոթություն.— Այն դեպքում, յերբ միևնույն անձն ինքնուրույն և փոխառած կատարելագործումներ է մտցնում, նրան արձակուրդ տրվում է կամ ինքնուրույն կամ էլ փոխառած կատարելագործումների համար: Այս դեպքում տնտեսում գումարելը չի թույլատրվում:

4. Յեթե լրացուցիչ յերկշաբաթյա արձակուրդ տըր-

վում է գյուտարարների ընկերության մոտ տոմարագրված բրիգադի գյուտերի և կատարելագործումների համար, ապա այդ արձակուրդը բրիգադի վորոշմամբ բաժանվում է նրա անդամների միջև:

Այն բրիգադը, վորի անդամների մեծամասնությունն արտադրական բանվորներ են, իր մոցրած գյուտերի և կատարելագործումների համար յերկշաբաթյա արձակուրդ ստանում է յուրաքանչյուր 10000 ռ. տարեկան տնտեսումի համար, իսկ այն բրիգադը, վորի անդամների մեծամասնությունը ճարտարագիտական-տեխնիկական, վարչական-տեխնիկական կամ գիտական աշխատողներ են, իր մոցրած գյուտերի և կատարելագործումների համար յերկշաբաթյա արձակուրդ ստանում է յուրաքանչյուր 25000 ռ. տարեկան տնտեսումի համար:

Ծանոթություն.— Մեկ անձին յերկու շաբաթից ավելի լրացուցիչ արձակուրդ տալը չի թույլատրվում:

5. Իսկ յեթե բրիգադը կամ համահեղինակները այնպիսի գյուտ կամ կատարելագործում են առաջարկել, վորն ԱՊՆ-ին կից Գյուտարարության Կոմիտեի կողմից վորպես խիստ կարևոր է ճանաչվել, ապա բրիգադի անդամներից կամ համահեղինակներից յուրաքանչյուրն արձակուրդ է ստանում այս վորոշման 2-րդ հոդ. համաձայն:

6. Կոմիտեի 1932 թ. հոկտեմբերի 2-ի վորոշմամբ նախատեսված արտոնությունները տարածվում են տեխնիկական և կազմակերպչական կատարելագործումների այն հեղինակների վրա, վորոնց առաջարկները պիտանի յեն ճանաչված վորոշումը հրատարակելուց այսինքն՝ 1932 թ. հոկտեմբերի 2-ից հետո:

7. Այս վորոշումն ուժի մեջ է մտնում 1933 թ. հուլիսի 1-ից:

Կոմիտեյի նախագահի տեղակալ՝ ՄԵԼՆԻՉԱՆՍԿԻՑ

Կոմիտեյի անդամ՝ ԱՐՈՆՈՎԻՉ

(Հրապարակված է «Վեստնիկ Կոմիտետա»-ի 1932 թ. հունիսի 30-ի № 6-ում):

ՎՈՐՈՇՈՒՄ № 8

ԱՊԽ-ԻՆ ԿԻՑ ԳՑՈՒՏԱՐԱՐՈՒԹՑԱՆ ԿՈՄԻՏԵՑԻ

1933 թ. հունիսի 19-ին

ԻՆՉ ԿԱՐԳՈՎ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ ՊԵՏՔ Է ՄԱՍՆԱԿԻՑ ԱՐՎԵՆ ԻՐԵՆՑ ԳՑՈՒՏԵՐԻ ՑԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՈՒ ՓՈՐՁԱՐԿՄԱՆԸ

1. Այն բոլոր դեպքերում, յերբ հեղինակները մասնակից են արվում գյուտի կամ կատարելագործման մշակմանն ու փորձարկմանը, մշակում կամ փորձարկում կատարող տնտեսական կազմակերպությունը վորոշում է աշխատանքի ծավալը, ժամանակը և վայրը, ներկայանալու ժամանակը և աշխատանքի հաշվառման կարգն ու վարձատրման պայմանները:

2. Այն հեղինակը, վորը վարձու յե աշխատում և մասնակից է արված իր գյուտի կամ տեխնիկական կատարելագործման մշակման գործին, պահպանում է հիմնական աշխատանքի վայրում իր ունեցած պաշտոնը, մշակմանը մասնակցելու ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում: Յեթե մշակումը հեղինակը կատարում է աշխատանքի ժամանակ, ապա նրան վճարվող աշխատավարձը պետք է համապատասխանի այն աշխատավարձին, վորը սահմանված է առաջարկ մշակող ձեռնարկության մեջ հավասար վորակավորում ունեցող աշխատողների համար, բայց ավելի ցածր չպետք է լինի, քան հեղինակի այն նախկին միջին վաստակը, վոր նա ստացել է իր հիմնական աշխատանքի վայրում:

3. Այն հեղինակները, վորոնք վարձու աշխատանք չեն կատարում (ուսանողներ, թոշակառուներ, տնայնագործներ և այլն) և մասնակից են արված իրենց գյուտերի և տեխնիկական կատարելագործումների մշակման գործին, իրենց առաջարկների մշակման և փորձարկման աշխատանքի համար վարձատրություն ստանում են վոչ պակաս քան տվյալ ձեռնարկության համապատասխան վորակավորում ունեցող աշխատողների աշխատավարձը:

4. Վարձու աշխատանքի վայրից հեղինակը հրավիրվում է իր գյուտի և տեխնիկական կատարելագործումի մշակմանն ու փորձարկմանը մասնակցելու համար մշակում կատարող տնտեսական կազմակերպության և հեղինակի հիմնական աշխատանքի վայրի վարչության համաձայնությամբ:

Տնտեսական կազմակերպությունների միջև համաձայնություն չկայանալու դեպքում գործուղման հարցը վորոշում է տրեստի ղեկավարը, յեթե յերկու կազմակերպությունն էլ մի ճյուղի յեն պատկանում, կամ ժողկոմատը՝ յեթե դրանք տարբեր ճյուղերի յեն վերաբերում նույն ժողկոմատի սահմաններում:

Յեթե հեղինակի գործուղման շուրջը տարաձայնություններ են առաջ գալիս ժողկոմատների միջև, ապա այդպիսիները լուծում է ԱՊԽ-ին կից Գյուտարարության Կոմիտեն:

5. Գյուտ կամ տեխնիկական կատարելագործում մշակելու համար հեղինակն իր հիմնական աշխատանքի վայրից կարող է գործուղվել վոչ ավելի քան 6 ամիս ժամանակով:

Առանձին դեպքերում այդ 6 ամսյա ժամկետը կարելի յե յերկարացնել միմիայն ԱՊԽ-ին կից գյուտարարության Կոմիտեի թույլտվությամբ:

6. Այն հեղինակներին, վորոնք առաջարկ մշակելու համար հրավիրվում են մի այլ վայր, վճարվում է ճանապարհածախսը, որապահիկը և բնակարանային ծախսը գործուղումների վերաբերյալ կանոնների համաձայն:

7. Հեղինակի մասնակցությունն իր առաջարկի մշակմանն ու փորձարկմանը, այս վորոշման 1-ին հոդվածի պահանջը կատարելու դեպքում, բոլոր դեպքերում հավասարեցվում է վարձու աշխատանքին, նույն թվում և արձակուրդների, ներքին կանոնադրության, հեղինակների և նրանց խնամքի տակ յեղած անձանց բանվորական մատակարարման, սոցապահովագրության վերաբերմամբ:

8. Առաջարկների մշակմանը մասնակցող հեղինակ-

ների բոլոր աշխատանքային վեճերը քննվում են աշխատանքային կոնֆլիկտների քննության ընդհանուր կարգով, ձեռնարկության կամ հիմնարկության աշխատողների հետ համահավասար հիմունքներով:

9. Առաջարկների մշակմանը հեղինակին մասնակից անելու հետ կապված ծախսերը կատարվում են գյուտ կամ տեխնիկական կատարելագործում մշակող կազմակերպության գյուտարարության ոժանդակման ֆոնդի հաշվին:

10. Այս վորոշումն ուժի մեջ է մտնում 1933 թ. հուլիսի 1-ից:

Կոմիտեյի նախագահի տեղակալ՝ ՄԵԼՆԻՉԱՆՍԿԻՑ

Կոմիտեյի անդամ՝ ԱՐՈՆՈՎԻՉ

(Հրապարակված է «Վեստնիկ Կոմիտետա»-յի 1833 թ., հուլիսի 31-ի, № 7-ում):

ՎՈՐՈՇՈՒՄ № 4

ԱՊԽ-ԻՆ ԿԻՑ ԳՅՈՒՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ

1932 թ. նոյեմբերի 19-ին.

ՀԵՂԻՆԱԿԻ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ ՅԵՎ ԳՅՈՒՏԵՐԻ ՊԱՏԵՆՏՆԵՐ ՏԱԼՈՒ ԴԵՄ ԲՈՂՈՔԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ.

1. Տրված հեղինակի վկայականը կամ պատենտն անվավեր ճանաչելու վերաբերյալ դիմումները (գյուտերի վերաբերյալ Կանոնադրության 53 և 66-րդ հոդ. հոդ.) ներկայացվում են ԱՊԽ-ին կից Գյուտարարության Կոմիտեյի բողոքներ քննող խորհրդին:

2. Դիմումի մեջ պետք է ցույց տրվեն գյուտի նորությունն արգելավորող նյութեր: Եթե այդ նյութերը պատենտային փաստաթղթեր կամ հանրամատչելի տեխնիկական աշխատություններ չեն, ապա դիմումին պետք է կցվեն համապատասխան ֆոտոպատճեններ կամ պատճեններ: Իսկ եթե դիմումի մեջ հիշատակվում է, վոր գյուտն արդեն կիրառվում է կամ, բացի տպագիր

աշխատության մեջ նկարագրելուց, նաև հրապարակված է ի գիտություն հանրության այլ ձևով, ապա նման դեպքերում արատավորող նյութը պետք է ապացուցել ներկայացնելով վավերացված տեղեկանքները։

3. Դիմումն ու բոլոր կցված նյութերը պետք է տալ 3 որինակից։

Կոմիտեյի նախագահի տեղակալ՝ ՄԵԼՆԻՉԱՆՍԿԻՑ

Պատ. քարտուղարի պաշտոնակատար՝ ՆԵՉԱՑԵՎ

(Հրապարակված է՝ «Վեստնիկ Կոմիտետա»-յի 1932 թ. նոյեմբերի 30-ի, № 11-ում)։

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

ԱՊԽ-ԻՆ ԿԻՑ ԳՅՈՒՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ

(Քաղվածքներ, ԱՊԽ-ին կից Գյուտարարության Կոմիտեյի նախագահության 1932 թ. հունիսի 29-ի նիստի № 14 և նույն թվի ոգոստոսի 2-ի նիստի № 16 արձանագրություններից)

ԼՍԵՑԻՆ՝

Գյուտարարներին և հեղինակներին գյուտերի և տեխնիկական կատարելագործումների վերաբերյալ 1931 թ. ապրիլի 9-ի որենքի 100-րդ հոդ. նախատեսնված արձակուրդը հատկացնելու կարգի մասին։

ՎՈՐՈՇԵՑԻՆ

Պարզաբանել, վոր գյուտերի և տեխնիկական կատարելագործումների վերաբերյալ 1931 թ. ապրիլի 9-ի որենքի 100-րդ հոդ. նախատեսնված լրացուցիչ յերկշաբաթյա արձակուրդը գյուտարարին կամ կատարելագործման հեղինակին տրվում է անկախ այն արձակուրդից, վորը նրա համար սահմանված է այլ հիմունքներով, ինչպես նաև կոլեկտիվ պայմանագրով։

ԼՍԵՑԻՆ՝

Պատենտները հեղինակի վկայականներով փոխարինելիս գյուտարարների վարձատրությունը հաշվելու համար գյուտի իրագործման ժամկետ վորոշելու կարգի մասին։

ՎՈՐՈՇԵՑԻՆ

Պարզաբանել, վոր պատենտները հեղինակի վկայականներով փոխարինելիս գյուտարարների վարձատրությունը վորոշելու համար գյուտի իրագործման սահմանված յերեք տարվա ժամկետը պետք է հաշվել գյուտի արդյունաբերական շահագործության սկզբից, անկախ այն հանգամանքից թե յերբ է ստացված պատենտը և հեղինակի վկայականը:

Ըստ վորում, տնտեսական չափը վորոշելն անհնար լինելու դեպքում, վարձատրության հաշվարկը պետք է կատարել Կոմիտեյի հրահանգի 5-րդ հոդ. համաձայն:

ԼՍԵՑԻՆ՝

Կոմիտեյի հրահանգից առաջ պիտանի ճանաչված առաջարկների վերաբերմամբ նույն հրահանգը կիրառելու մասին:

ՎՈՐՈՇԵՑԻՆ

Պարզաբանել, վոր այն վեճերը, վորոնք առաջ են յեկել մինչև Կոմիտեյի 1931 թ. հոկտեմբերի 31-ի հրահանգի հրապարակումը պիտանի ճանաչված առաջարկների համար տրվելիք վարձատրության հաշվարկի շուրջը, պետք է լուծվեն նախկին որենքների հիման վրա, յեթե հեղինակները ստացել են կամ նրանց առաջարկվել է վարձատրություն և Կոմիտեյի հրահանգի հիման վրա՝ յեթե հեղինակներին ապորինի կերպով վարձատրություն չի տրվել:

Այն անձանց վարձատրությունը, վորոնց հետ հեղինակի վկայական ստանալու կապակցությամբ, հաշվարկն ավարտված չի յեղել, կարգավորվում է Կոմիտեյի 1931 թ. հոկտեմբերի 31-ի հրահանգով:

(Հրապարակված է «Վեստնիկ Կոմիտետա»-յի 1932 թ. ոգոստոսի 31-ի, սեպտեմբերի 30-ի, № 8—9-ում):

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

ԽՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ 43-ՐԴ ՊԼԵՆՈՒՄԻ

1933 թ. մայիսի 22-ին.

ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԳՅՈՒՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՅՈՒՅԱԲԵՐՎԱԾ ԲՅՈՒՐՈԿՐԱՏԻԶՄԻ, ՔԱՇՔՇՈՒԿԻ ՅԵՎ ՎՆԱՍԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԴԱՏԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՅԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դաշնակից հանրապետությունների գերագույն դատարաններին

Համ Կ(բ)Կ Կենտկոմի 1930 թ. հոկտեմբերի 26-ի և ԽՍՀՄ Ժողկոմխորհի ու Համ Կ(բ)Կ Կենտկոմի 1931 ապրիլի 9-ի վորոշումները նշել են, վոր անհրաժեշտ է պայքարել բյուրոկրատիզմի, քաշքշուկի և վնասարարության դեմ մասսայական գյուտարարության ընդգրկումում և գյուտարարության վերաբերյալ վորոշումը չկատարողներին տույժի յենթարկել և մինչև իսկ դատի տալ։

Փորձը ցույց է տալիս, վոր մասսայական գյուտարարության ընդգրկումում մի շարք նվաճումների կողքին դեռևս շարունակում է ծաղկել բյուրոկրատիզմը քաշքշուկը և տեղ-տեղ էլ վնասարարությունը։

ԱՊԽ-ին կից Գյուտարարության Կոմիտեն տեղեկացրել է ԽՍՀՄ Գերագույն Դատարանին, վոր դատական-դատախազական որգաններն այնքան էլ հստակ ձևով և արագ չեն արձագանքում իրենց մոտ հարուցված բողոքներին, ինչպես նաև թերթերում յեղած թղթակցություններին, վորոնք վերաբերում են տնտեսական մարմինների՝ գյուտարարության ասպարիզում ցույց տված չարաբկությունների, քաշքշուկին և գյուտերն ու բանվորական առաջարկներն մոռացության տալուն։

Փորձը նույնպես ցույց է տալիս, վոր դատական-դատախազական որգանների գործունեության մեջ տրվյալ հարցի վերաբերմամբ դեռևս ճիշտ չեն սահմանված հանցակազմի հատկանիշները մասսայական գյուտա-

բարության ընագավառում, դեռևս բավարար չափով չեն ծանոթացել դատական–դատախազական որգանները գյուտարարության վերաբերող որենքներին և ԱՊԽ–ին կից Կոմիտեյի հրահանգներին:

Կան տվյալներ այն մասին, վոր դատական որգանները շատ հաճախ քննում են հեղինակի վկայականներ ունեցող գյուտարարների վեճերը վարձատրություն ստանալու մասին, ինչ վոր ապորինի յե, քանի վոր այդ գործերը պետք է քննեն կոնֆլիկտային հանձնաժողովները (գյուտերի վերաբերյալ կանոնադրության 91–րդ հոդ.):

Դաշնակից հանրապետությունների գերագույն դատարանները, բայց ՌՍՖԽՀ Գերագույն Դատարանից, ըոլորովին գեկավար ցուցումներ չեն տվել այն մասին, թե ինչպես պետք է կիրառել գյուտերի և կատարելագործումների վերաբերյալ Կանոնադրությունը: Բայց և ՌՍՖԽՀ Գերագույն Դատարանի 1932 թ. նոյեմբերի 5–ի պարզաբանումն ել ունի խոշոր թերություններ, այն է՝ ա) դատարանին ընդհատյա գործերի ցուցակի մեջ չեն մտցված այն վեճերը, վորոնք վերաբերվում են առաջարկների հեղինակությանը՝ վոչ միայն պատենտկամ հեղինակի վկայական ստանալու ժամանակից, այլև հայտ ներկայացնելու ժամանակից (Կանոնադրության 54 և 55–րդ հոդ. հոդ.), չեն նախատեսված տեխնիկական և կազմակերպչական առաջարկների հեղինակությանը վերաբերող վեճերը (Կանոնադրության 105–րդ հոդ.):

Դատական որգանները գյուտարարությանը վերաբերող գործերին մասնակից չեն անում վորպես եքսպերտների և ժողատենակալների գյուտարարների ընկերության ներկայացուցիչներին և գյուտարարության կոմիտեներին, չեն ուղարկում ի գիտություն իրենց վորոշումներն ու դատավճիռները:

Վերոհիշյալի հիման վրա ԽՍՀՄ Գերագույն Դատարանի պլենումը պարզաբանում է դաշնակից հանրապետությունների գերագույն դատարաններին, վոր անհրաժեշտ և ամենալուրջ ուշադրություն դարձնել սոցիա-

320—6

լիստական շինարարության հիշյալ ընագավառի՝ մասսայական գյուտարարության վրա։ Գյուտարարության գործում ցուցաբերված քաջքշուկի, բյուրոկրատիզմի, հանցավոր-անփույթ վերաբերմունքի, կուսակցության դիրեկտիվները չկատարելու համար, հանցավորները պետք է պատասխանատվության յենթարկվեն. Ֆր. Որ. համապատասխան հոդվածներով, վորպես պաշտոնական հանցանք գործողներ։ Վնասարարության հայտնաբերելու դեպքում պետք է պատասխանատվության յենթարկել հակահեղափոխական հանցագործությունները վերաբերող համապատասխան հոդվածներով (սաբոտաժ, տնտեսական հակահեղափոխություն), գյուտերի վերաբերյալ Կանոնադրության համապատասխան հոդվածները (ներածական որենքի 6-րդ հոդ. և Կանոնադրության 9 և 46-րդ հոդ. հոդ.) խախտելու համար դաշնակից հանրապետությունների Ֆր. Որ. համապատասխան հոդվածներով։

Դատական-դատախազական որգանները պետք է լրջորեն լծվեն այն գործին, շտկված ձևով և արագ արձագանքեն իրենց մոտ հարուցված այն բողոքներին— ինչպես նաև թերթերում զետեղված թղթակցություններին, վորոնք վերաբերում են այդ ընագավառում տեղի ունեցած չարարկություններին, քաջքշուկին, գյուտերն ու բանվորական առաջարկները մոռացության տալուն։

Դատական-դատախազական որգաններն առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնեն այն հանցագործությունների վրա, վորոնք կապված են գյուտերի ոգտակարությանը վերաբերող վորոշումները ձգձգելու հետ (Կանոնադրության 20-րդ հոդ.) մտցված առաջարկների նախնական քննությունը ձգձգելու վրա, առաջարկների մշակման եքսպերտներ նշանակելու և առաջարկներ փորձարկելու գործը ձգձգելու վրա, առաջարկները մի կազմակերպությունից մյուսը անհիմն կերպով փոխադրելու վրա, յեզրակացություններ տալը ձգձգելու վրա, պիտանի ճանաչված առաջարկները ժամանակին կյանքում չկիրառելու (Կանոնադրության

35–րդ հոդ.), ինչպես նաև առաջարկներն անպետք, վոչ պլանի լինելու պատճառով անհիմն կերպով քննության չընդունելու վրա և այլն:

Միաժամանակ պետք է ուշադրություն դարձնել գյուտարարության ոժանդակման ֆոնդերի սխալ ծախսման, գյուտի հեղինակին չարամտորեն վարձատրություն չվճարելու վրա և այլն:

Պետք է դատական որդաններին ընդհատությունից դուրս թողնել հեղինակի վկայականի արժանացած պլանի գյուտերի և տեխնիկական–կազմակերպչական կատարելագործումների համար հեղինակին տրվելիք վարձատրությանը վերաբերող վեճերը, քանի վոր նման գործեր յենթակա յեն կոնֆլիկտային հանձնաժողովների քննության: Գյուտարարությանը վերաբերող գործեր քննելիս պետք է մասնակից անել վորպես եքսպերտների և ժողատենակալների գյուտարարների ընկերության ներկայացուցիչներին: Կարևոր է նաև ԱՊԽ–ին կից Գյուտարարության Կոմիտեին և դաշնակից հանրապետությունների գյուտարարության կոմիտեներին գյուտարարության գործերի առթիվ կայացված դատական վորոշումների և վճիռների պատճեններն ուղարկելը, ինֆորմացիայի և հասարակական ուշադրությունը մոբիլիզացիայի յենթարկելու համար:

Գյուտարարության հետ կապված դատական գործերը պետք է քննվեն ավելի արագ: Կարևոր դեպքերում նպատակահարմար է դատական պրոցեսները գործարաններում կազմակերպելը, բանվորական հասարակայնությանը մոբիլիզացիայի յենթարկելու համար: Մասսայական սոցիալիստական գյուտարարությունը խոշոր նշանակություն ունի սոցիալիստական շինարարության գործում:

ԽՍՀՄ Գերագույն Դատարանի նախագահ՝

Ա. ՎԻՆՈԿՈՒՐՈՎ

Ավ. քարտուղար՝ Գ. ՍՄՈԼԻՆՍԿԻՑ

(Հրապարակված է՝ «Սով. Ցուրստ.» 1933 թ. № 12–ում):

ՎՈՐՈՇՈՒՄ

ԽՍՀՄ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՏԻ ՑԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

ԱՐԴՅԻՆՊԼԱՆԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՑԵՎ ԳԵՐԱԿԱՏԱՐՄԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱՑԵՎ ԳՑՈՒՏԵՐԻ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄՆԵՐԻ ՑԵՎ ՌԱՑԻՈՆԱԼԻԶԱՏՈՐԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ՖՈՆԴԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ցերկրի ինդուստրացման, սոցիալիզմի կառուցման բոլշևիկյան տեմպերի համար պայքարելու գործում, աշխատավորության ավելի ու ավելի խոշոր մասսաներ են ընդգրկվում սոցիալիստական մրցման և հարվածայնության մեջ: Բանվորական դյուտարարությունը մասսայական բնույթ և ընդունում:

Մի շարք ձեռնարկություններ գերակատարում են արդիֆինպլանները, ժամկետից առաջ ավարտում են հնգամյակը: Այդ պայմաններին նպաստելու տեսակետից խոշոր նշանակություն ունի սոցիալիստական շինարարության ֆրոնտում աչքի ընկնող լավագույն հարվածայիններին, դյուտարարներին, գիտական և վարչական—տեխնիկական աշխատողներին պարգևատրելը:

Փորձը բանվորների և վարչական—տեխնիկական աշխատողների քաջալերման ու պարգևատրման տարբեր ձևերն և առաջադրում, այն է՝ պարգևատրում հատուկ ֆոնդերից դյուտերի և սոցմրցման ու հարվածայնության հիման վրա արդիֆինպլանի կատարման բնագավառում ձեռք բերած նվաճումների համար, պարգևատրում վառելիքի և էլեկտրոէներգիայի տնտեսման համար՝ նույն տնտեսումի հաշվին, պարգևատրում արտադրանքի վորակը բարձրացնելու համար և այլն: Գործավարձային և գործավարձային—պրեմիալ վարձատրության հետ միասին կիրառվում է պետական և կոոպերատիվ առևտրական ձեռնարկությունների աշխատողների խրախուսական վարձատրությունը, տոկոսներով շրջանառությունից:

Հատուկ ֆոնդերի հաշվին տրվող պարգևատրումը լայնացնելու և կանոնավորելու նպատակով ԽՍՀՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը ՎՈՐՈՇՈՒՄ ԵՆ.—

1. Հատատել արդիֆինալանների կատարման և դերակատարման նվաճումների, ինչպես նաև գյուտերի, տեխնիկական կատարելագործումների և ռացիոնալիզատորական առաջարկների պարգևատրման ֆոնդերի վերաբերյալ կանոնադրությունը:

2. Հրահանգներ հիշյալ կանոնադրության կիրառման կարգի մասին հրապարակում են ԽՍՀՄ համապատասխան ժողկոմատները և այլ կենտրոնական որգանները, ԽՍՀՄ Ցենտրոսայուզը, Վսեկոպրոմսավետը ՀԱՄԿՆ-ի համաձայնությամբ, իսկ դաշնակից հանրապետությունների վոչ միացյալ ժողկոմատները՝ պրոֆմիությունների հանրապետական խորհուրդների համաձայնությամբ:

3. Կոլտնտեսային-կոոպերատիվ սիստեմի և գյուղատնտեսական կոոպերացիայի կազմակերպություններին և ձեռնարկություններին կից գյուտարարությանն ոժանդակելու ֆոնդեր, ինչպես նաև ստեղծման և հարվածայնության հիման վրա ձեռք բերած նվաճումները պարգևատրելու ֆոնդեր կազմվում են ԽՍՀՄ Հողժողկոմատի, ԽՍՀՄ Կոլտնտկենտրոնի և գյուղատնտեսական կոոպերացիայի համապատասխան կենտրոնների՝ ՀԱՄԿՆ-ի համաձայնությամբ սահմանված կարգով:

4. Հիշյալ կանոնադրությունն ուժի մեջ դնելու կապակցությամբ վերացնել.—

ա) ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1927 թ. մարտի 7-ի՝ պետական ձեռնարկությունների և պետական կապիտալի գերակշռող մասնակցությամբ ակցիոներ ընկերությունների (փայատիրական ընկերություններ) Որ. Ժող. 1927 թ. № 16, հոդ. 167 և № 64, հոդ. 643) ղեկավար կազմին պատկանող անձանց խրախուսական վարձատրություն տալու կարգի մասին վորոշումը և տրեստների ու տորգերի վերաբերյալ որենքներում յեղած համապատասխան ցուցումներ:

բ) ԽՍՀՄ ԺողԿոմխորհի 1927 թ. հունիսի 4-ի՝ պետական և կոոպերատիվ ձեռնարկությունների, ինչպես նաև պետական ու կոոպերատիվ կապիտալի դերակշռող մասնակցությամբ ակցիոներ ընկերությունների (փայատիրական ընկերություններ) առևտրական ծառայողների խրախուսական վարձատրության մասին վորոշումը (Ռ. Ժող. 1927 թ. № 34, հոդ. 337 և 1928 թ. № 60, հոդ. 544, կետ 7):

գ) ԽՍՀՄ ԺողԿոմխորհի 1929 թ. հունվարի 4-ի՝ պետական հիմնարկությունների և ձեռնարկությունների ապարատի աշխատանքի և կառուցվածքի ռացիոնալացմանը նպաստող առաջարկները պարզևատրելու մասին վորոշումը (Ռ. Ժող. 1929 թ. № 5, հոդ. 48):

դ) ԽՍՀՄ ԺողԿոմխորհի 1929 թ. սեպտեմբերի 11-ի՝ բանվորներին և ծառայողներին սոցիալիստական մրցման կարգով ձեռք բերված բարելավումների համար պարգևատրելու մասին վորոշումը (Ռ. Ժող. 1929 թ., № 58, հոդ. 541):

ե) ԽՍՀՄ ԺողԿոմխորհի 1930 թ. հունվարի 12-ի՝ առևտրական և դյուղատնտեսական ձեռնարկությունների աշխատողներին, սոցիալիստական մրցման կարգով ձեռք բերված բարելավումների համար պարգևատրելու մասին վորոշումը (Ռ. Ժող. 1930 թ., № 6, հոդ. 71):

ԽՍՀՄ Կենտգործկոմի նախագահ՝ Մ. ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀՄ ԺողԿոմխորհի նախագահ՝
Վ. ՄՈԼՈՏՈՎ (ՍԿՐՅԱԲԻՆ)

ԽՍՀՄ Կենտգործկոմի քարտուղար՝ Ա. ՍԵՆԻԿԻՉԵ
1931 թ. ոգոստոսի 13-ին.

(Ռ. Ժող. 1931 թ. № 52, հոդ. 337)

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐԴՅԻՆԳԼԱՆԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՑԵՎ ԳԵՐԱԿԱՏԱՐՄԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱՑԵՎ ԳՅՈՒՏԵՐԻ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄՆԵՐԻ ՑԵՎ ՌԱՑԻՈՆԱԼԻԶԱՏՈՐԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ՖՈՆԴԵՐԻ*)

1. Ընդհանուր սկզբունքներ

1. Այս կանոնադրությամբ կազմվում են՝

ա) ֆոնդերը՝ սոցմրցման և հարվածայնության հիման վրա ձեռք բերված նվաճումները պարգևատրելու համար.

բ) ֆոնդերը՝ դյուտարարության ու ռացիոնալացմանը նպաստելու համար:

2. Սոցմրցման և հարվածայնության հիման վրա ձեռք բերված նվաճումների պարգևատրման ֆոնդերից պարգև տրվում է պլանային առաջադրությունները (քանակական և վորակական) գերակատարելու, պլանի կատարման ցայտուն նվաճումների, ավարիան, պայթյունները մեքենաների փչացումը և —այլն նախազգուշացնելու ժամանակ ցուցաբերած ինքնուրացության և հերոսության համար, նաև աշխատանքի բարելավման ու եժանացման և կառավարչական ապարատի աշխատանքի բարելավմանն ու եժանացմանը, ինչպես նաև նրա կառուցվածքի պարզեցմանը նպաստող ընդունված առաջարկների համար:

Գիտական—հետազոտական հիմնարկություններում, բարձրագույն ուսումնական հաստատություններում և տեխնիկումներում այդ ֆոնդից պարգև տրվում է նույնպես ասպիրանտներին և ուսանողներին որինակելի ուսումնական աշխատանքի և հատուկ նվաճումների համար:

---

*) ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1931 թ. սեպտեմբերի 13-ի վորոշումը տարածված է նաև ստանդարտիզացիայի ասպարիզում ձեռք բերված նվաճումների վրա (Ող. Ժող. 1931 թիվ, № 60, հոդ. 388):

3. Սոցմրցման և հարվածայնության հիման վրա ձեռք բերված նվաճումների պարգևատրման ֆոնդից պարգև տրվում է բանվորներին, ճարտարագիտական-տեխնիկական և վարչատնտեսական կազմին պատկանող անձանց և այլ ծառայողների, ինչպես նաև բրիգադներին, հերթափոխերին, ցեխերին, բաժիններին և այլն:

4. Պարգևատրությունն ֆոնդի հաշվին կատարվում է ինչպես դրամով, նույնպես և բնաբերքով, ԽՍՀՄ և արտասահմանյան գործուղումներով, լրացուցիչ արձակուրդներով, սանատորիաներում և հանգստի տներում տեղեր հատկացնելով:

5. Պարգևատրվելիք անձանց թեկնածությունները առաջադրվում են վարչության և ֆարզգործտեղկոմի կամ արտադրական խորհրդակցության կողմից և վերջնականապես հաստատում բանվորների և ծառայողների ժողովներում քննության առնելուց հետո:

Ձեռնարկությունների և հիմնարկությունների ղեկավարները տվյալ ձեռնարկության կամ հիմնարկության ֆոնդից չեն պարգևատրվում: Նրանք կարող են պարգևատրվել վերադաս որգաններին կից ֆոնդերից:

6. Գյուտարարության ու ռացիոնալացմանն աջակցելու ֆոնդերը ծախսում են.—

ա) իրագործելու նպատակով ընդունված գյուտեր, տեխնիկական կատարելագործումներ և ռացիոնալիզատորական առաջարկներ վարձատրելու համար.

բ) գյուտերի, տեխնիկական կատարելագործումների և ռացիոնալիզատորական առաջարկների մրցանակաբաշխություններ կազմակերպելու և մրցանակային պարգևներ տալու համար.

գ) գյուտերի տեխնիկական—տնտեսական մշակման, մոդելներ, նմուշներ պատրաստելու և գյուտեր, կատարելագործումներ ու ռացիոնալիզատորական առաջարկներ փորձարկելու, նույն թվում փորձնական բազաների պահպանելու համար:

Բացի այդ, ձեռնարկություններում գյուտարարության ու ռացիոնալացմանն աջակցելու ֆոնդերից,

10 %–ը մասհանվում և դյուտարարների ընկերության դեմին:

7. Դյուտարարության ու ռացիոնալացմանն աջակցելու ֆոնդերը ծախսում են.—

ա) ձեռնարկություններում՝ վարչությունը.

բ) միավորումներում, տրեստներում, ժողովրդական կոմիսարիատներում և նրանց տեղական որգաններում՝ դյուտարարության համապատասխան որգանները:

Եթե դյուտարարության և ռացիոնալացման համար գոյություն ունեն առանձին որգաններ, ապա ժողովրդական կոմիսարիատի կամ նրա տեղական որգանի կարգադրությամբ ֆոնդերի ծախսումը կարելի է հանձնարարել դյուտարարության և ռացիոնալացման որգաններին՝ ըստ պատկանելության:

դի մասին:

Վարձատրության չափն ու վճարելու կարգը (6–րդ հոդ. «ա» կետ.) վորոշվում է ԱՊԽ–ին կից դյուտարարության Կոմիտեի հրահանգներով:

8. Վարձատրություն ստացողի համաձայնությամբ վարձատրության փոխարեն ի հաշիվ ֆոնդի կարելի է տեղ հատկացնել սանատորիայում կամ հանգստյան տանը, ինչպես նաև լրացուցիչ արձակուրդ և դեֆիցիտային ապրանքներ տալ:

2. Ֆոնդեր ձեռնարկություններում

9. Պետական արդյունաբերության, տրանսպորտի, առևտրի, կապի, կոմունալ տնտեսության բոլոր հիմնարկություններում, խորհտնտեսություններում, մեքենատրակտորային կայաններում, շինարարություններում, ինչպես նաև սպառողական և արհեստագործական կոոպերացիայի ձեռնարկություններում կազմվում են պարգևատրման երկու ինքնուրույն ֆոնդեր, այն է՝

ա) ստեղծման և հարմարանության հիման վրա արդիականացնելու և գերակատարելու ասպարիզում ձեռք բերված նվաճումների պարգևատրման ֆոնդ և

բ) գյուտարարության ու ռացիոնալացմանն աջակցելու ֆոնդ։

Հաղորդակցության ճանապարհների ժողովրդական Կոմիսարիատը, Ջրային Տրանսպորտի ժողովրդական Կոմիսարիատը, Ցուդորտրանսը, Քաղաքացիական Ոդային Նավատորմի Համամիութենական Միավորումը, Փոստերի և Հեռագրատների ժողովրդական Կոմիսարիատը, ԽՍՀՄ Մատակարարման ժողովրդական Կոմիսարիատը, Ցենտրոսայուզը և Վսեկոպրոմսավետը, ՀԱՄԿԽ-ի համաձայնությամբ, վորոշում են թե տրանսպորտի, կապի, ոդային նավատորմի, պետական առևտրի, սպառողական և արհեստագործական կոոպերացիայի, վոր մարմիններին կից պետք է կազմվեն արդյունաբերության ձեռնարկություններում գոյություն ունեցող ֆոնդերին համապատասխանող ֆոնդեր։

10. Արդֆինպլանի կատարման և դերակատարման ասպարիզում ձեռք բերված նվաճումների պարգևատրման ֆոնդեր կազմում են ձեռնարկության համար սահմանված աշխատավարձի տարեկան գումարի $^1/_2$ տոկոսի չափով։

Ցուրաքանչյուր տարվա սկզբում այդ չափով ֆոնդ կազմվում և տնտեսական տարվա ընթացքում ծածկվում է ի հաշիվ այն խնայողության, վորն ստացվում է սոցմրցման և պլանի դերակատարման հետևանքով։

Եթե տարվա վերջում այդ ֆոնդը ծախսված է, իսկ ձեռնարկությունը ֆոնդի գումարը ծածկելով, խնայողություն է ունենում, ապա այդ մնացորդի 10 տոկոսը լրացուցիչ կերպով հատկացվում է արդֆինպլանի դերակատարմանը նպաստող աշխատողների պարգևատրման ֆոնդին։

11. Պարգևատրման չափն ու ձևը վորոշում և վարչությունը։ Պարգևատրումը վորպես ընդհանուր կանոն կատարվում է յեռամսյակներով։

12. Գյուտարարության ու ռացիոնալացմանն աջակցելու ֆոնդ տվյալ ձեռնարկության մեջ կազմվում է յուրաքանչյուր գյուտի, տեխնիկական կատարելագործումի և ռացիոնալիզատորական առաջարկի կիրառման

առաջին տարում ստացված խնայողության 50 տոկոսի չափով:

Նոր բացվող ձեռնարկություններում այդ ֆոնդը կազմվում է տվյալ ձեռնարկության համար սահմանված տարեկան աշխատավարձի գումարի 1/4 տոկոսի չափով և այնուհետև լրացվում է ի հաշիվ գյուտերի, կատարելագործումների և ռացիոնալիզատորական առաջարկների կիրառումից ստացված խնայողության հաշվին:

13. Եթե ֆոնդը ծախսված է և միաժամանակ կան այնպիսի գյուտեր, տեխնիկական կատարելագործումներ և ռացիոնալիզատորական առաջարկներ, որոնք ծախս են պահանջում ֆոնդի հաշվին, ապա այդ ծախսերը թույլատրվում է կատարել ի հաշիվ շրջանառության միջոցների, հետագայում հատուցելով ծախսված գումարները ֆոնդի ոգտին կատարվող հետագա մուծումներից:

Եթե ֆոնդը տարվա վերջում չի ծախսված, ապա մնացորդը փոխանցվում է հաջորդ տարվան:

14. Ֆոնդը ծախսում է ձեռնարկության վարչությունը: Ֆոնդի հաշվին վարձատրությունը տրվում է գյուտերի և տեխնիկական կատարելագործումների վերաբերյալ կանոնադրության 87—90 հոդվածների և ՍՊԽ-ին կից գյուտարարության կոմիտեի հրահանգի համաձայն:

3. Ֆոնդեր միավորումներում ու տրեստներում

15. Միավորումների մեջ չմտնող միավորումներում և տրեստներում կազմվում են հետևյալ ֆոնդերը.—

ա) գյուտարարությանն ու ռացիոնալացմանն ոժանդակելու ֆոնդ.

բ) ձեռնարկությունների ղեկավար անձնակազմը պարգևատրելու ֆոնդ:

16. Միավորումների մեջ չմտնող միավորումներում և տրեստներում գյուտարարությանն ու ռացիոնալացմանն ոժանդակելու ֆոնդերը կազմվում են.—

ա) ի հաշիվ հատուկ հատկացումների, որոնք մտցվում են միավորումների և տրեստների արդիֆինպլանների մեջ.

բ) ի հաշիվ տվյալ միավորման կամ տրեստի կազմի մեջ մտնող ձեռնարկություններում դյուտարարության ու ռացիոնալացմանն ուղղակելու Ֆոնդերից կատարվող 10 տոկոսային մասհանումների:

Հաղորդակցության ճանապարհների ժողովրդական կոմիսարիատը, Ցուղորտրանսը, Փոստերի և Հեռագրատների ժողովրդական կոմիսարիատը, Ցենտրոսայուզը և Վսեկոոպրոմսայուզը, ՀԱՄԿԽ-ի համաձայնությամբ վորոշում են թե վոխադրության և կապի, սպառողական և արհեստագործական կոոպերացիայի վոր մարմիններում պետք է կազմվեն արդյունաբերության միավորումներին և տրեստներին կից Ֆոնդերին համապատասխանող Ֆոնդեր:

17. Համապատասխան դերատեսչության վորոշմամբ դյուտարարությանն ու ռացիոնալացմանն ուղղակելու Ֆոնդեր կարող են կազմվել նաև միավորումների մեջ մտնող տրեստներում: Այդ դեպքում դերատեսչությունը համապատասխան արհեստակցական միության համաձայնությամբ, սահմանում է 16 հոդ. նշված գումարների բաշխումը միավորումների և արնշված գումարների բաշխումը միավորումների և տրեստների միջև:

18. Ձեռնարկությունների ղեկավար անձնակազմի պարգևատրման Ֆոնդեր կազմվում են տվյալ միավորման կամ տրեստի կազմի մեջ մտնող ձեռնարկություններում արդիֆինպլանը կատարելու և դերակատարելու սոցարիզում ձեռք բերված նվաճումները պարգևատրելու Ֆոնդերի վեց տոկոսային մասհանումներից:

Այդ Ֆոնդից ձեռնարկությունների դիրեկտորներին և նրանց ոգնականներին մասհանումներ տալիս է միավորման կամ տրեստի վարչությունը:

Նույն այդ Ֆոնդից նույն կարգով պարգևատրվում է միավորման կամ տրեստի տեսչության տակ գտնվող

դիտա–հետազոտական և սոցիալ–կուլտուրական հիմնարկությունների գեկավար անձնակազմը:

4. Ֆոնդեր տնտեսական գերատեսչություններում, կոոպերատիվ կենտրոններում և նրանց տեղական որգաններում

19. ԽՍՀՄ և դաշնակից հանրապետությունների այն գերատեսչություններում, վորոնք իրենց տեսչության տակ ունեն 9–րդ հոդ. մատնանշված ձեռնարկություններ և նրանց տեղական որգաններում (բացի շրջանային որգաններից) կազմվում են.—

ա) ձեռնարկությունների պարգևատրման ֆոնդեր.

բ) դյուտարարության ու ռացիոնալացմանն ոժանդակելու ֆոնդեր:

Նույնպիսի ֆոնդեր կազմվում են Ցենտրոսայուզում և Վսեկոոպրոմսավետում և սպառողական ու արհեստագործական կոոպերացիայի հանրապետական, յերկրային և մարզային միություններում:

Ծանոթություն.— Առանձին դեպքերում գերատեսչության և ՀՍՄԿՄ–ի կամ արհեստակցական միությունների հանրապետական խորհրդի համաձայնությամբ՝ ըստ պատկանելության արդֆինպլանը գերակատարելու համար ձեռնարկություններին պարգևատրելու ֆոնդեր կարող են կազմվել միավորումներում:

20. Արդֆինպլանը կատարելու և գերակատարելու համար ձեռնարկություններին պարգևատրելու ֆոնդեր կազմվում են ժողովրդական կոմիսարիատի կամ նրա տեղական որգանի տեսչության տակ գտնվող ձեռնարկությունների բնակարանային և կուլտուր–կենցաղային շինարարության հատկացվող միջոցների 10 տոկոսային մասհանումների հաշվին:

21. Լավագույն ձեռնարկություններին արդֆինպլանը գերակատարելու ինչպես նաև արդֆինպլանի քանակական և վորակական առաջադրությունների կատարման նշանակալից նվաճումների համար պարգև

տրվում է ժողովրդական կոմիսարիատի կամ նրա տեղական որգանի վորոշմամբ՝ ընդունված ՀՍՄԿԿ-ի արհեստակցական միությունների հանրապետական կամ տեղական խորհրդի կամ համապատասխան պրոֆմիության հետ միասին, ըստ պատկանելության:

Ձեռնարկությունները պարգևատրվում են տվյալ ձեռնարկության բնակարանային և կուլտուր-կենցաղային շինարարության համար կատարվող լրացուցիչ հատկացումների միջոցով:

Ծանոթություն.— Եթե ձեռնարկությունների պարգևատրման ֆոնդերը կազմվում են միավորումներում (19 հոդ. ծանոթություն), ապա դրանք կազմելու աղբյուր ծառայում են այն միջոցների ընդհանուր գումարի 10 տոկոսային մասհանումները, վորոնք ծախսվելու յեն միավորման կազմի մեջ մտնող ձեռնարկությունների բնակարանային և կուլտուր-կենցաղային շինարարության համար: Ձեռնարկությունները պարգևատրվում են միավորման վարչության վորոշմամբ, վորն ընդունվում է համապատասխան արհեստակցական միության հետ միասին:

22. Գյուտարարության ու ռացիոնալացմանն ոժանդակելու ֆոնդեր գերատեսչություններում և նրանց տեղական որգաններում կազմվում են այն դեպքերում, յերբ գերատեսչությունը նպատակահարմար է համարում այդպիսի ֆոնդեր կազմելը՝ միավորումներում և տրեստներում յեղած ֆոնդերի կողքին:

23. Գերատեսչություններում և նրանց տեղական որգաններում ֆոնդեր կազմվում են ի հաշիվ նախահաշիվների հատուկ հատկացումներից կատարվող մասհանումների և տվյալ որգանի տեսչության տակ գտնվող միավորումների ու տրեստների գյուտարարության ու ռացիանալացմանն ոժանդակելու ֆոնդերից կատարվող 10 տոկոսային մասհանումների:

24. Ֆոնդեր ձեռնարկություններում, միավորումներում և տրեստներում, ինչպես նաև գերատեսչություններում և նրանց տեղական որգաններում կազ-

մրվում են անկախ այն գումարներից, որոնք բաց են թողնվում աշխատավարձի ֆոնդից զանազան տեսակի խրախուսական վարձատրությունների համար:

5. Ֆոնդեր սոցիալ-կուլտուրական և գիտա-հետազոտական հիմնարկություններում

25. Լուսավորության, առողջապահության ժողովրդական կոմիսարիատը և այլ կենտրոնական ու տեղական որդաններ (բացի շրջանային որդաններից), որոնք ունեն գիտա-հետազոտական և սոցիալ-կուլտուրական հիմնարկություններ (կրթական հաստատություններ, հիվանդանոցներ և այլն)— այդ հիմնարկությունների աշխատողներին պարգևատրելու համար կազմում են հետևյալ յերկու ֆոնդերը.—

ա) սոցիալիստական մրցման և հարվածայնության հիման վրա ձեռք բերված նվաճումները պարգևատրելու ֆոնդ.

բ) դյուտարարության ու ռացիոնալացմանն ոժանդակելու ֆոնդ:

Յերկու ֆոնդերի փոխարեն կարելի յե կազմել մեկ ֆոնդ, որից պարգևներ տրվում են ինչպես դյուտի, տեխնիկական կատարելագործումների և ռացիոնալիզատորական առաջարկների համար, նույնպես և որինակելի աշխատանքի ու սոցիալիստական մրցման և հարվածայնության հիման վրա ձեռք բերված բացառիկ նվաճումների համար:

26. Այն դեպքերում, յերբ սոցիալ-կուլտուրական և գիտա-հետազոտական հիմնարկությունները գտնվում են տնտեսավարական սկզբունքներով գործող միավորումների, տրեստների ու այլ որդաններ տեսչության տակ, սոցիալիստական մրցման և հարվածայնության հիման վրա ձեռք բերված նվաճումները պարգևատրելու ֆոնդեր կազմվում են նույն տնտեսավարական որդաններին կից:

Սոցիալ-կուլտուրական և գիտա-հետազոտական հիմնարկությունների աշխատողների արած դյուտերի և տեխնիկական կատարելագործումների վարձատրման և

գյուտարարության ոժանդակելու ծախսերը կատարվում են այն ընդհանուր ֆոնդից, որը գոյություն ունի տնտեսավարական որդանին կից:

27. Սոցիալիստական մրցման և հարվածայնության հիման վրա ձեռք բերված նվաճումները պարզևատրելու ֆոնդեր կարող են կազմվել նաև սոցիալ-կուլտուրական և գիտա-հետազոտական հիմնարկություններում: Թե այդ հիմնարկություններից, որոնց կից պետք է կազմվեն պարզևատրման ինքնուրույն ֆոնդեր պատճառ արհեստակցական կազմակերպության հետ միասին որոշում է այն որդանը, որին այդ հիմնարկությունները յենթակա յեն:

28. Սոցիալիստական մրցման և հարվածայնության հիման վրա ձեռք բերված նվաճումները պարզևատրելու ֆոնդեր գերատեսչություններում և նրանց տեղական որդաններում, իսկ պատչաճ դեպքերում նաև գիտա-հետազոտական և սոցիալ-կուլտուրական հիմնարկություններում (25 և 27 հոդ. հոդ.) կազմվում են հատուկ նախահաշվային հատկացումների հաշվին: Տրնտեսավարական որդաններում այդ ֆոնդերը կազմվում են ի հաշիվ արդֆինպլանի մեջ մտցվող հատկացումների: Պարզևների չափն ու տեսակը որոշում է վարչությունը՝ արհեստակցական կազմակերպության հետ միասին:

29. Գյուտարարության ու ռացիոնալացմանն ոժանդակելու ֆոնդեր կազմվում են հատուկ հատկացումների հաշվին համապատասխան կենտրոնական և տեղական որդանների նախահաշիվներով:

Բացի դրանից, այդ ֆոնդերը լրացվում են տվյալ որդանին յենթակա հիմնարկություններում ռացիոնալիզատորական առաջարկության կիրառման առաջին տարվա ընթացքում նախատեսված խնայողության գումարից 50 տոկոս մասհանելու միջոցով:

Կենտրոնական և տեղական այն որդաններում, որտեղ կազմվում են 22 հոդ. նախատեսված ֆոնդերը սոցիալ-կուլտուրական և գիտա-հետազոտական հիմնարկությունների աշխատողները պարգևատրվում են այդ

նույն ֆոնդերից, որոնց ոգտին մուծվում են այս հոդվածում նշված մասհանումները:

6. Ֆոնդեր կառավարչական ապարատներում և վարկային հիմնարկություններում

30. Կառավարչական բնույթ ունեցող պետական հիմնարկություններում (նույն թվում և միավորումների և տրեստների վարչություններում) և վարկային հիմնարկություններում կազմվում է պարգևատրման ֆոնդ՝ սոցմրցման ու հարվածայնության հիման վրա այդ հիմնարկությունների աշխատողների ձեռք բերած նվաճումները և հիմնարկության աշխատանքի բարելավելու ու ռացիոնալիզատորական առաջարկներ պարգևատրելու համար:

Պարգևատրման ֆոնդ կազմվում է համապատասխան հիմնարկության նախահաշվով նախատեսված հատուկ հատկացումներից տվյալ հիմնարկության համար սահմանված աշխատավարձի տարեկան ֆոնդի $^1/_4$ տոկոսի չափով:

Ֆոնդն այդ չափով կազմվում է տարվա սկզբում: Բացի դրանից, նույն ֆոնդն է մուծվում այն խնայողության 50 տոկոսը, որը ստացվում է սոցմրցման, հարվածայնության և ռացիոնալիզատորական միջոցառումներ իրականացնելու հետևանքով:

31. Կառավարչական բնույթ ունեցող հիմնարկություններում վերադաս մարմնին կից ֆոնդից կարող են պարգևատրվել ստորադաս մարմինների ամբողջ կոլեկտիվը կամ առանձին աշխատողներ: Այս նպատակով անհրաժեշտության դեպքում ֆոնդը կարող է լրացվել նախահաշվի այլ ստորաբաժանումներից վարկեր փոխանցելու միջոցով:

32. Պարգևատրման չափն ու ձևը որոշում է վարչությունը տեղկոմի հետ միասին:

33. ԽՍՀՄ Ցենտրոսայուզը և Վսեկոպրոմսավետը՝ ՀԱՄԿԽ-ի համաձայնությամբ որոշում են, թե սպառողական ու արհեստագործական կոոպերացիայի որ կազմակերպություններին կից ֆոնդեր պետք է կազմվեն

320—7

այդ հիմնարկությունների կառավարչական ապարատի աշխատողներին պարգևատրելու համար:

7. Պարգևատրման ընդհանուր ֆոնդեր շրջանային գործադիր կոմիտեներին կից

34. Շրջանային գործադիր կոմիտեներին կից շրջանային և գյուղական աշխատողներին պարգևատրելու համար շրջանային բյուջեյի հատուկ հատկացումների հաշվին, կազմվում է պարգևատրման միասնական ֆոնդ այն կարգով, որը սահմանվում է դաշնակից հանրապետությունների որենսդրությամբ:

Այդ ֆոնդը ծախսվում է շրջանային գործադիր կոմիտեյի վորոշումներով՝ շրջանային և գյուղական նշանակություն ունեցող հիմնարկություններում և ձեռնարկություններում աշխատողների որինակելի աշխատանքն, ինչպես նաև սոցմրցման ու հարվածայնության հիման վրա ձեռք բերված նվաճումները և գյուտարարության, տեխնիկական կատարելագործման ու ռացիոնալիզատորական առաջարկներ պարգևատրելու համար:

Այդ նույն ֆոնդից պարգևատրվում են նաև շրջանային ձեռնարկություններն ու հիմնարկություններն ամբողջությամբ:

ԽՍՀՄ ԿԳԿ նախագահ՝ Մ. ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀՄ ԺԿԽ նախագահ՝ Վ. ՄՈԼՈՏՈՎ (ՍԿՐՅԱԲԻՆ)

ԽՍՀՄ ԿԳԿ քարտուղար՝ Ա. ՑԵՆՈՒԿԻՋԵ

(Հրապարակված է ԽՍՀՄ Որ. Ժող. 1934 թվի № 52 հոդ. 338):

ՎՈՐՈՇՈՒՄԸ № 189

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՑԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ

(1931 թվի մայիսի 12)

ԳՅՈՒՏԵՐԻ ՊԱՏԵՆՏՆԵՐԻ ԳՈՐԾԵՐԻՑ ԳԱՆՁՎՈՂ ՏՈՒՐՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Գյուտերի և կատարելագործումների 1931 թ. հունվարի 9-ի Կանոնադրության (ԽՍՀՄ Որենքների ժողովածու 1931 թ. № 21, հոդ. 18) 67-րդ հոդվածի հիման վրա Աշխատանքի և Պաշտպանության Խորհուրդը ՎՈՐՈՇՈՒՄ Է.—

1. Գյուտի պատենտ ստանալու վերաբերյալ տրված յուրաքանչյուր դիմումից գանձվում է միանվագ հայտարքային տուրք 60 ռ. չափով:

2. Սկզբնական հայտն մի քանի առանձին հայտերի բաժանելու դեպքում, յուրաքանչյուրից գանձվում է հայտարքային տուրք: Ըստ վորում, սկզբնական հայտի համար վճարված տուրքը պետք է հաշվել հայտարքային տուրքի ընդհանուր գումարի մեջ:

3. Մուծված հայտարքային տուրքը չի վերադարձվում թե պատենտ տալը մերժելիս և թե մնացած բոլոր դեպքերում, բացի այն դեպքից, յերբ գյուտը գաղտնի յե ճանաչված (հոդ. 10):

4. ԱՊԽ-ին կից Գյուտարարության Կոմիտեյի Նորության Բյուրոյի վորոշումների դեմ բողոքներ քննող Խորհրդին տրված բողոքներից տուրք է գանձվում 30 ռուբլու չափով:

Տուրքի վճարման յենթակա չեն այն բողոքները, վորոնք տրվում են պատենտ տալու դեմ:

5. Գյուտի պատենտ տալու վերաբերյալ նորության

Բյուրոյի կայացրած վորոշումը հրապարակելու որից սկսած պատենտատերերից գանձվում է տարեկան պատենտատուրք հետևյալ չափով— առաջին, յերկրորդ և յերրորդ տարում տարեկան 50 ռ., չորրորդից մինչև վեցերորդ տարում ներառյալ 25-ական ռուբլով ավելի քան նախորդ տարում, յոթերորդ տարվանից սկսած յուրաքանչյուր տարում 50-ական ռուբլով ավելի, քան նախորդ տարում:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Կախյալ պատենտներից տուրք գանձվում է նույն կարգով, ինչ վոր ինքնուրույն պատենտներից:

6. Պատենտատուրքը վճարվում է յուրաքանչյուր հարկային տարվա առաջին 2 ամսվա ընթացքում:

7. Պատենտատուրքը ժամանակին չմուծելու դեպքում պատենտատերերից գանձվում է տուգանք այն չափով, վորը սահմանված է հարկերի ապառքների համար. պատենտատուրքի վճարումը 6 ամսից ավելի ուշացնելու դեպքում պատենտի ներգործությունը դադարեցվում է:

8. Գյուտի պատենտի իրավունքն ուրիշին հանձնելու և լիցենզիաներ տալու մասին գյուտերի մատյանում յուրաքանչյուր անգամ նշելու համար տուրք է գանձվում հետևյալ չափով.—

ա) պատենտի իրավունքներն ուրիշին հանձնելու վերաբերյալ՝ 60 ռուբլի.

բ) ուրիշին տրված լիցենզիայի վերաբերյալ 30 ռ.:

9. Հանրայնացված սեկտորի ձեռնարկություններից և կազմակերպություններից տուրք չի գանձվում: Այն պատենտների նկատմամբ, վորոնք հանձնվում են հանրայնացված սեկտորի ձեռնարկություններին և կազմակերպություններին, պատենտատուրքի գանձումը դադարեցվում է այն տարվանից, յերբ տեղի յե ունեցել հանձնումը, ըստ վորում, մուծված տուրքը չի վերադարձվում:

10. Գաղտնի ճանաչված գյուտերի գործերով տուրք չի գանձվում և մուծված տուրքը վերադարձվում է: Եթե գյուտի գաղտնի լինելը վերացվում է, ապա հայ-

տարքային տուրք ու պատենտատուրք դանձվում է ըսկըսած այն որվանից, յերբ գյուտի զաղտնի լինելը վերացված է: Պատենտատուրքի չափի տեսակետից այդ տարին պատենտն ուժի մեջ մտցնելու առաջին տարին է համարվում:

11. ԱՊԽ-ին կից գյուտարարության Կոմիտեն առանձին դեպքերում կարող է հատուկ վորոշմամբ աշխատավոր գյուտարարներին և նրանց ժառանգներին ազատել հայտարքային տուրքից ու պատենտատուրքից, ինչպես նաև յերկարացնել պատենտատուրքի մուծման ժամկետները:

12. Արտասահմանում ապրող անձինք, այս վորոշման մեջ մատնանշված տուրքը մուծում են արտասահմանյան վալյուտայով:

13. Այն պատենտներից, վորոնք ստացվում են նախկին որենքների հիման վրա և հեղինակի վկայականներով չեն փոխարինված, տուրք պետք է դանձել այս վորոշման համաձայն:

14. Գյուտերի գործերով պետական միասնական տուրք չի դանձվում:

5. Այս վորոշումն ուժի մեջ է մտնում գյուտերի և տեխնիկական կատարելագործումների Կանոնադրության համար սահմանված ժամկետից այն է՝ 1931 թ. մայիսի 25-ից:

ԱՊԽ-ի նախագահի տեղակալ՝ Ն. ՌՈՒԶՈՒՏԱԿ

ԱՊԽ-ի քարտուղար՝ Ի. ՄԻՐՈՇՆԻԿՈՎ

ՎՈՐՈՇՈՒՄ № 257

ԽՍՀՄ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ (1931 թ. ապրիլի 4)

ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը ՎՈՐՈՇՈՒՄ Է.—

Առաջարկել ԽՍՀՄ Մատակարարման Ժողովրդական Կոմիսարիատին և ԽՍՀՄ Ցենտրոսայուզին միջոցներ ձեռք առնել, վորպեսզի այն աշխատավոր գյուղացիները, վորոնք ԽՍՀՄ Ժողովրդական տնտեսության համար պիտանի ճանաչված գյուղերի վերաբերյալ հիմնական վկայական են ստացել պարենով և արդյունաբերական ապրանքներով մատակարարվեն արդյունաբերական բանվորների հետ համահավասար հիմունքներով։

ԽՍՀՄ Ժողկոմխորհի նախագահ՝ ՄՈԼՈՏՈՎ (ՍԿՐՅԱԲԻՆ)

ԽՍՀՄ Ժողկոմխորհի գործերի կառավարիչ՝ Պ. ԿԵՐԺԵՆՑԵՎ

ՎՈՐՈՇՈՒՄ

ԱՍՖԽՀ ԿԵՆՏՐՈՐԴԿՈՄԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ

ԱՍՖԽՀ Քաղխորհուրդների և ձեռնարկությունների գյուտարարական և ռացիոնալիզատորական աշխատանքի մասին

Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեի Նախագահությունն արձանագրում է, որ հարվածային բանվորների, ճարտարագիտական-տեխնիկական անձնակազմի և կոլտնտեսականների՝ ինչպես արդյունաբերության և տրանսպորտի, նույնպես և գյուղական տնտեսության արտադրության տեխնիկայի նվաճման պայքարում ցուցաբերած ստեղծագործ ինքնագործունեության հետևանքով զգալիորեն զարգացել է գյուտարարական և ռացիոնալիզատորական առաջարկների գործը ԱՍՖԽՀ գործարաններում, խորհտնտեսություններում, ՄՏԿ-ներում և կոլտնտեսություններում, մի բան—որ խոշորագույն հնարավորություններ է ստեղծում արդյունաբերության և կոլտնտեսային, խորհտնտեսային շինարարության տեխնիկական վերակառուցման համար և խոշոր տնտեսում է տալիս սոցիալիստական շինարարությանը:

Սակայն, չնայած դրան, գյուտարարական մասսայական շարժմանը մինչև այժմ հարկ յեղած չափով չեն ոժանդակում մի շարք տնտեսական կազմակերպություններ: Տեղի յե ունեցել անթույլատրելի քաշքշուկ («Զայ Գրուզիա», Վրաստանի Հողժողկոմատ, Ազնեֆտ, Սինթետիկ կաուչուկի գործարան), գյուտարարության ֆոնդերի հանցավոր շռայլման և վատնումների փաստեր գյուտարարների ընկերության խորհուրդներում (Վրաս. պրոֆմիութ. խորհուրդ, ԱԱՄԽ):

Դատական–քննչական որդանները տեղերում ուշադրություն չեն դարձնում կուսակցության և կառավարության գյուտարարության հարցերի վերաբերյալ ունեցած դիրեկտիվները խախտող անձանց պատասխանատվության յենթարկելու գործին։

Քաղխորհուրդներն ու շրջգործկոմները մինչև այժմ կազմ–մասսայական աշխատանք չեն ծավալել գյուտարարության և ռացիոնալիզատորական առաջարկների շուրջը։

Ցնցելով վերոհիշյալից Անդրկովկասյան Գործադիր Կոմիտեյի Նախագահությունը ՎՈՐՈՇՈՒՄ Է.—

1. Առաջարկել ԱՍՖԽՀ մեջ մտնող հանրապետությունների կենտգործկոմների նախագահություններին.—

ա) Պարտավորեցնել ժողկոմատներին, քաղխորհուրդներին, տնտեսական և հանրապետական այլ կազմակերպություններին յերկու դեկադի ընթացքում նշանակել իրենց բաժիններում, սեկտորներում և ցեխերում գյուտերի ու ռացիոնալիզատորական առաջարկների պլանավորման, առաջչարժման և իրացման համար պատասխանատու անձեր։

բ) Հանձնարարել հանրապետությունների ժողկոմխորհներին նշել ամենից խոշոր ձեռնարկություններ, վերջիններին կից եքսպերիմենտալ արհեստանոցներ կազմակերպելու համար և 1935 թ. բյուջեյում նախատեսնել այդ արհեստանոցների պահպանման ծախսերը։

գ) Հանձնարարել քաղխորհուրդներին սիստեմատիկորեն զբաղվել ռացիոնալացմանն և գյուտարարությանն ոժանդակելու վերաբերյալ հարցերով, ստեղծելով դրա համար անհրաժեշտ պայմաններ և կիրառելով ռացիոնալացման առաջարկներին և գյուտարարությանը նվիրված միասնական խորհրդային որեր (տեխնիկական կոնսուլտացիաներ, ռացիոնալացման արդյունքների ստուգում և այլն)։

դ) Հանձնարարել դատական և դատախազական որդաններին շտապ կարգով հետաքննել և քննության առնել այն գործերը, որոնք կապված են ռացիոնալիզատո-

բոկան առաջարկների և գյուտերի առաջարկման և իրացման գործում ցուցաբերված բյուրոկրատիզմի և քաշքշուկի հետ:

2. Հանձնարարել ՎՍԽՀ կենտգործկոմի նախագահությանը պարտավորեցնելու ՎՍԽՀ դատախազությանը յերկու դեկադի ընթացքում ավարտել Ա.Ա.Մ.Խ-ին կից գյուտարարների Ընկերության Խորհրդի և Վրաստանի, Արմխորհրդի աշխատակիցների գործի քննությունը, ինչպես նաև քննել «Զայ Գրուզիա»-ում տեղի ունեցած գյուտարարական ֆոնդերի շռայլման վերաբերյալ գործը:

3. Հանձնարարել ԱՍՖԽՀ մեջ մտնող հանրապետությունների կենտգործկոմների նախագահություններին առաջարկելու ժողկոմխորհներին վերանայել ժողկոմխորհներին կից գյուտարարության կոմիտեների կազմը և թարմացնել նրանց աշխատանքը:

ԱՍՖԽՀ կենտգործկոմի նախագահ՝ Ֆ. ՄԱԽԱՐԱԶԵ
ԱՍՖԽՀ կենտգործկոմի քարտուղար՝ Ս ՏՈԴՐԻԱ

(Հրապարակված է «Զարյա Վաստոկա» թերթի 1934 թ. 15-ը սեպտեմբերի № 215-ում):

ՑԱՆԿ

1. Համկ(բ)Կ ԿԿ–ի 1930 թ. հոկտեմբերի 26–ի վորոշումը մասսայական գյուտարարության մասին 3
2. Գյուտերի և տեխնիկական կատարելագործումների վերաբերյալ կանոնադրությունն ուժի մեջ դնելու մասին 7
3. Կանոնադրություն գյուտերի և տեխնիկական կատարելագործումների մասին 12
4. Հրահանգ Աշխատանքի և Պաշտպանության Խորհրդին կից Գյուտարարության Կոմիտեի — գյուտերի, տեխնիկական և կազմակերպչական կատարելագործումների համար վարձատրություն տալու մասին 46
5. Հրահանգ Աշխատանքի և Պաշտպանության Խորհրդին կից Գյուտարարության Կոմիտեի — գյուտարարության պատենտները հեղինակի վկայականներով փոխարինելու մասին 56
6. Կանոնադրություն տեխնիկական և կազմակերպչական առաջարկների համար վարձատրություն տալու կարգի ու չափի վերաբերյալ վեճեր քննող կոնֆլիկտային հանձնաժողովների մասին 58
7. Վորոշում № 17—Աշխատանքի և Պաշտպանության Խորհրդին կից Գյուտարարության Կոմիտեի — կոնֆլիկտային հանձնաժողովների վերաբերյալ . . . 61
8. Կանոնադրություն — առանձնապես կարևոր գյուտեր և տեխնիկական կատարելագործումներ ընտրելու և հաշվի առնելու համար 67
9. Վորոշում № 3 ԱՊԽ–ին կից Գյուտ. Կոմիտեի—այն անձանց արտոնություններին մասին, վորոնք տեխնիկական և կազմակերպչական կատարելագործումներ են առաջարկել 71
10. Վորոշում № 7 ԱՊԽ–ին կից Գյուտ. Կոմիտեի—գյուտարարներին և տեխնիկական ու կազմակերպչական կատարելագործումների հեղինակներին լրացուցիչ արձակուրդ տալու մասին 72
11. Վորոշում № 8 ԱՊԽ–ին կից Գյուտ. Կոմիտեի — Ինչ

կարգով հեղինակները պետք է մասնակից արվեն իրենց գյուտերի և տեխնիկ. կատարելագործումների մշակման ու փորձարկման 75
12. Վորոշում № 4 ՍՊԽ-ին կից Գյուտ. Կոմիտեյի—Հեղինակի վկայականներ և գյուտերի պատենտներ տալու դեմ բողոքելու կարգի մասին 77
13. Վորոշում ԽՍՀՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի — Արդիֆիցիալանի կատարման և գերակատարման նվաճումների, ինչպես նաև գյուտերի, տեխնիկական կատարելագործումների և ռացիոնալիզատորական առաջարկների պարգևատրման ֆոնդերի վերաբերյալ կանոնադրություն ուժի մեջ մտցնելու մասին 84
14. Կանոնադրությունը (պարգևատրման ֆոնդերի) . . 87
15. Վորոշում № 189 Աշխատ. և Պաշտ. Խորհրդի — Գյուտերի պատենտների գործերից դանձվող տուրքերի մասին 99
16. Վորոշում № 257 ԽՍՀՄ Ժողկոմխորհի — Աշխատավոր գյուտարարներին մատակարարման գծով արդյունաբերական բանվորներին համահավասար հիմունքներով բավարարելու մասին 102
17. Վորոշում ԱՍՖԽՀ Կենտգործկոմի նախագահության—ԱՍՖԽՀ քաղխորհուրդների և ձեռնարկությունների գյուտարարական և ռացիոնալիզատորական աշխատանքի մասին 103

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220025033

ԳԻՆԸ 1 Ռ. 50 ԿՈՊ.

334.

А 25033

ОБ ИЗОБРЕТЕНИЯХ и ТЕХНИЧЕСКИХ УСОВЕРШЕНСТВОВАНИЯХ

(Постановления, инструкции и разъяснения)

Изд. Сов. изобр. при СПС Армении
Эривань 1935 г.